



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3998



Արևիկան
1861.

2010

R 2001


ՀՐԱՀԵՆՔ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ՀԵԿԱԾՈՅՑ

ՊԵՂԱՓԱՐ ԳԵՒԽՆՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ



Բ Մ Ա Ս Ք Ո Ր Ա

1861

281.6
Մ-94

ՀՔԱՀԵՆՔ ՔՐԻՍՏՈՆԵՈՎԵՆ

ՀԱԿՈՅՈՅ

ՀԱՅ

ՈՒՂՂԱՓՈՒ ԳԵԼԵՇՆՈՒԹԵԸՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՄՄԵՐԱՅ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ

ԿՐՈՆՈՒՄՈՅՅ ՎԱՐԺԱՊԵՏԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՀԵՄԵՐԱՆԻ

ԵԿՐՈՐԴԻ ՏԻՊ

Է ՄԱՍ-ՔՈՐ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՀԵՄԵՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՅՑ

1861

18832

ԳՐԱՎԱԳՅԱ
ՄԱՐԿԵՐԱԾՈՎԻԳ
ՅԱՏԱՐՀ

202

ՀՅՈՒՅՈՒՆԻՑ ՊԱՓԱՐԱ

ԸՆԴԵՐԱԿԻՑ

ՅԵՎԱՆԻ ՎԱՐԱՐԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԱՐԱ

ԵՐԵՎԱՆ ԱՐԱՐԱՏԻ

ՎԱՐԱՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԱՐԱ ՎԱՐԱՐԱ

ԲԱՐ ՎԱՐԱ



16400-53



Ընթերցեալ զմատենիկս ղայս ընդ վեր-
նագրովս ՀԲԱՀԱՆԳ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱ-
ԽԱՏՈՅ, և զբովանդակութիւն բանիցն որ
՚ի սմա՝ գտեալ ամենայնիւ հարազատ,
և համաձայն Առաքելաւանդ ուղղափառ
վարդապետութեանց Ա. Եկեղեցւոյ հայ-
աստանեայց, Հրամայեմք տպագրել ՚ի պէ-
տրս ազգային ուսումնարանաց։ Յորոյ ՚ի
հաստատութիւն՝ դրոշմեալ զՊատրիար-
քականն մեր զինիք՝ ստորագրեմք, ՚ի 27
Եպրիլ 1861 ամի Փրկչին, ՚ի Ա. Եջ-
միածին։

ՄԱՏԹԵՈՍ

Կ-Շ-Ն-Ա-Ղ-Ե-Լ-Ո- Ա-Շ-Ն-Ա-Յ-Ն- Հ-Ա-Յ-Ն- :

ԱԶԴ

Գիրքս այս՝ որ միանգամ տպուած էր՝ ի 1850թուականին, այժմ ևս երկրորդ անգամ՝ ի լոյս ելանէ ահա ՚ի տպագրական մամլոյ՝ վեհագոյն հրամանաւ Մեծ Խնամակալին Ա. եկեղեցւոյս այստանեայց՝ Տ.Տ.Մ.Ե.Ռ. Արքազնակատար Կաթողիկոսի, ՚ի վայելս ուսումնակարօտ մանկանց Եզրիս:

Այս երկրորդ տպագրութիւնս՝ թէպէտ և ըստ նիւթոցն բովանդակութեան նոյն է, առաջնոյն հետ, բայց չափաւորապէս ընդարձակուած է ևս այլևայլ՝ գիտելոյ արժանի՝ ծանօթութեամբ՝ առաջին մասին մէջ, և պատշաճաւոր վկայութեանց յաւելուածով՝ երկրորդ մասին մէջ, որպէս ունին տեսանել ընթերցողք:

Որովհետեւ այսպիսի ուսումնական գրեանք յօրինուում են յատկապէս ՚ի պէտս չափահասակ աշակերտաց՝ որք դաստութեամբ վարժուած են կամ վարժըւում են մեր կանոնաւոր Գրոց լեզուին մէջ, պարտ և պատշաճ էր և մեզ այժմ ևս նոյն լեզուով՝ ՚ի լոյս ընծայել զայս մեր գրական վաստակը, որպէս ՚ի լոյս ընծայած եմք առաջին տպագրութեամբ. սակայն հայելով

ոմանց իրաւացի թախանձանացը, և կամելով
միանգամայն՝ որչափ կարելի թուէր՝ հեշտընկալ
և դիւրիմաց առնել գո՞նէ հմուտ վարժապետ-
ների ձեռաց տակ հրահանգըւող մանկանց՝
դՔ-քիստոնէական հաւատոյ կարեորագոյն դի-
տելքները՝ ըստ ուղղափառ դաւանութեան
Առքիք Երկեղեցւոյ Հայաստանեայց՝ ջան և
աշխատութիւն յանձն առաք փոքր մի զԳ-րոց
լեզուի ձեւերը աշխարհիկ լեզուի ձեւերին փոխել,
բայց ոչ շատ խոտորուելով և ոչ ՚ի սպառ հե-
ռանալով յայն ընդհանուր պայմաններից՝ զորս
պահանջէ հարկաւ Հայկական ուղղախօսու-
թիւնն։ Եւ այս այնու պատճառաւ՝ որ (որ-
պէս յայտնի է դիտնոց) առանց ՚ի գործ ածե-
լց զԳ-րոց լեզուի բառերը, երբեմն և զձեւերը,
Կրօնական զգուշալի առարկայից և Սատուա-
ծաբանական նուրբ խնդրոց վերայ՝ լոկ մասնա-
կան (այս կամ այն գաւառի կամ քաղաքի) ան-
հարթ՝ անկանոն՝ և բազմօք պակասաւոր լեզ-
ուով բան գրելն, ոչ միայն անպատեհ է, այլ
և վտանգաւոր, և ոչ միայն վտանգաւոր, այլ
և անկարելի։


Մ. Մոեւեանց։

Ականանում է վեհապահութափ այցի և լուսվար»
«առ կը պարզ մատի առաջ և կ ընդ քրիստոնյոց դր
գիտութիւնն առաջ առ մատի առաջ այս այսուհետ պատրիարքութեան
ՄԱՍՆ ԱԹԱԶԻՒ
այսուհետ պատրիարքութեան այսուհետ պատրիարքութեան
«Տաւուսութիւն այսուհետ պատրիարքութեան»

ՀՐԱՀԵՆԳԻՑ Ի ԲԵՐԵՆ ՈԽՍԵՆԵԼԻՔ

պատրիարքութեան առաջ այսուհետ պատրիարքութեան այսուհետ պատրիարքութեան
առաջ այսուհետ պատրիարքութեան այսուհետ պատրիարքութեան այսուհետ պատրիարքութեան
առաջ այսուհետ պատրիարքութեան այսուհետ պատրիարքութեան այսուհետ պատրիարքութեան

ՀՐԱՀԵՆԳԻՑ Ի ԲԵՐԵՆ ՈԽՍԵՆԵԼԻՔ






«Պիտոյ է միշտ դաստիարակութիւն Աւետարանին,
որ հրահանգէ զմեզ՝ ի լաւութեան կարգս. զի յան-
ձանձեալ՝ ի շնորհաց Հոգւոյն սրբոյ՝ Ճշմարտութեամբ
աճեցուսցուք զվաստակս արդարութեան սուրբ սրտիւ
և ուղղափառ հաւատով յԱստուած»:

Գ. . Լ. . 'ի Յանձնիառ. Ֆառ. Է:

«Մեք զայս Ճշմարիտ հաւատս ունիմք՝ ի Սուրբ
Գրոց և Յօրինաց եկեղեցւոյ՝ առաջնորդ կենաց ճա-
նապարհի առ Աստուած»:

“Եսյն . յԱնձնի :





ՀՐԱՀԵԿ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԵՆ ՀԵՒԵՏՈՅ

ԸՆՏ

ՈՒՂՂԱՓԵՐ ԴԱԼԵՆՈՒԹԵԵՆ

ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՀԱՅՈՍԵՆԵԵՑՑ

Հ. Ո՞Վ է Քրիստոնէական հաւատոյ առաջին
հիմն և բուն հեղինակ:

Պ. Ե՞նոյն ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս¹:

Հ. Ե՞նչպէս աւանդեց նա զիւր վարդապետու-
թիւնը:

Պ. Կախ՝ ինքնին իւր բերանովս՝ բացայացտ
բանիւք ուսուցանելով՝ մինչ դեռ երկրի վե-

բայ էր², և ապա՝ իւր սուրբ և ընտրեալ
Եռաքելոց միջնորդութեամբն³։

Ա. Եռաքեալք ի՞նչպէս աւանդեցին։

Պ. Երբեմն կենդանի ձայնիւ (բերանավ) քարո-
ղելով, և երբեմն ևս գրով հրատարակելով⁴։

Ա. Օ ի՞նչ պահանջէ՝ ի մէնց Քրիստոնէա-
կան հաւատն։

Պ. Պահանջէ, որ մեք զԱստուած՝ զմեր ամե-
նակարող և ամենաբարի Երարիչը՝ պաշ-
տեմք կենդանի Հաւատով, հաստատուն Յո-
սով, և անկեղծ Սէրվ⁵։

ՅՈՒՆԴԱՇԱԽՈՒ

միջնարև լուսաւաշ մայխանուանց Գ Ձ Ա Ե Ա ։

։ յանձնի՛՛ մեռ և մայք ։

։ բառանց Դ Ա Ա Ա Ե Օ դժեն միշտ մաքան ։

։ բ ա ս ա ն ի ս ա ր ա ն յ ա լ ի դ ա յ ր ա մ բ ը լ ի ս ա ր ա ն յ ա լ ։

։ յ ա մ ա յ ե ։

ա յ ա ս ա ր ա յ ։ մ ի ս ա ն յ ա լ ։ դ ա յ ի մ ի ս ա ն յ ա լ ։ յ ա մ ա յ ։

։ մ ի ս ա ն յ ա լ ։ ա յ ր ։ յ ա մ ։ յ ա մ ։ յ ա մ ։

* մայնունալի ըստ Ա մէ վեճք .
ուղարկութիւն մայնունալի ըստ Ա մէ վեճք .

Հ Ե Ւ Ե Տ Ե Ք Ք . թ.

Հ աւատքն ի՞նչ է :

Պ. Ե հաւանութիւն մասց, որով ընդունիմք
հաստատաբար և գաւանեմք յայտնապէս
զայն ամենայն ծշմարտութիւնքը՝ որք վե-
րաբերին առ Աստուած և առ Աստուա-
ծայինս :

Լ. Ուստի պարտիմք առնուլ զբացայաց և
զլիակատար տեղեկութիւնքը այնպիսի ծը-
մարտութեանց վերայ :

Պ. Գերբնական Յայտնութեան երկու ստու-
գագոյն Ազրիւրներից, այսինքն՝ ի Ա.
Գրոց ⁷, և յԱստուածային անգիր Աւան-
դութեանց ⁸ :

Լ. Ո՞յք են Ա. Գերբքն :

Պ. Հին և Նոր Կտակարանքն են, որք ի միա-
սին առեալ կոչեն ի մեր լեզուի Աստուածա-
ցան Մասեան, կամ լոկ Աստուածացան * :

* Աստուածացունչն ի մեր մատենադրաց կոչի նաև Աստու-

Ա. Վանի են Կտակարանաց Կանոնական *
գրեանկըն:

Պ. Հին Կտակարանի Կանոնական գրեանկըն են
քառասուն և հինգ. “Եոր Կտակարանին՝
քսան և եօթն. Հնոյն և “Եորոյն՝ի միասին՝
եօթանասուն և երկու ***:

Ա. Յորպիսի Գրչաց գրուած են:

Պ. Ես սրբազն Գրչաց, այս է՝ յընտրեալ
պաշտօնէից Աստուծոյ Ճշմարտի. վասն զի
Հին Կտակարանն գրուած է՝ի սրբոց Մար-
դարէից, և “Եորն՝ ’ի սրբոց Առաքելոցն
Քրիստոսի ⁹:

Ա. Ամսն Է՞ր Աստուծածաշունկ կոչին այն գլ-
րեանկըն:

Հոյին Մարտիռն, Աստուծածաշունկ Գիրտ, Արքապան Գիր Կամ Տոռ .
բայց նոյն իսկ Աստուծածաշունկ մէջ՝ երբեմն կոչի Սուրբ Գիր (Հոռոմ. ա. 2: Է Տիմ. դ. 15), և երբեմն յիշի լոկ անուամբ Գիր (Թոռ. իս. 14: Յով. ժթ. 28. 36. 37: ա Պետ. դ. 6):
* Յաստուծածաբանից՝ Կանոնական կոչին այն գրեանկըն Հին
և “Եոր Կտակարանաց, որը ’ի Կանոնաց հեկեղեցւոյ որոշուած են
’ի շարս վաւերական և Աստուծածային գրոց, որպէս և անվաւեր՝
անհարազատ կամանընդունելի համարուածներն՝ կոչին Անիսոնի:
** Այս ամենայն գրեանց անուանքն՝ որոշակի նշանակուած

Պ. Ա ասն այն՝ զի նոցա մէջ պարունակուած
բանքն՝ ոչ ըստ կամաց մարդկան կամ մարդ-
կեղէն հանձարով գրուած են, այլ՝ Ըստ-
ուածային ազգմամբ և Հոգւոյն Արքոյ
թելադրութե (բառ բառ) կամ առաջ-
նորդութեամբ ¹⁰:

Հ. Ոյք են Ըստուածային անգիր Աւանդու-
թիւնքն:

Պ. Են այն ամենայն Ըստուածահրաման պա-
տուերքն, կամ հաւատոյ և բարուց վար-
դապետութիւնքն, որք կենդանի ձայնիւ
(Ժայն բանի բերանա) հաղորդուած են յետ-
նոց, ՚ի ՚ին օրէնս՝ միջնորդութեամբ սրբ-
բոց Նահապետոց և Մարգարէից, և ՚ի
Նոր օրէնս՝ միջնորդութեամբ սրբոց Ա-
ռաքելոցն Քրիստոսի և նոցա յաջորդացն,
և որք Ընդհանուր Եկեղեցւոյ մէջ ևս
անփոփոխապէս պահպանուած և մնացած
են ՚ի սկզբանէ անտի մինչև ցայժմ ¹¹*:

Են մեր ընդարձակ Քրիստոնէական Հրահանգի մէջ, որ տպուած
է ՚ի Մոսքուա յամի Տեառն 1850. Տե՛ս անդ յէլ 113—117:

* Յայսպիսի Ըստուածային—Առաքելական աւանդութեանց

Ա. Կայ արդեօք մի անվըէպ թարդման (Մէհնէ) և հաւատարիմ Պահապան Ա. Գրոց, մի անգամսյն և անսուտ Վկայ և Երաշխալոր անգիր Եւանդութեանց ստոյգ լինելուն:

Պ. Կայ, և է այն՝ Տիեզերական Եկեղեցին Քրիստոսի, որ երբէք չէ սխալուած, և երբէք չպիտի սխալուի, Եռաջնորդ՝ Ուսուցիչ կամ Խորհրդատու ինքեան ունելով միշտ զլօւրք ողին Ճշմարտութեան¹²:

Ա. Աւատքն Երբ համարի կենդանի:

Պ. Երբ որ սրբակրօն վարուց և առաքինական գործոց հետ կապակցած լինի. վասն զի որպէս մարմին առանց հոգւոյ, նոյնապէս և

առուած են և պահին մինչև ցայժմ Քրիստոսի լնդ հանուր եկեղեցւոյ մէջ, նախ՝ քանի մի վարդապետութիւնը, որպիսի են այսուրիկ. Հայր Աստուած անծին է. Աստուածածինն է միշտ կոյս. Եկեղեցւոյ Խորհուրդն եօթն են. Զնորածին մանկունքը պարտ է մկրտել. Պատարագն օդնէ և կենդանեաց և ննջեցելոց. և այլն: Երկրորդ՝ քանի մի ծէսք և սովորութիւնք, որպիսի են՝ Երկիրպագանել սրբոյ Խաչի. Յարդել զՍրբոց պատկերքը և զնունապէը (մարմեոյ կամ ոսկերաց մասունքը). Դէպ յԱրեւելս աղօթել. Շաբաթի տեղ զկիւրակէն պահել. Տօնել զՔրիստոսի ծնունդը, մկրտութիւնը, և այլն:

Հաւասք առանց բարեգործութեան , և-
առաջ էն ^{15:}

Դ . Քանի՞ են չաւատոյ գլխաւոր մասունքն ,
կամ քանի՞ գլխաւոր չաւատալիք կան :

Պ . Տամն * , որք են

Ա . Գոյութիւն Աստուծոյ :

Բ . Կատարելութիւնք Աստուածայինք :

Շ . Երրորդութիւն Աստուածային ան-
ձանց :

Դ . Երարշագործութիւն :

Ե . Կախախնամութիւն :

Ղ . Մարդեղութիւն Աստուածորդոյն :

Է . Եկեղեցի Քրիստոսի , և Խորհուրդք
նորին :

Ը . Ենորհաբաշխութիւն :

Թ . Յարութիւն մեռելոց :

Ժ . Ա երջին դատաստան :

* Զհաւատոյ մասունքը՝ որք կոչին և անդամներ կամ ասորի-
նաներ հաւատոյ , ոմանք բաժանեն 'ի 14 ոմանք 'ի 12՝ ըստ
թուոյ Առաքելոց , և ոմանք յ8 : Մեզ ևս յայտմ համառօտա-
գրութեան պատշաճ թուեցաւ բաժանել 'ի 10: Բովանդակու-
թիւնն հաւատալեաց՝ յամենեսին մի և նոյն է :

Ա. ԳՈՅՉՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒՇՈՅ

Հ. Ո՞րպէս կարեմք մեք հեշտեաւ իմանալ՝ թէ
գոյ (Է՞ս) Աստուած՝ արարիչ ամենայն ա-
րարածոց:

Պ. Հայելով յանսուտ վկայութիւնս Ա. Գը-
րոց, որք յայտնաբարբառ քարոզեն՝ թէ
Գոյ Աստուած. և թէ՝ Պարտ է հաւա-
տալ՝ ի նա ¹⁴:

Հ. Այլ եղանակաւ ևս կարեմք զԱստուծոյ
գոյութիւնը իմանալ և հաստատել:

Պ. Այս, կարեմք զայդ առնել նաև կրկին ե-
ղանակօք Ընական Աստուածզիտութեան,
այսինքն, նախ՝ մեր անձին կամ բանական
բնութեանս փորձով ¹⁵. և երկրորդ՝ այլ
արարածոց քննութեամբ ¹⁶:

Հ. Անձին փորձով ո՞րպէս կարեմք առնել:

Պ. Տեսանելով՝ որ մեք գոմք (Է՞ս), խոր-
հիմք (ՃառՃեճ) և կամիմք աղատօրէն,
կեամք, շարժիմք, գործեմք, և այն. և
գիտելով և՝ որ մեք անստեղծ կամ ինք-
նաստեղծ չեմք, և ոչ անսկիզբն և անվախ-

ձան, ինքնին կարող եմք ուղիղ դատու-
զութեամբ մակարերել՝ թէ «Գոյ» ուրիշն
մի գերագոյն քան զմեզ՝ նախագոյն՝ ինք-
նագոյն՝ մշտագոյն՝ անեղ՝ անսկիզբն՝ ան-
վախճան՝ ամենակատար Եւ կամ Ետպ,
անձնիշխան իմացող, Արարող ամենայնի,
և ընդհանուր Կառավար, որ այն ինքն է՝
ԱՍՏՈՒԵՅ:

Հ. Արարածոց քննութեամբ ողովիս կարեմք
առնել:

Պ. Ուշե ուշով (Հայոց թիւամասք) հայելով ան-
թիւ արարածոց վերայ, որք առհասարակ
հրաշակերտ (Հայութէ) գործքեր են, և ինք-
նին զրեթէ ցուցանեն, և իբր փաղով հրո-
շակեն զիւրեանց Արարչի անսահման և զե-
րաբուն զօրութիւնը, մեծութիւնը, բա-
րութիւնը, իմաստութիւնը, և նախախ-
նամութիւնը ¹⁷:

Հ. Ո՞յք կարողացան այդ ձևնապարհաւդ Աս-
տուածածանօթ լինել:

Պ. Քանի մի անձինք ՚ի հեթանոս փիլխո-
փայից. վասն զի ո՛չ ամենքն բաւական (Է-



- բառ) էին խմաստասիրաբար 'ի քննութիւն
արարածոց կամ բնութեան պարապելու¹⁸ :
- Հ. Առքա՝ ողբ այդպէս բնական լուսով (Տրաց
աշբանաւոր) զԱստուած ձանաչեցին, պաշ-
տեցի՞ն զնա ըստ արժանուոյն:
- Պ. Ո՛չ¹⁹. վասն զի այն բնական արօտ և նը-
ւազ լրյան զոր ունեին՝ կարող չէր առաջ-
նորդել նոցա 'ի ձանապարհ կատարեալ
և ճշմարիտ Աստուածպաշտութեան: Եւ
որ աւելի ողբապին է, շատերն յայնպիսեաց
յետին անմանութեամբ զԱստուծոյ Արարչի
վայելական պաշտօնը (որով և փառքը) ա-
րարածոց և ձեռագործաց մատուցանելով՝
կուպաշտութեան խաւարի մէջ մնացին²⁰:
- Հ. Աստուած ի՞նչ է:
- Պ. Աստուծոյ ի՞նչ լինեն ըստ բնութեանն
կամ էութեանն՝ անգիտելի և անհասանե-
լի է յամենայն ստեղծական (մարդկային և
հրեշտակային) մատց²¹: Ուստի կարեմք
մեք դիտել միայն՝ թէ ի՞նչ չէ նա ²²:
- Հ. Ի՞նչ մտօք ուրեմն ասի « ողի՛ է Աստուած.
Աստուած լրյա է. առեր է» (Յովհ. դ.

24: ա. Յովհ. ար. 5: Երր. ժբ. 29):

Պ. Այդ բանքգդ՝ և այլ այդպիսիք՝ միայն այլաբանաբար (այսինքն՝ իունաբերական հոգէ, օրինական, առանձանահամբ) կարեն ասուիլ Աստուծոյ վիրայ, յայտնի առնելոյ համար՝ թէ նա՝ անհիւթական բնութիւն է՝ իր ընկիւթական ամենապարզ է, էութեամբն՝ իր ընկիւթական ամենամաքուր է՝ իրը և հուր²⁵:

Հ. Աստուած յումմէ՞ եղե:

Պ. Չեղե նա յումմբէ, ըստ որում անեղ և ինքնազոյ բնութիւն է²⁶:

Հ. Եղանձ է արդեօք ժամանակ՝ յորում չկայր Աստուած:

Պ. Ամենեին ոչ²⁵. վասն զի կայր նա միշտ, կայ յայժմուս, և պիտի լինի՝ յանվախճան յաւիտեանս²⁶:

Հ. Աստուծոյ անունն ի՞նչ է:

Պ. Աստուծոյ էութիւնը կամ բնութիւնը յայտնօղ՝ անուն՝ չկայ և ոչ մի²⁷. վասն որոյ ասի՝ թէ Անանն է նա կամ Ինքնանն²⁸: Իսայց նորա գործքերը և զանազան կատարելութիւնքը յայտնօղ՝ անուանք՝

- շատ կան²⁹, որպիսի են՝ Աստուած, Տէր,
Տէր Աստուած, Տէր ամենակալ, Արարիչ,
Ատեղծիչ, Հայր, Խշան, Դատաւոր,
Թագաւոր յաւիտենական³⁰, և այլն: Եւ
այսու սբատձառաւ ես կոչի նոս Բազարան³¹:
- Ճ. Օ ի՞նչ ուրեմն կամեցաւ Աստուած յայտ-
նել մարդարեին Մովսիսի՝ ասելովն «Ես
եմ Աստուած ՈՌ Ե՞ս» (Ել. կ. 14):
- Պ. Կամեցաւ յայտնել՝ թէ ինքն է ինքնազոյ,
անսկիզբն, անվախճան, միշտ Ե՛ կամ Ե՛
և Ե՛³²: Վասն զի ՈՌ Ե՞ս (Երբայեցերեն
Եհօվա կամ Եհչովաչ^{*}) քառասառեան,
անունն՝ այսպիսի՝ ունի նշանակութիւն,
ըստ բացատրելոյ լեզուահմուտ Մեկնաց:
- Ճ. Ե յիշատակեալ անուաննցդ ո՞րն առաւել
գործածական է 'ի մեր լեզուի:

* Անունս Եհչովաչ. կամ՝ ըստ գրելոյ Ճոն Բարսղի (ի Մեկն.
Մարկ. Ձառ. իր) և ոյլոց՝ Ահիսէ, Քուստիր՝ Քուստուստին կամ
Չորեադիւն կոչի (Ձառ. Մարկ. ՚ի Գով. Ըստք. և առ. Առկեր. Ե
Մեկն. Եսայ.) այնու պատճառաւ, որ առ Երբայեցիս չըստ նշա-
նագրոք գրի, որը են՝ Եսու, Հե, Վաս-, Հե, մանաւանդ զի առ
մեզ ես քառակ իշ է իժարկմանու թիւնն նոյն անուան՝ ՈՌ Ե՞ս:

Պ. Անունս՝ ԱՍՏՈՒԾՅ. * . որ՝ լստ զրեւ
լց ³³ մեր բանիրուն վարդապետաց՝ Երար-
չութեան անուն է՝ և ասուգաբանի օյսոս
կամ յասուիս ուժ ³⁴», այսինքն՝ Հաստեաց,
Հաստառեաց, Սորենց: Բայց կան ևին Աստա-
կարանի ևայերէն թարդմանութեան մէջ
և ալ քանի մի Երբայցական անուանիք Աս-
տուծոյ:

Ա. Ո՞յք են այն անուանիքն:

Պ. Այսոքին են՝

Արտեայէ (այսինքն՝ Տէր):

Արտեայէ (այսինքն՝ Ամենաբարձր Ամենաբարձր)

* Թէպէտ և Ա. Գրոց մէջ՝ Աստուծոյ անունս ընծայուած է
երեւնի և հրեշտակաց, ևս և ոմանց յԱստուածամերձ մարդոց
(մես՚ի Ծնն. ժը, 1: Ել. Է. 1: իր. 28: Սաղմ. ձա, 1: 6: Ցովհ.
Ժ. 34), բայց այդ եղած է միայն պատույ համար, որպէս ցու-
ցանեն հետագայ վկայութիւնքդ «Անուն Աստուածութեանն ՚ի
մեծ պատիւ տուաւ. և ում կամեցաւ Աստուած՝ եւս զնա» (Յ.
Մծրն. ճառ. ժկ): «Անուն Աստուծոյ կայ մնայ և առ մարդոց,
զի կոչեցան ոմանք ասուուածու: Կոչեցաւ մարդ՝ ասուուած, որ-
պէս և Մովլէս՝ ի վերայ Փարաւոնի» (Եփր.՝ ի Համարարք. գլ.
ժթ): «Մովլէս՝ Փարաւոնի ասուուած, բայց Աստուծոյ՝ ծառայ
զրեալ է» (Գրիդ. Աստուածար, յԱռ. որս, ճառ. լ):

- Եւթ (այսինքն՝ Աստուած Հքրունեանց)։
Տէր Ա-բ-ա-ն է (այսինքն՝ Տէր Հքրունեանց)⁵⁵։
- Դ. Ո՞ր է Աստուծոյ բնակութեան տեղին։
- Պ. Աստուած՝ անբովանդակելի բնութիւն գու-
լով՝ տեղւոյ կարօտութիւն չունի⁵⁶, բայց
զօրութեամբ յամենայն տեղիս է և մօտ է
ամենեցուն⁵⁷. և շնորհօք բնակի արդարոց
սրտից մէջ⁵⁸։
- Դ. Ուրեմն ի՞նչ է պատճառն՝ որ ասի թէ
«Նորա աթոռն յերկինս է» , կամ թէ
«Երկինքն աթոռ են նորա» (Աաղմ. Ժ. 5:
Եսայ. կղ. 1)։
- Պ. Պատճառն է, նախ՝ զի նորա մեծվայել-
չութեան փառաց և ահաւորութեան նը-
շանքն՝ առաւելապէս յերկինս երեխն՝ մե-
ծամեծ՝ սքանչելի՝ լուսաւոր արարածնե-
րով։ Եւ երկրորդ՝ զի հրեշտակքն և սրբոց
հոգիքն յերկինս են⁵⁹։
- Դ. Զ. Ա. Աստուած տեսած է ոք երբէք կամ կա-
րէ տեսանել։
- Պ. Ո՛չ տեսած է, և ոչ տեսանել կարէ⁶⁰։
Վասն զի զանմարմին էութիւնը՝ ըստ իւր

իսկութեան (այսինքն՝ այնպէս, որպէս է յինքեան)՝ անհնարին է մարմնական աչօք տեսանել⁴¹:

Դ. ♦ Քանի՛ Աստուածք կան:

Պ. Մի միայն է Ճմարիտ Աստուածն * . և բաց ՚ի Միոյն՝ չկայ այլ Աստուած իսկութեամբ⁴²: Իսկ դիքն կամ կուռքերն՝ ստութեամբ և անուամբ միայն կոչուեցան աստուած՝ և ոչ իսկութեամբ⁴³:

* Այսպէս դաւանելով և ուսուցանելով Կաթուղիկէ Ս. Եկեղեցին՝ հերքէ նախ զկուապաշտից բազմաստուածեան մոլորութիւնքը. և երկրորդ՝ զՄանիքեցւոց թիւր վարդապետութիւնը, որք հետնելով մոլորական կարծեաց Մանեայ կամ Մանիքէսի Կուրրիկոսի (սր երրորդ գ դարու աղանդապետաց մինն էր), երկու սկիզբն կամ երկու արարիւ քարոզէին. զորոց և զմինը՝ բարեաց ազըթւը համարելով՝ կոչէին Բարի աստուած, և զմիւսը՝ չարեաց պատճառ համարելով՝ կոչէին Զար աստուած: (Տե՛ս առ Վիւրդի երուս.՝ ՚ի Կոչ Ընծ. գլ. Ղ): Սոքա դասապարտուեցան զանազան ժողովոց մէջ, բայց մոլորութիւնքն երկար ժամանակ տևեցին. զորս չորրորդ դարումը Օգոստինոս վարդապետն Լատինաց, և հինգերորդ դարումը՝ մեր կորովարան վարդապետն Եզնիկ Առղյացի, զօրաւոր զրուածովք հերքեցին:

Բ. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆՔ

Հ. Աստուած ո՞պիսի կատարելութիւնքունի:
 Պ. “Եա” ամենակատար ընութիւն գոլով⁴⁴,
 ունի և այնպիսի կատարելութիւնք՝ որը
 նմա միայն պատկանին. վասն զի է նա Ան-
 փոփոխ⁴⁵, Անչափ կամ Անսահման⁴⁶, Ա-
 մենակարող⁴⁷, Անձնիշխան⁴⁸, Ամենագիտ
 կամ Ամենիմասս⁴⁹, Պարզագոյն կամ Ա-
 մենապարզ⁵⁰, Մշանջենաւոր կամ Յաւի-
 տենական⁵¹, Անմահ⁵², Ամենաբարի⁵³,
 Ամենասուլբ⁵⁴, Ամենավայր, (այսինքն՝
 յամենայն ուեղիս ներկայ) ⁵⁵, և այլն:

Գ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՆՉԱՆՑ

Հ. Աստուածային անձինք քանի՛ են:
 Պ. Երեք են, և քան զերեքը ոչ աւելի, և ոչ
 սպակաս⁵⁶:
 Հ. Ուրեմն երեք Աստուած կայ, կամ երեք
 Աստուածութիւն:
 Պ. Ու երեք Աստուած, և ու երեք Աստուա-

ծութիւն, այլ՝ մի Աստուած, և մի Աստուածութիւն յերիս անձինս⁵⁷: Պահողոյ զամենասուրբ Երրորդութիւնը՝ ըստ Ճշմարտուացյց վարդապետութեան Կաթողիկէ և Առաքելական եկեղեցւոյ՝ պարտիմք դաւանել «Երեք անձինք և մի բնութիւն, մի Աստուածութիւն⁵⁸»:

Պ. Ասա զերից անձանց անուանքը:

Պ. Առաջինն է և կոչք Հոյր. Երկրորդն՝ Ուռե, Բան, Միածին Հօր. Երրորդն՝ Հոգի Սուրբ, Հոգի Աստուածոյ, Հոգի Ճշմարտութեան⁵⁹:

Հ. Խնչով կարեսք ամենասուրբ Երրորդութեան խորհրդոյն ծանօթանալ:

Պ. Միայն հաւատով՝ ըստ յայտնութեան Ձըն,⁶⁰ որք պարունակուած են՝ Հին Կտակարանի մէջ՝ աղօտ բանիւք (իբր ընդ քօղով)՝⁶¹, և Եոր Կտակարանի մէջ՝ բացայսյոտ և որոշ բանիւք:

Հ. Հին Կտակարանի մէջ ի՞նչ բանիք կանսուրբ Երրորդութեան վերաց:

Պ. Օճնեղոց զբքի մէջ կան այս բանիքս՝ ՚ի գիմաց Աստուածոյ ասացնալ. «Արասցուք

մարդ լսաւ պատկերի մերում... Արաւ-
ցուք դմա * օգնական... Եհա Եղամ եղեւ
իբրև զմի՚ի մէնջ... Եշկայը իջցուք և խառ-
նակեսցուք զլեզուս նոցա ** » (Օ՞նն. ա.
26: բ. 18: դ. 22: ժա. 7): Եւ այս բանիցս
մէջ յոդնական բայըս՝ Արաւցուտ, Եկայտ,
Իջցուտ, Խառնակեսցուտ, և յոդնական դերա-
նուանքս՝ Մէրուտ, ՚ի Մէնջ, անշուշտ զլւա-
տուածային անձանց բազմութիւնը ***
ցուցանեն ⁶²:

Հ. Ա՛յլ մարգարէից զրուածոց մէջ ևս կա՞ն
այդպիսի բանք:

Պ. Կան ոչ սակաւ. յորոց մի է և այս բան
Դաւթի մարգարէին. «Ողորմութեամբ
Տեառն (Հօր Աստուծոյ) լի եղեւ երկիլ. և
Բանիւ Տեառն (Որդուկ) երկինք հաստա-
տեցան. և Հոգւով բերանոյ նորա (Հոգու-
ուբուկ) ամենայն զօրութիւնք նոցա» (Ասդ.
լիք. 5. 6) ⁶³:

* Այսինքն՝ Արաւցուտ:

** Այսինքն՝ Անոնցաց Բ-բեւլունեան աշուք-ինք:

*** Այսինքն՝ Դան պան ա-նեւ լինեւը:

- Հ. «Եօր Կտակարանի մէջ ի՞նչ որոշ յայտնութիւնք կան սուրբ Արքորդութեան վերայ:
- Պ. Ըռաջին որոշ յայտնութիւնն այն է՝ որ պատմի, թէ երբ որ մլրտուեցաւ Քրիստոս Յովհաննէս Մկրտչէն, լսուեցաւ և օր Եստուծոյ ձայնն յերկնից. «Դանէ Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ». և թէ՝ և ողին սուրբ ևս աղաւնակերպ իջաւ Քրիստոսի վերայ (Մատ. է. 16. 17): Եւ երկրորդ որոշ յայտնութիւնն այն է՝ որ պատմի, թէ Քրիստոս երբ որ հրաման տուաւ Ըռաքելոց՝ երթալ յամենայն աշխարհի քարոզութիւն, ասաց «Եշակերտեցէք զամենայն հիթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն և օր և Որդւոյ և և ոգւոյն սրբոյ» (Մատ. իշ. 19):
- Հ. Եստուծածային անձինք ինչով բաժանին կամ որոշին ՚ի միմեանց:
- Պ. Միայն անձնաւորութեամբ. վասն զի այլ է և օր անձն, այլ է Որդւոյ անձն, և այլ է և ոգւոյն սրբոյ անձն ⁶⁴*:

* Յերրորդ դարու, Ասբէլէան աղանդաւորքն՝ որոց առաջ-

Հ. Ասյ նոցա մշջ մեծ և փոքր, կամ բարձր
և նուաստ կամ առաւել և նուազ:

Պ. ԱՇ⁶⁵. վասն զի երկըն ևս մի և. նոյն ին էու-
թեամբ և բնութեամբ, և հաւասար իսկ
ին զօրութեամբ՝ իշխանութեամբ՝ պատ-
ռեով և վասոօք⁶⁶ * :

Նուգ եղած էր Սարէլ անուն երէց ոմն Ալբէացի, չընդունէին
զԱստուածային անձանց՝ ի միմեանց զանազանութիւնը, այլ զե-
րեքը՝ ի մի խառնակէլլով՝ մի անձն միայն դնէին յԱստուածային
էութեան. և «Կոյն մի անձն է, առէին, որ երբեմն չայր ան-
ուանի, երբեմն՝ Որդի, և երբեմն՝ Հոգի սուրբ, ևն»: Սոցա ընդ-
դէմ զինեցան զօրաւոր զրուածովք Ս. Ամժանաս հայրապետն
Աղեքսանդրիոց, Ս. Բարսեղ Անսարացի, Ս. Գրիգոր Նիւացի,
և այլք: Մեր երանելի չարքն և հոգեշնորհ վարդապետքն ևս
յիշեն իւրեանց զրուածոց մշջ զնոյն աղանդաւորքը՝ հերքելով
միանդամոյն զնոյա մոլորական կարծիքները: Տես յընդարձակ
Հրահնողն. յէջ 151. 168. 171:

* Երիս երէցն Աղեքսանդրացի զերից անձանց հաւասարու-
թիւնը ուրանայր՝ ուսացանելով, թէ Որդին ոչ է Զօր համա-
դոյակից, այլ օտար, արարած, կրտսեր և յետ ժամանակին դոյ-
ոցած: Սոյնակես և Մակեդոն պատրիարքն Ա. Պօլսի ուրանայր
զՀոգւոյն սրբոց Աստուածութիւնը՝ առէլով, թէ օտար է նա՝ ի
բնութենէն Աստուածոյ, ուստի և ոչ է երկրոպակելի ընդ Հօր և
Որդւոյ: Զառաջնոյն մոլորութիւնը հերքեց և դատապարտեց
նզովիւք՝ Նիկիոյ առաջին տիեզերական ժողովն յամի Տեառն
325, և զերկրորդինը՝ Ա. Պօլսի երկրորդ տիեզերական ժողովն
յամի Տեառն 381: Զմեր սուրբ վարդապետաց բանքը ընդդէմ

Հ. Անին նոքա առանձին առանձին յասկու-
թիւնք:

Պ. Այս, ունին միայն անհնաւորական յատ-
կութիւնք, զորս մեր ամէներանեան այլն
հաւասոյ՝ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ
այսու բանիւս լուսաբանէ. « այր՝ չծր-
նեալ՝ և ծնօղ է. Արդին՝ չծնօղ՝ և ծնունդ
է. և սովորն սուրբ՝ ոչ ծնօղ և ոչ ծնունդ,
այլ ելօղ ⁶⁷⁾ » (ՃԱԳԱԲԸ, յէջ 397. ըստ
Հին տպ.):

Հ. Յումիշ յառաջագային կամ ունին զիւր-
եանց ծագումն՝ Արդին և սովոր:

Պ. Ի միոջէ միայն յանակզենական օրէ ՃԱՄ-
առւծոյ ⁶⁸⁾. քանզի ՚ի ՚Նմանէ է Արդին՝ ան-
մարմնաբար յախնական ծննդեամբ ⁶⁹⁾.
՚ի ՚Նմանէ է և սովորն սուրբ՝ անհատա-
բար մշանջենաւոր բղխմամբ ⁷⁰⁾: Ի ՚Նմանէ
են երկոքեան, որպէս բոց և ջերմութիւն՝
՚ի հրոյ, որպէս ճառագայթ և տապ՝ յա-
րեգականէ ⁷¹⁾:

աստուածամարտ հերետիկոսագիտացդ՝ տես յընդարձակ Հրա-
հանդն, յէջ 169. 170:

Ա. Այր միացն է ուրեմն պատճառ Որդւոյ և
ողբոյն սրբոյ:

Պ. Եյո⁷², որպէս խոստովանի ուղղափառա-
պէս մերս այստաննայց Ա. եկեղեցի՝
բանիւ Շնորհալի այրապետին
«Եստուած անեղ անժամանակ,
այր անըսկիզբն և անքանակ,
Որդւոյ պատճառ՝ ծննդեամբ անձառ,
ողբոյն՝ բրդամամբ անքըննաբար⁷³»:
(Ի Ճարտէ. յերժ նաջեց.):

Ա. Եղած է ժամանակ՝ յորում չկային Որ-
դին և ողբին սուրբ:

Պ. Ոչ երբէք. վասն զի երկոքին ևս անսկլզբ-
նակից և մշնջենաւորակից են չօր Ես-
տուծոյ⁷⁴: Ոչ այրն յառաջ է քան զՈր-
դին, և ոչ Որդին յառաջ է քան զողին
սուրբ⁷⁵:

Դ. ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ա. Երարշագործութիւնն ի՞նչ է:

Պ. Եւ աղաս գործողութիւն երկանձնեայ

Եստուածութեան * առ արտաքս, որով
յունչէ ստեղծուեցան ամենայն երևելի և
աներեւոյթ արարածք⁷⁶:

Ա. Ոյք են երևելի արարածքն, և ոյք աներեւոյթքն:

Պ. Երևելի կոչին այն արարածքն՝ որոց հնար
է մարմնական աշաց տեսութեան տակ անեկանիլ, որպիսի են՝ երկինք, և ինչ որ կայ
անդ. երկիր, և ինչ որ կայ նորա վերայ:
Իսկ աներեւոյթ արարածք ասին լոկ հոգեղէն
ստեղծուած էակըն, յու մարդոց հոգիքն,
և հրեշտակըն (թէ բարիք և թէ չարք):

Ե. ՆԱԽԱԽՆԱՄՐՈՒԹԻՒՆ

Ա. Կախախնամութիւնն ի՞նչ է:

Պ. Կախախնամութիւն ասի այն Եստուածային բարեխնամ Տեսչութիւնն, որով նա ինքն ամենակարող և ամենաբարի Երարիչն՝ ըստ իւր կամացն հաճութեան՝ ինա-

* Այսինքն՝ Ա. Երևանի բան:

մէ զամենայն արարածքը և պահէ իւրեանց
գոյութեանը մէջ, ևս և կառավարէ՝ զիւ-
րաբանչիւրը դէպ յիւր վախճանն ուղղե-
լով⁷⁷:

Զ. ՄԱՐԴԵՎՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒՅԹՈՐԴԻՌԵՑՆ

Հ. Ե՞նչէ Աստուածորդոյ մարդեզութիւնն:

Պ. Ե՞նչ մարդնանալն և մարդանալն Որդոյն Աս-
տուծոյ կամ Քանին՝ որ և ոգւոյն սր-
բոյ հաճութեամբ⁷⁸:

Հ. Օխարդ եղե այն:

Պ. Որդին Աստուծոյ զմարդկային բնութիւնը
առնլով յարենէ սրբոյ Առւսին Մարիա-
մու, և միաւորելով զայն իւր անեղական
բնութեանը հետ, եղե կատարեալ մարդ՝
կատարեալ Աստուածութեամբ⁷⁹:

Հ. Երկու բնութիւնը էին ուրեմն յԱստուածն
մարդացեալ:

Պ. Այսու վասն զի նոյն ինքն՝ Աստուած էր և
մարդ միանդամայն, Աստուած էր՝ Աս-

ուածային բնութեամբ, և մարդ՝ մարդ-
կային բնութեամբ ⁸⁰:

Հ. Երկո՞ւ էին և անձնակ:

Պ. Ո՛չ, այլ՝ մի միայն, և այն՝ ոչ մարդկային,
այլ՝ Աստուածային, յորում երկաքանչեւր
բնութիւնքն՝ (Աստուածայինն և մարդ-
կայինն) միաւորուեցան (Գաղան՝ ՚ ՚ անշնառ-
ութեան) անբաժանաբար և անշվաթա-
պէս ⁸¹: Ուստի զնոյն խակ զմիացեալն յեր-
կուց բնութեանց՝ մի անձն խոստովանիմք,
մի գէմ, և մի Տէր՝ Յիսուս Քրիստոս ⁸²:

Հ. Կարելի՞ է ուրեմն՝ ուղիղ մտօք «Մի բնութեան
կամ էրիս բնութեան ասել բանին առջնորդելոց»:

Պ. Կարելի է, որպէս ասացին յառաջին ժա-
մանակս սուրբ և ուղղափառ Վարդա-
պետք՝ ընդգէմ Կհստորի և Եւտիքէսի
մոլորութեանցն ^{* 83}:

Հ. Բանն Աստուած՝ ՚ի մարմնանալն՝ առան-
զայն ամենայն՝ որ ինչ է ՚ի մարդ, (այսին-

* Այս երկու հերետիկոսապետքս երևեցան ՚ի մոռւմ ժամա-
նակի, այսինքն՝ ՚ի հինդերորդ դարու: Կեստոր էրիս բնութեան
ասելով՝ զմի Քրիստոսն յերկուս անձնաւորութիւնս կամ յեր-

քըն՝ զայն ամենայն՝ որովք է և ասի մարդուն՝ ինութանի բանական կամ հարդ կապարեալ):

¶. Այսուհետեւ վասն զի ոչ միայն մարմին առաւ նայանք ամիս, այլև ստեղծական մարդկային (բանական) հոգի հանդերձ իմացական կարողութեամբ, որ է միտք *⁸⁴:

Կուս որդիս բաժաներ, այլ որդի ասեր զջնեալն՝ ի Մարիամայ, և այլ որդի՝ զջնեալն՝ ի Հօրե յաւիտենականն: Ուստի և ըզ Մարիամ ոչ խոստավաներ Աստուածածին (Անոն Աստուածոյ): այլ Քրիստոսածին: և Քրիստոս ասելով՝ իմանալիր մորդ աշակեր, և ան Աստուած մորդոցիւլ: Իսկ Եւալիքէս կամելով՝ Նեստորի մոլորութեանը հակառակիլ Թ Բնութիւն ասաց՝ Քրիստոս թիւր մոոք, այսինքն՝ պնդելով, թէ Աստուածային և մարդկային բնութիւնքն մի եղեն շփոթմամբ և այլայլուելով, այնպէս՝ որ բնութեանց յատկութիւնքն չպահուեցան կամ անկորուստ չմնացին. և այլն: Երկոցունց մոլորութիւնքն ևս հերքուած են՝ ի սրբոց Հարց և յուղղափառ վարդապետաց թէ մեր եկեղեցւոյ և թէ այլոց քրիստոնեկից: Տե՛ս յլնդարձ. Ճրահանդն. յէջ 276 — 278. 280 — 282:

* Ապողինար եպիսկոպոսն Լաւոդիկէ քաղաքի յԱսորիս, և հետեւողք նորա՝ Ապողինարիտք, չորրորդ դարումը, ուրանային զայս ճշմարտութիւնս, ուսուցանելով՝ թէ Բանն Աստուած մարմին միայն առաւ առանց մարդկային հոգւոյ, կամ թէ՝ առաւ և հոգի՝ լայց առանց մոտաց: Ընդդէմ այսպիսի խոտորնակ կարծեաց սոցա՝ ճառեր դրեցին Ա. Աթանաս հայրապետն Աղեքսանդրիոյ, Ա. Գրիգոր Նազիանզացի (Աստուածարան), Ա. Գրիգոր Նիւսացի, Յովհան Ասկերերան, և այլք: Իսկ զմբք ճշմար-

ւ. Մարդկային կիրք ևս կրէ՞ :

Պ. Այո՛, կրէր՝ բայց կամաւորապէս, իշխանաբար, և առանց մեղաց. վասն զի յանձն առաւ նա միայն զայն անանգումնելի (անդախտակեց) բնաւորական կիրքերը մարմնոց և ոգւոյ՝ որք առհասարակ ամենայն մարդոց կամ բոլոր մարդկային բնութեանս պատշաճին, որպիսի են՝ քաղցենալ, ծարափիլ, վաստակիլ (եռջել յոժնել), տրտմիլ, հոգալ, արտասուել, երկնչել (երեւ-ւ իւել), և այլն ⁸⁵:

Հ. Ունե՞նա՛ և Սատուածային կամք և մարդկային կամք, ևս և Սատուածային ներդործութիւն և մարդկային ներդործութիւն:

Պ. Այո՛. վասն զի երբ որ զԱստուածութեան զօրութիւնը կամեր ցուցանել՝ զԱստուածայինքը ներգործէր Սատուածաբար, (ուղեա Աստուածա): և երբ որ զմարդկութեան խոնարհութիւնը կամեր յայտնել՝ զմարդ-

կայինքը ներգործէր մարդկաբար (սբէն
հարու) *⁸⁶:

Հ. Երկու կամքն (Սստուածայինն և մարդ-
կայինն) ՚ի մարդացեալն Սստուած՝ չհա-
կառակէի՞ն միմեանց:

Պ. Աչ. վասն զի մարդկային կամքն հետևէր
(հոդութէր) միշտ Սստուածային կամացն ⁸⁷:

Հ. Որովք անուամբք կոչեցաւ թանն Սստ-
ուած՝ յետ մարդեղութեանն:

Պ. Յետ մարդեղութեանն՝ յատկացան նմա-
անուանիքս՝ Յէսուս, Քրիստոս, Մէսսիս, Է-
անառէլ ⁸⁸. յորոց առաջինն՝ թարգմանի

* Յեօթներորդ դարուն երեւցան այնպիսի հերետիկոպք Յու-
նաց և Ասորւց մէջ, որք յեւտիքական մոլորութէն այլ իմ նոր
մոլորութի ծնուցին՝ դաւանելով՝ ի Քրիստոս մի միայն կամք և մի
միայն ներգործութի, որք և կոչեցան Սկավառակոյդ կամ Մկանա-
բառական: Սոցա թէներ կարծիքն մերժուեցան և գատապարտուե-
ցան ժաղովներով և մասնաւոր գրուածներով՝ ի Յունաց և ՚ի Լա-
տինացւոց: Թէպէտ և մեր ազգի մէջ այս՝ և այլ այսպիսի հերե-
տիկոսական մոլորութեանց հետևող ոք չէ եղած, այլ այնու-
ամենայնիւ երանաշնորհ վարդապետքն Ա. Եկեղեցւոյս Հայաստա-
նեացց չէն դանդաղած ընդդէմ զինիլ այնպիսի մոլար վարդապե-
տութեանց, որում ասկացցց են՝ նոցա ողջամփտ գրուածքն, զորս
ունիմք՝ ՚ի մէջ բերել՝ ՚ի կարգի վկայութեանց՝ գրքիս վերջումը:

Փրկէւ երկրորդն և երրորդն՝ օհեւլ իսկ
չորրորդն՝ ըստ մշւարժութեանն կամ

վ. Ասն էր կոչեցաւ նա Փրկէւ:
Պ. Ասն այն՝ զինորա մարդեղութիւնն կամ
յաշխարհ գալն մարմնով՝ եղեւ միայն
մարդկային աղքի փրկութեան համար ⁹⁰:

Վ. Ասն էր օհեւլ անուանեցաւ:

Պ. Ասն կրկին պատճառաց: Մի՝ զի մարդ-
կութիւնն միաւորուելով Աստուածու-
թեան հետ յանձն բանին՝ օծուեցաւ
յԱստուածութենէ անտի ⁹¹: Եւմիւս՝ զի
նա կացուցաւ ըստ մարդկութեանն՝ Քա-
հանայ կամ Քահանայապետ, Մարդարէ,
և Յմագաւոր յաւիտենական ⁹². և այս եղեւ
օծմամբն՝ որ 'ի Հոգւոյն սրբոյ ⁹³:

Վ. Երբ և զիա՞րդ օծեց զնա Հոգին սուլրբ:

Պ. Եախ և յառաջ 'ի վայրկենի անդ յղաց-
ման նորա յարդանդի Ա. Կուսին՝ ամե-
նայն շնորհաց և պարգևաց հեղմամբն ⁹⁴.
և ապա 'ի մկրտութեան ժամանակին՝ նո-
րա վերայ իջանելով մարմնաւոր տեսլեամբ
իրիւ աղաւնի ⁹⁵:

Հ. Արթէ կատարեց Քրիստոս Քահանայի
պաշտօն:

Պ. Եւյո. վասն զի զիւր անձնը պատարագ
մատուցանելով՝ նախ առանց արեան՝ Ա.
Հաղորդութեան խորհրդի մէջ, և ապա
արեամբ՝ խաչի վերայ, վասն մեր բարեխօս՝
և հաշտութեան միջնորդ եղեւ առ Հայրն
Աստուած⁹⁶:

Հ. Արգարէի պաշտօն ի՞նչպէս կատարեց:

Պ. Յայտնապէս քարոզելով զիւր առաքչի Հօր
Աստուծոյ պատուէրները, և զլինելոցը (յե-
առ լինելի⁹⁷ բաները) յառաջնուց պատմելով:

Հ. Թռագաւորի պաշտօն ի՞նչպէս կատարեց:

Պ. Անդաց թագաւորութեանը յաղթելով,
զմահու բռնութիւնը լուծանելով, ամենայն
մարդկան տիրելով մահուամբն և փառա-
ւոր յարութեամբն, և Տէր և Աստուած
ճանաչուելով յերկնաւոր և յերկրաւոր ա-
րարածոց⁹⁸:

Հ. Քրիստոս ո՞րպէս ՚ի կլուխ հանեց զՓրկչե
պաշտօնը կամ զփրկագործութիւնը:

Պ. Կատարելով զՀայրակամ Տնօրինու-
թիւնքը⁹⁹:

Հ. Խնչ են Տնօրինութիւնքն:

Պ. Տնօրինութիւնքն կամ Տնօրինութիւնքն կոչին յԱստուածաբանից և 'ի Վարդապետաց եկեղեցւոյ՝ այն ամենայն խորհուրդքն և գործքըն մարդեղութեան Որդւոյն Աստուծոյ, որք յառաջուց ևս գուշակուած էին մարդարէիւք ¹⁰⁰:

Հ. Աշանաւորքն 'ի Տնօրինականաց ոյք են:

Պ. Եյտոքիկ. Յղութիւն, Ծնունդ, Մկրտութիւն, Վւետարանութիւն, (Քարշա-
ռաշաղումն) Արաշագործութիւնք, Զարչարանք, Մահ, Թաղումն, Յարութիւն, Համբարձումն և նստելն ընդ աջմէ Հօր ¹⁰¹:

Ե. Եկեղեցի Քրիստոսի, Եկ Խորհրդարդք ՆՈՐԻԿ

Հ. Օհնչ է Եկեղեցի Քրիստոսի:

Պ. Եկեղեց Քրիստոսի, (Եթէ հանրապէս մտածուի) է ուղղահաւատ քրիստոնէից՝ թէ կենդանեաց և թէ ննջեցելոց՝ համօրէն բազմութիւնն կամ ժողովն, հանդերձ հողեոր Հովուօք կամ Վռաջնորդօք ¹⁰²:

Հ. Ա՞լ է նոցա Գլուխ կամ Հովուապետ:

Պ. Նոցա ամենեցուն՝ իբրև միոյ մարմնոյ և
իբրև միոյ հօտի, է միակ Գլուխ, է միակ
Հովուապետ կամ Հօտապետ՝ նոյն ինքն
Հիմնադիրն եկեղեցւոյ Յիսուս Քա¹⁰³:

Հ. Ե քանին բաժանի Քրիստոսի եկեղեցին:

Պ. Բաժանի յերկուս, այսինքն՝ ի Օինուռ-
ընալ և 'ի Յաղթական:

Հ. Ո՞ր է Օինուռեալն:

Պ. Ե՛ կենդանի հաւատացելոց (Գուգանելց)՝
խումբն, որք գեռ այս մահկանացու վիճա-
կիս մէջ գտանուելով, և զինուռուած գո-
լով հոգեկան զէնքերով (Աւետարանական օբի-
նչ), պատերազմ ունին ողեկորոյս թշնա-
մեաց (Տուժուց՝ աշխարհի և ստունոյն) դէմ*¹⁰⁴:

Հ. Ո՞ր է Յաղթականն:

Պ. Ե՛ ննջեցեալ սրբոց (Կոհուց արդարոց) ժողովն
'ի վերինն Երուսաղէմ (յերինս), որք յետ
յաղթողապէս աւարտելոյ այս աշխարհիս
վերայ զնոյն հոգեսոր պատերազմը, ելին 'ի

* Կոչի սա յԱստուածաբանից և Սոսքին Եկեղեցի, ևս և գո-
րեմունքն Եկեղեցի:

- մարմնոյ՝ յուսով ընդունելոյ յԱստուծոյ
զյաղթութեան փառաց պասկը * ¹⁰⁵:
- Հ. Եղօթարանք վասն էր Եկեղեցն անուանին
(ա. Կորն. ժա. 18):
- Պ. Ա ասն այն՝ զի քրիստոնեայք՝ նոցա մէջ
Եկեղեցանալով (հաստիւթեալ)՝ աղօթեն, և
հրապարակաւ զԱստուծ պաշտեն ^{** 106}:
- Հ. Քրիստոսի Ճմարիտ Եկեղեցւոյն յատկա-
կան նշանքն քանիի են:
- Պ. Չորք են՝ Միութիւն, Արբութիւն, ընդ-
հանրականութի, Սուաքելականութի ¹⁰⁷:
- Հ. Ա ասն էր կոչի Եկեղեցին Քրիստոսի՝ Մէ:
- Պ. Ան կամ գե մայն կոչի վասն այն՝ զի նորա
անդամքն (որք են ամենայն ուղղահաւատ
քրիստոնեայք) ներքին և հոգեոր միու-
թեամբ հաւատոյ՝ յուսոյ և սիրոյ, իրեւ
մի մարմին, յօդեալ (էաղուած՝ մեացած) են

* Կոչի սա յԱստուծաբանից և Ալբին Եկեղեցին:

** Բայց այսպիսի ժողովարանքս՝ առ ՚ի զանազանիւ ՚ի նա-
խայիշատակեալ Եկեղեցեաց՝ կոչին յԱստուծաբանից՝ Նկենա-
քոն Եկեղեցի, և Ա. Գրոց մէջ յիշին անուանիքս Տաճար (Ղուկ.
ժը. 10), Տաճար աշխից (Մատ. իա. 13), Տաճար Աստուծոյ (Ղուկ.
շ. 4), Տաճար Տիառան (ա. Կորն. ժա. 20):

իւրեանց միակ Գյլխոյն հետ ¹⁰⁸, որ է Վրիս-
տոս ¹⁰⁹:

Հ. Ա ան էր կոչե Սուրբ:

Պ. Սուրբ կոչուելոյն պատճառքն են

‘Սախ՝ զինորա Գյլուխն Վրիստոս՝ սուրբ
է ամենայնիւ, անմեղ և անարատ ¹¹⁰:

Երկրորդ՝ զի ազատ է նա (այսինքն՝ Ե-
կեղեցին) յամենայն արատոյ անմաքուր՝
մոլար և սուտ վարդապետութեանց ¹¹¹:

Երրորդ՝ զի ունի իւր մէջ Վրիստոսա-
դիր՝ սրբարար և շնորհաբաշխ Խորհուրդ-
ներ ¹¹²:

Չորրորդ՝ զի նորա անդամքն սրբեալ
են յազտոյ Ակզենական մեղաց՝ Աւազանի
մկրտութեամբն, և հաւատովն՝ որ 'ի
Վրիստոս ¹¹³:

Հ. Ա ան էր կոչե Ընդհանրական:

Պ. Ընդհանրական կամ Տէեսէրական (Յունարէն՝
Կոնցոչէն) կոչուելոյն պատճառքն են՝

‘Սախ՝ զի ունի իւր մէջ՝ և ընդունի սի-
րով 'ի ծոց իւր անդամ և ժողովուրդ հա-
ւատացեալ՝ յոր և իցէ ազդէ և յոր և իցէ
աշխարհէ՝ անխատրաբար ¹¹⁴:

Աշրկըոլսդ՝ զի տարածուած է և պիտի
տարածուի յամենայն ծագս տիեզերաց¹¹⁵,
և անպակասելի մնալով՝ պիտի տեէ՝ ըստ
խոստմանն Քրիստոսի՝ մինչև ցկատարած
աշխարհի¹¹⁶:

Ա. Առաջելական ասուելոյ պատճառն ի՞նչ է:

Պ. Եյն է՝ զի շինուած է և հաստատուն մնայ
միշտ Եռաքելաւանդ ճշմարիտ վարդապե-
տութեանց հիման վերայ¹¹⁷:

ԽՈՐՀՈՒՐԴԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ:

Ա. Եկեղեցւոյ Խորհուրդքն զի՞նչ են:

Պ. Են պէսպէս Խորհրդաւոր սրբազն գոր-
ծողութիւնք՝ ի ձեռն զգալի կամ նիւթա-
կան նշանաց, որովք՝ արդարացուցիչ՝
փրկարար և կենսատու շնորհքներ պարգե-
լին յԵստուծոյ *՝ այն անձանց, որք օրի-

* ՄԵԿԱԿԱՆ կամ ՄԵԿԱԿԱՆ անուանեալ հերետիկոսքն՝
որք ծագեցան ՚ի կեսն չորրորդ դարու ՚ի Միջագետս, ուսու-
ցանէին՝ թէ Եկեղեցւոյ Խորհուրդքն չունին բնաւ արդարացու-
ցիշ զօրութիւն և չեն կարող սրբել զմարդոյ հոգին ՚ի մեղաց:

- Նապէս և արժանապէս ընդունին զայնս ¹¹⁹ :
- Վ. Քանի՞ են այդպիսի Խորհուրդք :
- Պ. Եօթն են, ոչ աւելի և ոչ պակաս * :
- Ե. Մկրտութիւն :
- Բ. Դրոշմ:
- Գ. Ապաշխարութիւն :
- Դ. Հաղորդութիւն :
- Ե. Ամուսնութիւն (կամ Պատի) :
- Զ. Կարգ (կամ Չեռաբրունիւն) :
- Է. Օծումն հիւանդաց (որ ասի նաև
Վերջին Օծումն) :

Եւ այսու պատճառաւ շատ անդամ նզովուեցան նոքա այլ և այլ
մասնաւոր ժողովոյ մէջ, որպէս դրեն եկեղեցական պատմիչք :

* Ապաշխարտ կամ Ապահովութիւն աղանդաւորքն՝ որը արհա-
մարհողք և անգուսնողք էին ամենայն եկեղեցական կարգաց և
ծիսից, Տէրունեան նշանի (խաչի), Սրբոց պատկերների, և
այն, երկու խորհուրդ միայն ընդունէին, այսինքն՝ Մկրտու-
թիւն և Հաղորդութիւն : Երկոտասաներորդ դարումը շատ զօ-
րացած էին նոքա յՆըևմուստ . և նոյցա աղանդն մերժուած էր
մասնաւոր ժողովով՝ որ եզե 'ի Հռոմ', 'ի 1179 թուին : Այս-
պիսի խոտորնակ կարծեաց և անուղիղ վարդապետութեանց
ձայնակիցք և հետեղք եղին 16 երորդ դարումը և այլք՝ Սաք-
սոնացի Մարտին Լուտերի առաջնորդութեամբ, որք և մինչեւ
ցայսօր յայտնի են ամենեցուն անուամբքս՝ Նորութեանունու, Բազու-
ամիոն + կամ Աստվածունու + :

Հ. Յումմէս սահմանուեցան (Դրուեցան) այդ
խորհուրդքի:

Պ. Ե փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. վն
զի նա միայն՝ իբրև Ճեղինակ շնորհաց և

Իսկ մեր Հայաստանեայց Ա. Եկեղեցին (օրպէս և այլ ամե-
նայն Առաքելահիմն Եկեղեցիք) յառաջին դարուց անտի քրիս-
տոնէութեան մինչև յայժմն ընդունած է և ընդունի զայս եօթն
Քրիստոսահման սրբարար խորհուրդքս, որք 'ի սրբոց Առաքե-
լոց և յօրինաւոր յաղորդաց նոցա անընդմիջաբար աւանդուած
են ընդհանուր Եկեղեցւոյ, որպէս յայտնապէս ցուցանեն այն
ամենայն Ծիսարաննը՝ զորս ունին ուղղագաւառն ազդք Քրիստո-
նէից յիւրաքանչիւր լեզուս: Մեր Եկեղեցւոյ Ծիսարանի (Մաս-
տոց) մէջ՝ որ յօրինուած է 'ի հինգերորդ դարու, գտանին ա-
ռանձին առ անձին կանոնը և պատշտճաւոր աղօթքներ վասն կա-
տարման Խորհրդոցն՝ Մկրտութեան, Դրոշմի, Ամուսնութեան,
Արձակելոյ զապաշխարողս, Հաղորդելոյ զհիւանդս, Աղօթելոյ 'ի
վերայ նոցա, և այլն: Զերուարութեան գրքի մէջ աւանդին կա-
նոնը վասն առաջ զատորհճանս Կարդի: Խորհրդադրերի մէջ կան
պէսպէս աղօթքներ՝ շարագրեալք 'ի նախնեաց անտի յԱստ-
ուածամերձ սրբոց վարդապէտաց՝ վասն կառարման Աստուա-
ծային սուրբ Պատարագի: Յանձնիսպատրութ անուանեալ գրքի
մէջ ևս՝ զոր շարագրած է մեր ամէներանեան Հայրն Հաւատոյ
Ա. Գրիգոր Լուսաւորիչ, որպէս նաև նորա առանձին Վարդա)՝
պետութեան մէջ՝ զոր 'ի մէջ բերէ Ագաթանգեղոս ('ի Պատմ-
գտանին պէսպէս Աստուածարանական ոգեշահ Խորհրդածու-
թիւնը՝ որք վերաբերին 'ի Խորհուրդս Մկրտութեան, Դրոշմի,
Ապաշխարութեան և Խոստովանութեան, Հաղորդութեան, և
Քահանայական Կարգի:

իբրև միակ Գլուխ քնդհանուք եկեղեցւոյ¹¹⁹,

ունէր իշխանութիւն սահմանադիր լինելու շնորհապարդեւ սրբարար խորհրդոց:

▲ . Որոց միջնորդութեամբ կատարին կամ մատակարարին (առաւալլենին):

¶ . Եկեղեցւոյ սրբանուէք (առաք էռք անոն) պաշտօնէից միջնորդութեամբ¹²⁰. վասն զի կարդ տալու կամ ձեռնադրելու՝ իրաւունք ունի միայն եպիսկոպոսն¹²¹, և զմիւս վեց խորհուրդքը կարող են կատարել թէ եպիսկոպոսն և թէ քահանայն¹²²:

▲ . Քանիքն ՚ի խորհրդոց հարկաւոր են անշուշտ ամենայն հաւատացելոց:

¶ . Չորքն, որք են՝ Մկրտութիւն, Դրոշ,
Ապաշխարութիւն, Հաղորդութիւն. վասրն զի այս խորհրդոցս շնորհաձիր ներգործեամբքն կարող է իւրաքանչիւր հաւատացեալ՝ ՚ի մեղաց սրբընիլ, ՚ի հաւատս զօրանալ, փրկութեան հասանել, և յաւիտենական կենաց կամ երանութեան արժանի լինել¹²³:

▲ . Կարգն, Պատակն, և Ակրծին Օծումն որոց հարկաւոր են:

Պ. ‘Երցա միայն՝ որք փափագ ունին կամ ըստուգապէս արժանաւոր համարեալ լինին զայնս ընդունելու¹²⁴:

Հ. Քանիքն ՚ի Խորհրդոց անկրկնելի են:

Պ. Երեքն միայն, այսինքն՝ Վկրտութիւնն^{*}, Դրոշն, և Կարգն¹²⁵:

Հ. Խոչ պատճառաւ չկրկնին այդ Խորհուրդքի:

Պ. Եյն պատճառաւ՝ որ ՚ի հոգիս ընդունողայն անջնջելի կնիք^{***} տպաւարեն¹²⁶: Իսկ Վկրտութիւնն՝ ունի և այլ երկու առանձին պատճառք, որը են

* Դանապիտան հերետիկոսք (որոց գլուխ եղած էր Դանապոս և պակողոսն Առամբիա քաղաքի Ավթրեկոյ յամին 311) կրկին մկրտէին և կրկին ձեռնադրեին զմիանդամ մկրտեալքը և զձեռնադրեալքը՝ երբ որ ընդունելին նորա զիւրեանց ազանդը: Մերժուեցան սոքա այն ժողովով՝ որ ըստ հրամանի Ոնորիոսի Կայսեր գումարուեցաւ Կարթագինէ քաղաքի մէջ յամին 411:

** Կանք բառիւս իմանան Աստուածաբանք զայն հոգեւոր կարողութիւնը՝ որով մարդն իրաւունք ստանայ գործելու կամ ընդունելու ինչ որ Աստուածոյ պաշտօնին վերաբերին. ուստի մկրտեալն ունի իրաւունք ընդունելու զԴրոշմը, որպէս և մկրտանալն ու գրոշմեալն՝ ընդունելու զայլ սրբազն խորհուրդքը: Կոյնպէս և Կարգաւորն ունի իրաւունք կատարելու և մատակարարելու զեկեղեցւոյ խորհուրդքը:

‘Ասիս՝ զի գեղ և ջնջիչ է Ակզենական
մեղաց¹²⁷ որ մի է:

Երկրորդ՝ զի պատկեր (օբնուկ) է մաշուն
Քրիստոսի¹²⁸, որ միանգամ միայն մեռաւ,
և կրկին չպիտի մեռանի¹²⁹:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

- Ճ. Ե՞րբ հաստատեց Քրիստոս զՄկրտու-
թեան Խորհուրդը:
- Պ. Ե՞րբ որ ինքն մլրտուեցաւ ՚ի Յորդանսան
՚ի Յովհաննէս Մկրտչէն¹³⁰:
- Ճ. Ե՞րբ հրամայեց ՚ի գործ գնել զայն:
- Պ. Յետ մաշուանն՝ և յարութեանն ՚ի մե-
ռելոց, երբ որ պատուիրեց Ըռաքելոց զը-
նալ աշակերտել զամենայն հեթանոսքը և
մլրտել զնոսա¹³¹:
- Ճ. Որով եղանակաւ պարտ է զՄկրտութիւնը
առնել:
- Պ. Պարտ է առնել ըստ հին սովորութեան
ընդհանուր եկեղեցւոյ, այսինքն՝ երեք

անդամ ընկղմելով * զերեխային առազանի
(Արքունիւնան Զբաց) մէջ **՝ յանուն ամենա-
սուրբ Երպորդութեան, և օր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ ¹⁵²:

- Հ. Երեք անդամ ընկղմելն զի՞նչ նշանակէ:
Պ. Օ. Քրիստոսի երեքօրեայ մահը և թա-
զումնը ¹⁵³:
Հ. Օ. այդ Խորհուրդը ընդունողքն՝ զի՞նչ
օգուտ ստանան:

- Պ. Ազատուելով բոլորովին 'ի մեղաց ծառայ-
ութենէն, և նորածնունելով (Ճերաբին Հասու-
ն-

* Առաջին երկոտասան դարերում մէրտութիւնն լիներ՝ առ-
հասարակ ամենայն քրիստոնէից մէջ՝ չեղամարք, որպէս այժմու-
սու լինի մեր՝ Յունաց՝ և այլ Նորելեան քրիստոնէից մէջ. իսկ
սկսեալ յերեքտասաներորդ դարէ՝ սովորական եղեւ Կատինաց-
ոց մէջ՝ հեղամարք միլտելն: Յառաջին ժամանակս քրիստոնէու-
թեան՝ կայր սովորութիւն և որովհամարք միլտելց: Եւ շատք
յԱստուածաբանից համարին, թէ այսու եղանակաւ մէրտուեցան
մի կամ կէս օրուան մէջ 3000 մարդկէ' 'ի զիւտրոսէ և յայլոց
Առաքելոց, յԵրուսաղէմ քաղաքի (Գործ. Բ. 41), ևս և բան-
տապետն և նորա ընտանիքն՝ 'ի Թօղոսէ, բանտի մէջ 'ի Փիլիպ-
պուս քաղաքի Մակեդոնիոյ (Գործ. Ժ. 33):

** Կան և այլ տեսակք միլտութեան՝ առանց Հրոյ. որպէս
Մկրտութիւն արեան, և այլն: Տես յԲնդաբէ. Հրահանգն. յէջ
301 — 303:

Եւ) հոգեալէս՝ ի կեանս շնորհաց, կոչին
յորդեզրութիւն երկնաւոր Աօրն՝ ժառանդ
լինելու նորա արքայութեան¹⁵⁴:

ԴՐՈՇՄ

Հ. Վարշմի Խորհրդոյն հաստատութիւնն երբ
եղեւ:

Պ. Այս Խորհրդուրդս՝ որ նախ օրինակաւ ցու-
ցուած էր յիշման Նոգւոյն սրբոյ ի Յոր-
դանան՝ Քրիստոսի վերայ¹⁵⁵, և ապա
խոստացուած էր ի Քրիստոսէ՝ յետ նո-
րա յարութեանն¹⁵⁶, հաստատուեցաւ յօրն
պենաւէկոստէի՝ երբ որ Նոգին սուրբ հրե-
ղեն լեզուօք իջաւ Եռաքելոց վերայ՝ Ախո-
նի վերնատան, մէջ¹⁵⁷:

Հ. Ի ժամանակս Եռաքելոց որպիսի արարո-
ղութեամբ կատարուէր այդ Խորհրդդ:

Պ. Այսիայն ձեռաց դրութեամբ և աղօթիւք.
վասն զի նոքա՝ յետ մլրաելոյ դհաւատա-
ցեալքը՝ ձեռք դնեին նոցա վերայ՝ ի նշան
զրոշմի, և աղօթէին: Եւ Նոգին սուրբ

ևս իջանէր յայնժամ դրոշմելոց վերայ
զգալի նշանաւ, այսինքն՝ տալով ոմանց լե-
զուախօսութեան պարզեւ, ոմանց՝ մարգա-
րէական ողի, ոմանց՝ զօրութիւն բժշկե-
լոյ՝ հրաշագործելոյ¹⁵⁸, և այլն:

• Այժմ առ մեզ որպէս կատարուի՝ և ո-
րոց ձեռամբ:

Պ. Աստ հին աւանդութեան եկեղեցւոյ՝ կա-
տարուի օծմամբ սրբալոյս իւղոյ (Գուգակ),
ի ձեռն քահանայից * . որք յետ մլրտելոյ
զերեխայն, իսկոյն դրոշմեն զնա՝ խաչաձե-
օծելով նախ՝ զնորա ճակատը *** յա-

* Ի սկզբան անդ քրիստոնէութեան, զԴրոշմի խորհուրդը
տային միայն Առաքեալք, և նոցա յաջորդքն, այսինքն՝ եպիս-
կոպոսունք (Գործ. ը. 14—16). վասն զի «Այս իսկ էր, ասէ,
Ասկէրերան, Առաքելցն վեհագոյն առաւելութիւնն» (Ի Մեկն.
Գործ. ճ. ը), բայց ապա այս պաշտօնս յանձնուեցաւ յեկեղե-
ցւոյ նաև քահանայից . որպէս զի և այն տեղերում՝ ուր շգտանին
եպիսկոպոսունք, անդրոշմ չմնան հաւատացեալք: Լատինացւոց
եկեղեցին՝ սկսեալ յերեքտասաներորդ դարէ՝ սահմանած է՝ Գը-
րոշմի խորհուրդը տալ մանկանց՝ ոչ յառաջքան զեօթնամեայ հա-
սակը: Խոկ մեր եկեղեցին պահելով զհին Առաքելական սովորու-
թիւնը, կանոնադրած է՝ տալ անմիջապէս զկնի մկրտութեան:

*** Թռէպէտ և 'ի կատարման խորհրդոյս՝ սովորութիւն է օծել

նուն ամենասուրբ Աշրովակութեան, և ա-
պա զզգայարանքը և զայլ մասունքը մարմ-
ֆիոյն՝¹³⁹:

Հ. Ե՞նչ օգուտ ստանայ դրոշմեալն:

Պ. Ընդունելով իւլ հոգւոյ՝ մէջ զուոգւոյն
սրբոյ ներքին օծութիւնը՝ զօրանայ այնու
և հաստատի ՚ի հաւատս, և անդամ որո-
շուելով Օխնուորեալ եկեղեցւոյ՝ իրեւ-
քաջամարտիկ զինուոր սպառազինի ընդ-
դէմ փորձութեանց, և պատրաստի հա-
մարձակապէս և առանց երկիւղի խոստո-
վանելու միշտ զՔրիստոսական սուրբ հա-
ւատը՝¹⁴⁰:

ոչ միայն զՃակատը մկրտուածին, այլև զգայարանքը, ևս և
զսիրտը և զմիկնամէջքը (պատմակը), և զերկու ոտից երեսքը.
բայց ըստ Աստուածաբանից՝ յատուկ տեղի Դրոշմի համարի ճա-
կատն, ըստ բանին «Եւ տեսի և ահա գառն կայր ՚ի վերայ լե-
րինն Սիոնի, և ընդ նմա հարիւր քառասուն և չորս հազար,
որ ունէին զանուն նորա, և զանուն հօր նորա գրեալ ՚ի վերայ
ճակատուց նոցա» (Յայտն. ժդ. 1): Այլ տեղեաց օծմունքն՝
ըստ ասելոյ ոմանց՝ սահմանուած են յեկեղեցւոյ առ ՚ի հանդի-
սաւորութիւն արարողութեանն: Գ. Տաթեւացին (՚ի գիրս
Հարց. Հատ. թ. պլակ. Հ.) համարի թէ նաև սրտի և քամակի
օծմունքն են ՚ի խորհուրդ Դրոշմի. և ՚ի քարոզագիրսն (՚ի Հատ.

ԱՊԱՀԽԱՐՈՒԹԻՒՆ

Հ. Ապաշխարութեան Խորհուրդն Երբ հաստատուեցաւ:

Պ. Երբ որ Քրիստոս՝ յետ իւրյարութեանն՝ երեելով Առաքելոց Խիոնի վերնատան մէջ, փցեց ՚ի նոսա՝ և ասաց «Առէք Ճողի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի» (Յովհ. ի. 22. 23):

Հ. Խ՞նչ օգուտ ստանայ Քրիստոնեայն՝ ապաշխարելով:

Պ. Արբի յԱնձնական մեղաց * , և վերստին

Հմեռ. էջ 576) ասէ թէ «Դրոշմն է՝ զոր ՚ի ճակատն և ՚ի գագաթն և ՚ի սիրտն դրոշմնք»: Խոկ այլք այլ կարծիք ունին. որոյ վերայ պիտի խօսիմք յատկապէս մեր «Ծիսապատում» անուանեալ գրքուկի մէջ:

* Անշնախն (կամ ըստ այլոց՝ Ներքորդութիւն) կոչին այն մեղքերն՝ զորս գործէ մարդ՝ յետ սրբըւելոցն ՚ի Սկզբնական մեղաց՝ մկրտութեամբ: Երբորդ գարու կիսում՝ Կովաստիանոս երեցն հռովմայեցի՝ որ գլուխ եղև Կովաստեան հերետիկոսաց, ուսուցանէր՝ թէ յետ մկրտութեան մահուչափ մեղօք մեղանչողաց՝ անօգուտ է ապաշխարութիւնն: և թէ՝ եկեղեցին չունի իշխանութիւն զմեղուցեալը յետ մկրտութեան՝ ընդունել յապաշխարութիւն կամ արձակել՝ ի մեղաց: Դատապարտեցաւ սա յայլ

արժանանայ արդարութեան շնորհացը՝
զոր կորուսած էր մեղանչելովն ¹⁴¹:

Հ. Ենչպէս պարտ է մեղաւոր քրիստոնէին
յԵպաշխարութիւն դիմել:

Պ. Կատարեալ զզօմամբ սրտի ¹⁴², խոստովա-
նելով Աստուծոյ՝ առաջի քահանայի՝ զիւր
գործած մեղքերը ըստ ամենայն հանգա-
մանացն ¹⁴³, և հաւատալով աներիքայ յու-
սով՝ թէ Քրիստոսի չարչափանաց և մա-
հուան արդեամբքն արձակումն ՚ի մեղաց
պիտի ընդունի յԵստուծոյ՝ բանիւ քա-
հանային ¹⁴⁴:

Հ. Ամենայն մեղք քաւին Եպաշխարու-
թեամբ:

Պ. Եյ՛ * վասն զի Աստուած խոստացած է՝

և այլ մասնաւոր ժողովոց՝ որք գումարուեցան զոռովի մէջ եր-
րորդ դարումը:

* Կան մեղքեր՝ որք յատկապէս համարին ընդդէմ չոգւոյն
սրբոյ, և Անբոռնէ կոչին յԵստուածաբանից, հայելով յայն բանն
զոր ասաց Քրիստոս. «Ամենայն մեղք և հայհոյութիւնք թողցին
մարդկան, բայց զչոգւոյն հայհոյութիւնն (այսինքն՝ հայհոյելն
պչոնին, կամ հայհոյութիւնն՝ որ պչոնույն) մի թողցի» (Մատթ-
աթ. 3:1): Բայց իմանալոյ համար՝ թէ ոյք են այն՝ մեղքերն, և

կամի և կարէ յամենայն մեղաց սրբել ըզ-
մեղ՝ երբ որ մեք մեղէն դառնամք առնա,
և հաստատուն առաջադրութեամք այլ ևս
չմեղանչելոյ՝ խոստովանիմք զմեր մեղքե-
րը ¹⁴⁵, և յանձն առնումք յօժարութեամք
սրտի կատարել զքահանայի նշանակած ա-
պաշխարանքը՝ առ ՚ի վճարումն ¹⁴⁶:

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Ն. Ե՞րբ սահմանեց ՚Քրիստոս զաղորդու-
թեան Խորհուրդը:

Պ. Յիւր մատնութեան զիշերին * , երբ որ
յետին ընթրիքում անձամք կատարելով
զայն Աստուածային սուրբ Խորհուրդը,

թէ ի՞նչ պատճառաւ Անիսով կոչին , կարդա զՅովհաննու Եր-
զընկացւոյ հանձարեղ բացատրութիւնը՝ զոր պիտի մէջ բերեմք
՚ի Ծանօթ . մահուչափ մեղաց : Իսկ Ռսկերերան «Անթողիլ մեղք
այն է , ասէ , զոր ոք գործիցէ՝ և պարծիցի» (՚ի Մեկն . Կողոս.) :

* Ել ոռաջին օրն եր բազարչակերաց՝ սկսեալ յ՛բեկոյէ
Ճինդշաբաթուն ըստ Մովսիսական օրինադրութեան (Մատ . իշ .
17: Մարկ . ժղ . 12: Ղուկ . իշ . 7):

պատուելը՝ միանգամայն և իշխանութիւն՝
տուաւ Առաքելոց, որ նոքա ևս այնուհետեւ
զնոյն ըստ այնմ օրինակի առնեն 'ի յիշա-
տակ այն մահուան՝ որով ինքն պիտի մե-
ռանելը ^{Հ.7}:

Հ. Այդ Խորհուրդի որովք նիւթովք կատա-
րուի առ մեզ:

Պ. Ըստ հնագոյն սովորութեան եկեղեցւոյ և
ըստ աւանդելոյ մեծ Քահանայապետին
մերոյ Արքոյն Գրիգորի Առաւարչչի՝ կա-
տարուի անխմոր (բառարձ) հացիւ և անա-
պակ (անչորդ) գինւով ^{Հ.8}:

Հ. Ի՞նչ կայ հաւատալի՝ այդ Խորհրդոց
մէջ:

Պ. Հաւատալին՝ այս Աստուածային անձա-
ռահրաշ Խորհրդոյս մէջ՝ այն է, զի զինի
սրբագործութեան հացին և գինւոյն, նոյն
իսկ հացի տեսակին տակ՝ կայ և բաշխի

* Աւելորդ խորութիւն է՝ կարմիր գինի որոնելն Պատարա-
գի համար. վասն զի « Աքեւանն Քրիստոսի նիւթ՝ գինին, ասէ Ա.
Ներսէս Շնորհալի, յորոց և իցե գունց՝ ընդունելի է, և թէ է
սիաւ, եթէ կարմիր, և եթէ սպիտակ» ('ի թղթ. առ Ալեքս):

Ճշմարտապէս կինդանաբար մարտինն Քրիս-
տոսի, և նոյն իսկ գինւոյ տեսակին տակ՝
կայ և բաշխի Ճշմարտապէս սրբարար ա-
րիւնն Քրիստոսի ¹⁴⁹:

Ա. ‘Եղքա՝ որք արժանապէս հաղորդին ամե-
նասուրբ մարմնոյ և արեան Տեառն, ո՞ւ
պիսի ոգեշահ և փրկաւէտ պտուղս վայելեն:

Պ. ‘Երելի մեղաց թողութիւն գտանեն,
Քրիստոսի հետ միանան հոգւով, և զյա-
ւիտենական կեանքը ժառանգելու արժանի
լինին * ¹⁵⁰:

Հ. Ո՞րպիսի հոգեւոր պատրաստութիւնք հար-
կաւոր են քրիստոնէի՝ արժանապէս ըն-
դունելոյ համար զուրբը աղորդութիւնը:

Պ. Հարկաւոր են՝ մաքրուիլյառաջուց խոս-

* Անարժանութեամբ զայս խորհուրդս ընդունողի համար՝
այսպէս գրէ Ս. Առաքեալն Պաւղոս. «Այսուհետեւ որ ուտիցէ
զհացս, կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ,
պարտական եղիցի մարմնոյ և արեանն Տեառն: Փորձեացէ մարդ-
զանձն իւր, և ապա՝ ի հացէ անտի կերիցէ. և՝ ի բաժակէն արք-
ցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստանս
(այսինքն՝ ուստի առաջարկ ու առաջարկ) անձնն իւրում ուտէ և ըմպէ. զի
ոչ խորէ զմարմինն Տեառն» (Ա. Կորն. ժամ. 27—29):

տովանութեամբ և ապաշխարութեամբ յա-
մենայն ծանր կամ՝ ի մահացու մեղաց,
հրաժարուիլ բոլորովին՝ ի մարմնական ան-
կարգ ըղձից, և ունել եռանդուն փափագ՝
կամ բորբոքուած սէր՝ զանձնը Աստուծոյ
նուիրելու, և զնորա պատառիրանքները
պահելու¹⁵¹:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

- Հ. Երբ հաստատուեցաւ Ամուսնութեան
Խորհուրդն:
- Պ. Երբ որ բացայայտ բանիւ վճռեց Տէրն
մեր Քրիստոս՝ որ ըստ Աստուածային
հրամանի՝ միմեանց հետ Ամուսնութեամբ
կապեալքն (այր և կին), չքաժանուին՝ ի
միմեանց *¹⁵²:
- Ճ. Ուրեմն յառաջ քան զայն՝ Խորհուրդ չէր
Ամուսնութիւնն:

* Ոմանք յԱստաւածաբանից հաւաքին, իժէ Քրիստոս՝ ի խոր-
հուրդ եկեղեցւոյ բարձրացոյց զԱմուսնութիւնը՝ գնալովն՝ ի
հարսանիսն՝ որ՝ ի կանա քաղաքի Գալիլեացւոց (Յովհ. ք. 2):

Պ. ԱՌ այլ՝ էր լոկ դաշնակցութիւն ինչ կամ
կապ անլուծանելի երկուց ամուսնակցաց
մէջ՝ սահմանուած յԵրարչէն ՚ի սկզբանէ
աշխարհի՝ մարդկային ազգի բազմասերուե
համար¹⁵⁵: Բայց Քրիստոս բարձրացոյց
զայն ՚ի կարգ շնորհաբեր Խորհրդոց¹⁵⁴:

Հ. Խնչով կատարուի առ մեզ այդ Խոր-
հուրդդ:

Պ. Եղօթիւք և օրհնութեամբ քահանայի,
որ զերկու հաւատացեալ չափահաս ան-
ձինքը (ո՞վ և ո՞չ է)՝ ըստ նոցա ազատ հա-
ւանութեան՝ կապակցէ միմեանց հետ ան-
բաժանապէս՝ ՚ի նշանակ հոգեւոր և մշարն-
ջենաւոր միաւորութեան Քրիստոսի ընդ
Ս. Եկեղեցւոյ¹⁵⁵:

Հ. Ենքակտելի՞ է ուրեմն կապն քրիստոնէա-
կան Եմուսնութեան:

Պ. Եյ՞ վասն զի ցորչափ կենդանի են ամուս-
նաւորք (այլ և ի՞ն)՝ կապուած են միմեանց
հետ Եստուածտղիր օրինօք Պատկի, և ար-
գելուած է թէ այր մարդուն և թէ կնոջն՝

յացլ ամուսնութիւն անցանել յառաջ քան
զամուսնակցի մահը *¹⁵⁶ :

ԿԱՐԳ.

Հ. Օ. Կարգի Խորհուրդը երբ աւանդեց
Քրիստոս:

Պ. «Եակ» յիւր մատնութեան դիշերին, երբ
որ յետ սահմանելոյ վերնատան մէջ զշա-
ղորդութեան Խորհուրդը, քահանայա-
գործութեան իշխանութիւն տուաւ Առա-
քելոց՝ ասելով «Օ այս արասջիք առ իմոյ
յիշատակի ¹⁵⁷»: Եւ ապա 'ի Համբարձ-
ման օրն, երբ որ Զիթենեաց լերան վերայ
օրհնելով զամենայն աշակերտքը ¹⁵⁸ տուաւ
նոցա Քահանայապետական բարձրագոյն
աստիճան կամ իշխանութիւն ¹⁵⁹:

Հ. «Եռքա» ոլք Կարգի արժանանան, որպիսի

* Օրինաւոր է և երկրորդ և երրորդ ամուսնութիւնն՝ յետ
մահու ամուսնակցին. իսկ աւելին քան զայն՝ ոչ: Տես յընդարձ.
Հրահանդն. յէջ 325. 326:

իրաւունք կամ հոգեւոր իշխանութիւն ընդունին:

Պ. Ընդունին իրաւունք՝ եկեղեցւոյ մէջ սպասաւորելու, եկեղեցական սուրբ պաշտօններ կամ սրբազնն խորհուրդներ կատարելու, ժողովուրդ հովուելու, ամենեցուն հոգւոյ փրկութեան ճանապարհը ուսուցանելու, և այլն ¹⁶⁰:

Հ. Քանի աստիճանն ունի Կարգն:

Պ. Եօթն ¹⁶¹:

Ե. Դռնապանութիւն:

Ի. Դպրութիւն (կամ Ընթերցողութիւն):

Գ. Երդմնեցողութիւն:

Դ. Թահնկալութիւն:

Ե. Կիսասարկաւագութիւն:

Զ. Արկաւագութիւն:

Է. Վրահանայութիւն *:

* Իւրաքանչիւր աստիճանի յատկացեալ ուրոյն ուրոյն գործքերը տե՛ս Ն. Լամբրոնացւոյ «Խորհրդածութիւն ՚ի կարդս եկեղեցւոյ» անուանեալ գրքի մէջ (յէջ 83—85). ևս և Սլրւազնակատար Մ. Կաթողիկոսի «Ուղեցոյց քրիստոնէական վար-

Հ. Եթէ աւելի քան զեօթն չեն կարգի աստիճանկըն, ուրեմն պատուժվ միայն զանազանի ՚ի Քահանայէ՛ Եպիսկոպոսն, և յեպիսկոպոսէ՛ Կաթողիկոսն:

Պ. “Եռքա զանազանին ՚ի միմեանց՝ ոչ միայն պատույ աստիճանաւ, այլև Խշանութեամբ Կարգի, և իշխանութեամբ Կրաւանութեան *¹⁶²:

Հ. Ո՞րպէս:

Պ. Եպիսկոպոսն՝ իւրեան սեպհական՝ հոգեւոր պաշտօններով և իրաւաբանութեամբ՝ վերագոյն է քան զՔահանայն¹⁶³, և Կաթողիկոսն՝ իւրեան սեպհական՝ սրբազան պաշտօնների գերազանցութիւն, և “Եախապետական ծայրագոյն իշխանութեամբն՝ զոր ունի իւր ընդհանուր ազգին վերայ՝ ՚ի

դապետութեան» անուանեաւ գրքի մէջ, որ ՚ի մօտ ժամանակս տպագրութեամբ՝ ի լոյս պիտի ելանէ:

* Բառ իւս իբառաբնութեան՝ Աստուածաբանք իմանան զդատելոյ իշխանութիւնը ըստ իրաւանց և օրինաց, որ Լատիներէն՝ իտունուսէ ասի:

Հոգեւորս, վեհագոյն է քանի զեպիսկոպոսն,
և է Գյուլիս Վահանայապետական՝¹⁶⁴:

Դ. Ո՞րպիսի արարողութեամբ տայ եպիսկո-
պոսն զլարգը կամ զլարգի աստիճանըը:

Պ. Եղօթելով, և ձեռք դնելով ընծայուած
անձնի վերայ՝¹⁶⁵, ևս և մեռնով օծելով
զձակատը և զերկու ձեռքը խաչաձև՝ թէ
որ ընծայուածն ընդունելու է Վահանայ-
ութեան աստիճանն՝^{* 166}:

Ն. Ո՞րպիսի անձանց արժանն է Կարգ տալ:

Պ. Միայն այնպիսի անձանց, որք բաւական
գիտութիւն ունելով՝ կարող են զայս ևս
վարժել հոգեշահ ուսմանց մէջ, և որք վր-
կայուած են ՚ի ժողովրդականաց՝ վասն
իւրեանց սրբութեան և անարատութեան՝
թէ ՚ի վարս, թէ ՚ի բարս և թէ ՚ի հա-
ւատս՝¹⁶⁷:

Հ. Ոյք անարժան համարին Կարգի:

Պ. Տգիտ՝ անուսումն՝ մոլի՛ անպարկեշտ և

* Յեպիսկոպոսական ձեռնադրութեան՝ սովորութիւն է ըդ-
դակաթնը օծել:

շարագործ մարդիկ, ևս և այնպիսիք՝ որք
դեռ հասակի կատարելութիւն չունին, և
որք ըստ մարմնոյ ևս արատաւորք կամ պա-
կասաւորք են ¹⁶⁸:

ՕՇՈՒՄՆ ՀԻՒԱՆԴԱՅ

- Հ. Հիւանդաց Օծման Խորհուրդն Երբ ա-
ւանդեցաւ ՚ի Վրիստոսէ:
- Պ. Երբ որ նա զհիւանդները բժշկելոյ կարո-
ղութիւնը և իշխանութիւնը տուաւ Առա-
քելոց՝ ասելով «Օ հիւանդս բժշկեցէք»
(Մատ. Ժ. 8):
- Հ. Խնջու համար սահմանուած է այդ Խոր-
հուրդդ:
- Պ. Օծանր և վտանգաւոր հիւանդները զօ-
րացուցանելոյ համար՝ յուսով թեթևա-
նալոյ ՚ի մարմնական ցաւոց, և թողու-
թիւն գտանելոյ՝ թեթև մեղաց ¹⁶⁹:
- Հ. Առաքեալք որպիսի եղանակաւ սովոր էին
կատարել զայդ Խորհուրդդ:
- Պ. Առվոր էին կատարել, երբեմն՝ միայն ձեռք

գնելով հիւանդաց վերայ՝ և աղօթելով¹⁷⁰,
և երբեմն ևս՝ իւղով օծելով զնոսա յա-
նուն Տեառն¹⁷¹:

Հ. Մեր Հայաստանեայց Ա. Եկեղեցին զո՞րն
յայն երկու եղանակներից որոշած է այդ
Խորհրդոյդ կատարման համար:

Պ. Օ առաջինը, որ է՝ աղօթիք միայն, Ե-
ւատարան կարդալով, և Ա. խաչի Տեառ-
նագրութեամբ կատարել 'ի ձեռն քահա-
նայից *¹⁷²:

ԸՆՈՐՀԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Հ. Օ ի՞նչ է Ընորհարաշխութիւն:

Պ. Ե՛ գերբնական շնորհաց կամ պարզեաց

* Այժ քրիստոնեայք զայս Խորհուրդս կատարեն նաեւ օրհ-
նութեան իւղով, օծելով զհիւանդի աչքերը՝ ականջները՝ հո-
տոսուելիքը՝ բերանը՝ երիկամունքը՝ ձեռքերը և ոտքերը: Իսկ
թէ ի՞նչ պատճառաւ խափանուած է՝ կամ լաւ ևս ասել չէ
հաստատուած մեր ազգի մէջ իւղոյ գործադրութիւնն՝ 'ի կա-
տարման Խորհրդոյս, ուն' 'ի Հանդիսարանն Ուղղափ. չայ. Եկեղ.
(Ճշ 364 — 369): որ է յօրինուած Սրբազնակատար Կաթո-
ղիկոսին մերոյ Տ. Մատթեոսի, և տպուած է 'ի Կոստանդնու-
պոլիս յամին 1854:

բաշխումն առ անդամն Օյնուորեալ եկեզցցւոյ * յԱստուծոյ ձրի բարելարութենէն՝ Քըիստոսի արդեամբքն ¹⁷⁵:

Դ. Գերբնական Շնորհքն կամ Պագեքն զի՞նչ են և 'ի քանի տեսակս բաժանին:

Պ. Են պէսպէս Աստուածաղդեցիկ փրկաւէտ ներգործութիւնք կամ զօրութիւնք, որոց և զլիսաւորագոյն տեսակքն՝ երկու են, և կոչին Հաճոյաբոր Շնորհք, և Զբէոչոն կամ Զբէոչուր Շնորհք **:

Ե. Ոյք են Հաճոյաբոր Շնորհք:

Պ. Այնքիկ են՝ որք զմարդը արդարացուցանելով՝ առնեն Աստուածահաճոյ ¹⁷⁴, որպիսի են այն արդարացուցիչ և սրբարար շնորհքներն՝ որք տուեալ լինին սրբազն Խորհրդոց միջնորդութեամբ՝ միայն վասն ընդունողի օգտին և փրկութեանն ¹⁷⁵:

* Այսինքն՝ առ հաւատուցելու:

** Թէպէտե երկու տեսակ շնորհքն ևս ձրիաբար առւեալ մնին, սակայն զանազանութեան համար՝ սովորութիւն եղած է առ Աստուածաբանս՝ զմինը Հաճոյաբոր կոչել, և զմիւսը՝ Զբէոչուր կամ Զբէոչուր:

Ա. Այլ են Զբէկան կամ Զբէտուուր անուանեալ
Ենորհքներն:

Պ. Եյնոքիկ են՝ որք բաշխին յատկապէս ոչ
վասն ընդունողի օգախն կամ պարծանացն,
այլ՝ վասն հասարակաց շինութեան, կամ
վասն տնօրինելոյ զայլոց փրկութիւնը, որ-
պիսի են՝ ձիլքն կամ պարզեքն Դմաստու-
թեան, Գիտութեան, Բժշկութեան,
Մարգարեութեան, Աքանչելագործու-
թեան, և այլն¹⁷⁶:

Թ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՑ

Ա. Օյնչ է Յարութիւն մեռելոց:

Պ. Ե՛ գործ Սստուածային կարողութեան,
որով մեռելոց մարմինքն ունին յառնել
(Քնոդանառաւ) յօրն վերջին դատաստանի՝
միաւորուելով իւրեանց հոգւոց հետ^{* 177}:

* Զմարմնոց յարութիւնը անկարելի համարեին և չընդու-
նէին ոչ միայն հեթանոս փիլիսոփայք՝ Եպիկուրեանք և Ստոյի-
կեանք (Գործ. ժէ. 18. 32), այլև աղանդաւոր Հրեայքն՝ Աս-
դուկեցիք (Մատթ. իր. 23), ևս և Հիմնոս և Փիդիսոս (Ը.

Հ. Յարուցեալ մարմինքն արդարոց զնոյն
հանգամանքը պիտի ունենան՝ զորս ունէին
՚ի մահկանացու վիճակիս:

Պ. Ո՛չ. այլ պիտի զգենուն («Պանա») նոքա նո-
րանոր Աստուածապարզեւ ձիրքեր կամ
սքանչելի կատարելութիւնք. վասն զի պի-
տի լինին առաւել ևս պայծառ փառաւոր՝
գեղեցիկ՝ երազաշարժ՝ նուրբ՝ թեթև՝ զօ-
րեղ, և միանգամայն անախտ՝ անցաւակիր՝
անապական և անմահ¹⁵⁸:

Ժ. Վերջին ԴԱՏԱՍՏԱՆ

Հ. Ո՞ինչ է Ա երջին Դատաստանն:

Պ. Ե՛ հրապարակաւ իշխանական դատողու-
թիւնն ՚Քրիստոսի ՚ի կատարածի աշխար-
հիս, որ պիտի լինի երբ որ գայ նա միւ-

Տիմ. թ. 17. 18)՝ որք էին ՚ի զբէից հաւատացելոց, և հետեւ
սողք նոցա՝ Կերինթեանք, Մանիքեցիք, և այլք: Սոցա մոլո-
րութեանց գէմ խօսելով Յ. Առաքեալն Պաւլոս յառաջին թըլ-
թին առ Կորնթացիս (գլ. ժե)՝ զորաւոր բանիւք հաստատե-
զյաբութեան Շմարտութիւնը:

սանգամ յերկնից Աստուածային զօրութեամբ և փառօք, և նոյն իսկ մարմնովն՝ որով ծնաւ 'ի Կուսէ և համբարձաւ յերկը¹⁷⁹:

Հ. Օ՞՞ր մարդիկը պիտի դատէ նա:

Պ. Պիտի դատէ զամենայն մարդիկը առհասարակ, թէ զկենդանիքը և թէ զմեռածները¹⁸⁰, արդարապէս հատուցումն առնելով իւրաքանչիւրոց գործոցը համեմատ¹⁸¹:

Հ. Ո՞րպիսի հատուցումն պիտի լինի արդարոց, և ո՞րպիսի՝ մեղաւորաց:

Պ. Երդարքն պիտի հրաւիրուին 'ի Վրիստոսէ յերկնից ալքայութիւն՝ զյաւիտենական կեանքը և երանութիւնը ժառանգելու հոգւով և մարմնով, և մեղաւորքն պիտի մերժուին 'ի գժոխս՝ զյաւիտենական տանջանքը կրելու հոգւով և մարմնով¹⁸²:

Հ. Ո՞րպիսի բարիքներ վայելելով պիտի երջանկանան արդարք արքայութեան մէջ:

Պ. Պիտի երջանկանան՝ յանչափս զմայելով՝ Աստուծոյ և Աստուածայնոց գէմյանդիման (պայծառ) տեսութեամբ¹⁸³, կենակից

լինելով միշտ Քրիստոսի հետ, պարակցե-
լով Եստուծոյ հոգեղբէն պաշտօնեից (այ-
սինքն՝ հրէլուրակաց) ¹⁸⁴, և այն:

Հ. Մեղաւորաց տանջանքն զժոխոց մէջ՝ ի՞նչ
պիտի լինին:

Պ. Պիտի լինին՝ զրկումն իսպառ յԱստուա-
ծային երանական տեսութենէն, խղձի
տապնապ (անհանդապատճեն), անփարատելի
տրամութիւն և ցաւ, կատաղի յուսահա-
տութիւն, և այն ¹⁸⁵:

Հ. Երբ պիտի լինի աշխարհիս կատարածն:

Պ. Եւդ մեզ զիտելի չէ, այլ միայն Եստու-
ծոյ: Ուստի ասաց Քրիստոս աշակերտացն
«Ո՛չ է ձեզ զիտել զժամն և զժամնակ»
զոր Հայր եղ յիւրում իշխանութեան
(Գործ. ա. 7). և Պաւղոս Առաքեալն
զրեց Թռեսաղընիկեցի քրիստոնեից «Օ՛
Տեռա» * իրեւ զգող զիշերի այնպէս հա-
սանէ» (ա թռեսաղ. ե. 2):



* Այսինքն Քրիստոսի Երիւրը դուրեւն ժամանակն ի կատա-
րածի աշխարհիս:

ԳԼ. Բ

ՅՈՅՍ

Հ. Յոյսն զի՞նչ է:

Պ. Ե՛ այնպիսի հաճութիւն կամ յօժարութիւն հոգւոյ, որով սպասեմք ստանալ զայն ամենայն բարիքները կամ զանձառելի պարգևը՝ զորս խոստացած է Աստուած տալիւր սիրելեացը՝ի հանդերձեալ (Քուշ) աշխարհին *¹⁸⁶:

Հ. Ո՞յք են խոստացուած բարիքն կամ պարգևն:

Պ. Ե՞ն կեանք և հանգիստ անվախճան, և երանութիւն մշտնջենսաւոր:

Հ. Որո՞ց միջնորդութեամբ խոստացաւ Աստուած զայնպիսի բարութիւնքը:

Պ. Խոստացաւնախ՝ մարդարեից բերանով, և

* Այսինքն՝ այն անանցանելի կենաց վիճակին մէջ, որ սիստի յաջորդէ այս անցաւոր կենացս:

ապա աւելի յայտնի՝ իւր մարմնացեալ Որդւ-
ւոյն՝ Յիսուսի Քրիստոսի՝ բերանով¹⁸⁷:

Ա. Քրիստոս եղբ հրատարակեց զիսուտ-
մունքները:

Պ. Երբ դեռ երկրի վերայ էր, մանաւանդ եղբ
որ վարդապետել (Քուշուշել) սկսաւ Երանու-
թեանց վերայ՝ ասելով վճռաբար. «Երա-
նի աղքատաց հոգւով, զի նոցա է աղքայ-
ութիւն երկնից: Երանի սգաւորաց, զի
նոքա միսիթարեսցին» և այն (Մատ. ե.
3. 4—11):

ԳԼ. Գ

ԱԼՅ

Ն. Օքնէ է Աէրն Աստուծոյ:

Պ. Ե՞ւ այնպիսի յօժարութիւն կամաց կամ
ձգտումն ոգւոյ, որով սիրեմք զԱստուած
վասն իւր, այսինքն՝ վասն այն՝ զի է նա
ամենայնիւ կատարեալ, անսահման բարի,
բռն բարութիւն, և մեր իսկ վերջին վախ-
ճան՝¹⁸⁸:

Ն. Օքնէ սպահանջէ Աստուծոյ Աէրն՝ի մէնջ:

Պ. Պահանջէ՝ նորա կամացը հնաղանդել, և
զնորա օրէնքը կամ՝ պատուիրանկները պա-
հէլ՝¹⁸⁹ խորշելով՝ի չարէն, և գործելով
զբարին՝¹⁹⁰:

Ն. Վանի տեսակ Աստուածային Օրէնք կան:

Պ. Երկու յորոց մին է Բնուին—Աստուածային,
և միւսն Դրակոն—Աստուածային:

ԲՆԱԿԱՆ — ԱՍՏՈՒԾԱՅԻՆ ՕՐԵՆՔ

- Հ. Ո՞ր է բնական — Աստուծային Օրէնքն:
- Պ. Ե՛ մտաց ձանաչողական զօրութիւնն կամ խիղճն, որ ՚ի բնէ (՚ի հանդենէ) անգիր տպաւորուած է մարդոյ սրտի մէջ՝ վասն ցուցանելոյ նմա՝ թէ որ բանն բարի է՝ և որն չար, որն ուղիղ՝ և որն թիւր, որն իրաւացի՝ և որն անիրաւ, և այն¹⁹¹:
- Հ. Ամենայն մարդիկ ունին զայդ անգիր օրէնքը:
- Պ. Այս. վասն զի ամենաբարի Արարիչն ՚ի սկզբան անդ ՚ի ստեղծման ժամանակին, տուած է նոցա զայս բնական լոյսը¹⁹². որպէս զի այնու կարողանան նոքա իմանալ որոշաբար՝ թէ որոց (Էնքբաներէ) պիտոյ է, հետեւել, և յորոց (Էնքբաներէ) խորշիլ (հեռանալ, հրաժարուիլ)¹⁹³:
- Հ. Այլ որպիսի Օրէնքներ յառաջացան կամ կարեն յառաջանալ յայդ Օրինաց:
- Պ. Ամենայն մարդկային Դրական Օրէնք, կամ կանոնադրութիւնք, թէ Եկեղեցա-

կանք՝ որք սահմանին յԱկեղեցական Խշ-
խանութենէ, իւրաքանչիւր քրիստոնեայ
ազգաց մէջ, և թէ Քաղաքականք՝ որք
հաստատին ՚ի Քաղաքական Խշխանութե-
նէ, իւրաքանչիւր Տէրութեանց մէջ^{194:}

Հ. Պարտական են քրիստոնեայք և այնպիսի
Օրինաց հնազանդել:

Պ. Այսու պարտական են հնազանդել՝ իբրև
Եստուծոյ հրամանի^{195:}

Հ. Ա ասն էր:

Պ. Ա ասն երկուց պատճառաց: Մի՛ զի այն
օրէնքներն եւս՝ Տնունդք են թնական Օրէն-
քին (Խոհմանուն)՝ զոր Եստուած ի՞նքն է
տպաւորած իւրաքանչիւր մարդոյ սրտի
մէջ^{196:} Եւ միւս՝ զի օրինադիրքն և կա-
նոնադիրքն (օրինաւոր ողբեոր Տեսուչք
ժողովրդոյ և օրինաւոր թագաւորք կամ
Խշխանք)՝ յԵստուծոյ կարգուած են, և
նորա պաշտօնեայքն կամ տպասաւորքն
են^{197:}

ԴՐԱԿԱՆ — ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ՕՐԵՆՔ

Հ. Ո՞ր է Գյրական — Աստուածային Օրէնքն,
և 'ի քանիս բաժանի:

Պ. Ե՛ բովանդակութիւնն այն ամենայն Աստ-
ուածատուր պատգամաց և հրամանաց՝ որք
գրով աւանդուած են, և բաժանին 'ի Հին
և 'ի Կոր ¹⁹⁸:

Հ. Ո՞ր է Հին Օրէնքն, և ո՞ր Կորն:

Պ. Հին Օրէնք ասին այն ամենայն Աստուածա-
ւանդ պատուիրանկքներն՝ որք հրատարա-
կուած են Մովսիսի և այլոց մարգարեկց
ձեռամբ, և պարունակին Հին Կտակարա-
նի մէջ ¹⁹⁹: Եւ Կոր Օրէնք կոչեն այն ամե-
նայն Քրիստոսաւանդ վարդապետու-
թիւնքն և պատուիրանկքներն՝ որք հրա-
տարակուած են Արքոց Առաքելոց միջնոր-
դութեամբ, և պարունակին Կոր Կտակա-
րանի մէջ ²⁰⁰:

Հ. Հին Օրինաց պատուիրանկքներն քանի
տեսակ են:

Պ. Երեք, որք են

- Ա. Յարուսէնն, որը բարուց ուղղութեան վերաբերին:
- Բ. Շօհասէնն, որը զկրօնի արտաքին պաշտամունքը ցուցանեն (այսինքն՝ Շէսէրը):
- Գ. Դասուասագունականն, որը դատաստանական գործոց վերաբերին, և զյանցաւորաց պատիժքը որոշեն:
- Հ. Հարկ է քրիստոնէից զայն Օրէնքը պահել:
- Պ. Զօհիսական և զԴատաստանական Օրէնքները հարկ չեն պահել²⁰¹, այլ միայն զԴարոյականքը՝ որը պարունակուած են Տաննաբանեայ պատուիրանաց մէջ:
- Ա. Վասն էր քրիստոնեայք պարտական չեն պահելու զօհիսական և զԴատաստանական Օրէնքները:
- Պ. Վասն այն՝ զի Զօհիսականքն ըսկ օրինակ կամ ստուերը գոլով՝ Քրիստոսաղիր Խորհրդոց²⁰², յետ Քրիստոսի խաչելութեան և մահուան դադարեցան (իստանուեցան) ²⁰³: Կոյնապէս և Դատաստանականքն անպէտ

եղեն և ջնջուեցան, որովհետեւ Վրիստոս՝
փոխանակ ժամանակաւոր վարձուց և պատ-
ժոց՝ յաւիտենական վարձ և պատիժ սահ-
մանեց²⁰⁴:

Հ. Տարոյական Օրինաց պահպանութիւնն
վասն էր հարկաւոր է և քրիստոնէից:

Պ. Ասն այն՝ զի Տարոյական Օրէնքն ոչ
միայն չխափանուեցաւ 'ի Վրիստոսէ, այլ
և կարեռագոյն բացայայտութեանց յաւե-
լուածներով վերստին հաստատուեցաւ.²⁰⁵:

Հ. Ոյք են Տամնաբանեայ պատուիրանքն Ես-
տուծոյ:

Պ. Եյսոքիկ են

Ե. Մի եղեցին քեզ այլ աստօւածք՝
բաց յինէն:

Ի. Մի արասցես կուոս:

Գ. Մի առնուցուս զանուն Աստուծոյ
քո 'ի վերայ մնոտեաց:

Դ. Յիշեա սրբել զօր շաբաթու *

* Շաբաթաօպահութիւնն՝ ըստ աւանդելոյ Մեկնչաց՝ ըս-
կըսուած էր յԱղամայ ժամանակէն, և սովորութեամբ կայր

Ե. Պատուեա զհայր քո և զմայր:

Զ. Մի սպանաներ:

Է. Մի շնար:

Ը. Մի գողանար:

Թ. Մի սուտ վկայեր:

Ժ. Մի ցանկանար տան ընկերի քոյ,
մի անդոյ նորա, մի կնոջ նորա, մի
ծառայի նորա, մի անասնոյ նորա,

միշտ Հրէեց մէջ, բայց այս պատուիրանաւա՝ որոշագոյն ևս սահ-
մանուեցաւ 'ի ժամանակս Սովորի:

Առ Քրիստոնեայս՝ 'ի սկզբանէ անտի օրէն եղեւ Շաբաթի
տեղ պահել զՄիաշաբաթ: Եւ այս՝ այնու պատճառաւ, զի (որ-
ուէս յայտնի է յանփոփոխ և 'ի մշտնչենաւոր աւանդութենէ)
յետ համբարձմանն Քրիստոսի, սահմանագրութեամբ: Առաքելոց՝
շաբաթանաւոյ (հանգստանաւոյ) օր նշանակուեցաւ Միաշաբաթն,
յատկապէտ 'ի պատիւ յարութեան Ցեառն մերոյ Ցիսուսի Քրիս-
տոսի: որոյ վասն և օրն այն՝ Ցունական ձայնիւ կոչուեցաւ Գի-
րեհնի (ըստ մեզ՝ Կիւրուին), որ նշանակէ Տերուոնի, Տերուոնիոն:
(Տես 'ի Յայտն. ա. 10: Խղնատ. 'ի թղթ. առ Մագն.):

Յետ Քրիստոսի, յառաջին դարու, երեւեցան Քրիստոնէից
մէջ այնպիսի աղանդաւորք՝ որը ասէին, թէ պարու է Կիւրակէի
տեղ զՇաբաթ օրը սուրբ պահէլ ըստ Հրէական օրինաց: որոյ
վասն կոչուեցան նորա Շաբաթանիւն կամ Շաբաթապահ: և յԱ-
ռաքելոց՝ ժողովով մերժուեցան 'ի 51 թուին: (Տես 'ի Գործ.
գլ. ժե):

և մի՛ ամենայնի՛ զի՞նչ ընկերի քո
իցէ (Ել. Ի. 3—17: բՕրին. է.
7—21):

Հ. Ասոր Օրինաց պատուիրանկիներն ունի՞ն
աւելի կատարելութիւնք քան դաշն Օրի-
նաց պատուիրանկիները:

Պ. Այսուհետեւ վասն զի՞ ոչ միայն խորշեցուցանեն
(առժելէն) զմեզ յամենայն տեսակ մեղաց
կամ՝ ի մոլութեանց, այլ և հրամայեն գե-
րազանցագոյն Աստուածահամոյ առաքի-
նութիւնք գործել, և այլն ²⁰⁶:

Հ. Մեղաց տեսակըն քանի՞ են:

Պ. Երկու, Ակզրնական, և Կերպործական:

Հ. Ո՞ր է Ակզրնական մեղքն:

Պ. Է՛ Կախամարդոյն Ադամայ այն առաջին՝
անձնական և միանգամայն հաղորդական *

* Անցնուին և չաղորդուին ասի մեղքն Ադամայ վասն այն՝
զի Ադամ սկզբնահայր գոլով մարդկութեանս, մեղանչելով
լնդդէմ պատուիրանին Աստուածոյ՝ կորոյս իրաւամբք ոչ միայն
զիւր սկզբնական արդարութիւնը, այլ և զայն ամենայն գերբ-
նական պարսկաքը և զանախտութեան ձիբքերը՝ զօրս ըստ խոստ-
մանն Աստուածոյ պիտի ժառանգէին նորա սերունդքն՝ եթէ մնայր

մեղքն՝ որով մահուչքակի մեղանչեց նա ընդ-
դէմ իւր ամենակարող Արարէն ²⁰⁷:

Հ. Ե՞նչ էր Աղամայ մեղքն:

Պ. Ա՞նչնազանդութիւն պատուիրանին Աս-
տուծոյ ²⁰⁸. վասն զի իւր ազատ կամօքն յօ-
ժարեցաւ ուտել իւր կնոջ Եւայի հետ
յայն ծառի պտղէն՝ զոր Աստուած արդե-
լած էր ²⁰⁹:

Հ. Այդ մեղաց հետեւանքն կամ պատիժն ի՞նչ
եղև:

Պ. Եզել դատապարտութիւնն մեր Կախա-

նա յանմեղութեան, որպէս գրեն ամենայն ողջամիտ Աստուա-
ծաբանք՝ հայելով՝ ի բանս Աստուածաշունչ դրոց:

Ի սկզբան հինգերորդ դարու Գեղադիս անուն աշանդապետ
ոնն Անդղիացի, և ապա նորա աշակերտքն՝ Յուլիանոս (Գեղա-
գեան) և Վեղեստիոս, հակառակեցան այս միաձայն վարդապե-
տութեան ընդհանուր եկեղեցւոյ՝ պնդելով, թէ Ադամ մեղան-
չելովն՝ իւր անձին միայն վնասեց՝ և ոչ թէ իւր զաւակացն կամ
բովանդակ մարդկային ազդի, թէ՝ մարդիկ առանց մեղաց ծնա-
նին. թէ՝ նորածին մանկանց հարկաւոր չէ մլրատիւ՝ ի մեղաց
սրբըւելոյ համար, և այլն: Սոցա այսպիսի մոլորութիւնքն հեր-
քուեցան յամենայն ողջամիտ վարդապետաց՝ նախ մասնաւոր ժո-
ղովոց մոջ՝ որք գումարուեցան յԵրուսաղէմ, 'ի Կարթագէնէ,
'ի Հռովմ, և յայլ տեղիս, և ապա Եփեսոսի՝ երրորդ տիեզերա-
կան ժողովոյն մէջ, յամի Տեառն 43 1:

Ճնողաց (Աղամայ և Եւայի) թէ ըստ հոգ-
ւոյ և թէ ըստ մարմնոյ, թէ այս կենաց և
թէ հանդերձեալ կենաց վիճակի մէջ²¹⁰, որ
և տարածուեցաւ իրաւամբք՝ նորա ամե-
նայն զաւակաց վերայ՝ իրրեւ հայրենի ժա-
ռանգութիւն²¹¹:

Ճ: Ուրեմն ամենայն մարդիկ ընդ սկզբնական
մեղքք ծնան և ծնանին:

Պ: Այս^{* 212}, որպէս վկայէ և մարդարէն Պա-

* Յայս ընդհանուր կարգէ մարդկային ծննդոց 'ի բաց առ-
նուշ պարտ է բոլորովին զԱստուածամայր Կոյսն Մարիամ, որ
առանձին իմն Աստուածային չնորհիւ ազատ պահուելով 'ի մե-
ղաց անտի 'Նախահօրն՝ Էր սուրբ և մաքուր ամենայնիւ յառա-
ջին վայրկենէ անտի յղութեանն. ուտի անսարատ քարոզի և
տօնախմբի յընդհանուր եկեղեցւոյ՝ ոչ միայն նորա ծնունդն, այլ
և յղութիւնն:

Զայս ճշմարտութիւնս՝ որ աւետարանուած էր և գարբիել
հրեշտակապետի բանիւն առ Ա. Կոյսն «Մի՛ երկնչիք՝ Մարիամ,
զի գտեր նորհն յԱստուածոյ» (Ղուկ. ա. 30), բարեվայելչապէս
հռչակէ և մեր Հայաստանեայց Ա. Եկեղեցին՝ հոգենուադ եր-
գովքս. «Բանաւոր երկիր՝ Տիրուհի, անդաստան՝ մաքուր 'ի
փչոց մեղաց: — Անթառամ ծաղիկ՝ անդաստապարտ շառաւիդ՝
վերաբուսեալ յարմատոյն Յեսեւայ» (Ծի Շարակ.): Եւ հոգե-
կիր Հաւատորն մեր՝ Ա. Գրիգոր Կարեկացի 'ի նոյն միտս առէ.
«Մեղուցելոյ կնոյն առաջնոյ առանց յանցանաց զաւակ գովե-

ւիթ՝ ասելովն «Ենօրէնութեամբ յղացաւ,
և 'ի մեզս ծնաւ զիս մայլ իմ» (Ապամ.
Ճ. 7):

Դ. Ենչով կարեմք մեք սրբըւիլ 'ի Վկղբնական
մեղաց:

Պ. Սուրբ աւաղանի մլլտութեամբն²¹⁵, ըստ

ցար: — Երանեալ ևս գու 'ի լեզուս անբիծս ընտրական շըր-
թանց, ծաղիկդ Յեսոնայ պտղոյն մեր կենաց, որ 'ի գրութենէ
խառնութեան քառից յեղանակեալ տարերաց՝ անկցորդ մնա-
ցեր 'ի մասնէ հողածնելոցս հասարակաց, ոչ բերօղ ծանրու-
թեան ընակակիր համաստեղծս կարեաց» ('ի Ներբ. Կուսին):

Ընդունուած է նոյնակէս յընդհանուր եկեղեցւոյ և յամենայն
ուղղամիտ Ասոււածաբանից, թէ ըստ իմիք այնպիսի առանձին
շնորհ վայելեց և կարապեան և մկրտիչն Քրիստոսի Յովհաննէս՝
սրբըւելով 'ի սկզբնական մեղաց յառաջ քան զծնանիլն՝ մօր
արգանդին մէջ, երբ որ Տիրամայր Այսմն (որոյ արգանդումն էր
Սրբիչն մեղաց՝ Բանն մարմնացեալ) ողջոյն տուաւ Եղիսաբէթի:
(Ղուկ. ա. 40 — 44): Այս ևս ծանրուցուած էր նոյն հրեշտա-
կապետի բանին՝ որ առ հայրն նորա Զաքարիա. «Հոգւով սըր-
բով լցցի անդստին յորովայնէ մօր իւրոյ» (Ղուկ. ա. 15):

Երեմիա մարգարէի համար ևս հաւանին ոմանք ասել, թէ
նոյնակիսի առանձին շնորհի արժանացած էր (Տես առ Կիւրզի Եր.
'ի Կոչ. ընծ. գլ. 7): Եւ զայս ասեն՝ հայելով նոյն իսկ մարգա-
րէի գրածին. «Եղեւ բան Տեառն առ իս՝ և ասէ. Ոինչչեւ ըս-
տեղծեալ էիր յորովայնի, գիտէմ զքեզ. և մինչչեւ ելեալ էիր
յարդանդէ, սրբեցի զքեզ» (Երեմ. ա. 4. 5):

որում և Վրիստոս Տէրն մեր ասաց . «Ո՞՛
հաւատայ և մլրտիցի՝ կեցցէ» (Մարկ .
ԺՂ. 16):

Հ . Ո՞ր է «Աերդործական մեղքն, և 'ի քանի՞ս
բաժանի:

Պ . Ներբերական մշու ասին մեր ամենայն անձ
նական մեղքերն՝ զորս գործեմք մեր կենաց
ընթացքի մէջ 'ի չափահաս հասակի, և
բաժանի յերկուս, այսինքն՝ 'ի Մահու-
չափ, և 'ի «Աերելի»:

Հ . Ո՞յր են Մահուչափքն, և ո՞յր «Աերելիքն:

Պ . Մահուչքի կոչին այն ամենայն ծանր ծանր
մեղքերն՝ որը կատարեալ հաւանութեամբ
կամաց գործին և արհամարհանօք Ասո-
ուածային պատուիրանաց*. և «Երեւէլ կոչին

* Թէպէտե ամենայն մեղք ընդդէմ են Աստուծոյ (այսինքն՝
Եռանձնեայ Աստուածութեան), բայց ըստ առանձին նկատման
Աստուածարանից՝ տկարութեամբ գործեալ մեղքերն՝ համարին
ընդդէմ Հօր Աստուծոյ ամենակալի . անդխութեամբ գործեալ
քըն՝ ընդդէմ Որդւոյ, որ է Դմաստութիւն Հօր . և գործեալքն
կամաւ՝ նենդութեամբ կամ չարութեամբ սրտի և արհամարհա-
նօք պատուիրանացն Աստուծոյ՝ ընդդէմ Հոգւոյն սրբոյ : որ է
Աղբիւր բարութեան և թողութեան : Եւ այս վերջնքս յառ
կապէս Անիսոնէ կոչին, և են հետեւեալքս .

այն ամենայն թեթև և ոչ շատ վեասակար մեղքերն՝ որք կամ անգիտութեամբ գործին, կամ տկարութեամբ, և կամ ակամայաբար²¹⁴:

Վ. Գլխաւորքն ՚ի մեղաց՝ ո՞յք են:

Պ. Այնոքիկ են՝ որք կարող են ծնող և աղբիւր լինել այլ ևս բազմատեսակ մեղաց:

Ա. Յուսահատութիւն, այսինքն՝ բոլըրովին անյօյս լինել ՚ի գտանելոյ յԱստուծոյ զիւղութիւնն մեղաց և դիմկութիւն հոգւոյ:

Բ. Յանդպնաբար յուսալ յողորմութիւնն Աստուծոյ՝ առանց մոտածելոյ զնորա արդարութիւնը:

Գ. Հակառակել ընդդէմ ծանուց: ալ ձշմաբառութեան:

Դ. Չարաշար նախանձ ընդ բարիս եղբօր:

Ե. Անկարեկից խատարառութիւն:

Զ. Անզեղջ յամառումն՝ ՚ի մեղս:

Յովհաննէս Երզնկացին՝ որ մեր Մեկնիւ վարդապետաց միննէ, ընդարձակ խօսի այս յիշատակուած մեղքերի վերայ՝ գրելով այսպէս, «Թէպէտ ամենայն մեղք ընդդէմ Աստուծոյ է՝ որ երիս է և մի, սակայն յատկապէս ասի ոմն (ընդդէմ) Հօր, ոմն՝ Որդւոյ, և ոմն՝ Հոգւոյն սրբոյ. քանզի ՚ի Հայր ոք մեղանչէ տկարութեամբ, և յՈրդի՝ տգիտութեամբ, վասն զի Հայր իշխանութիւնն է, և Որդի՝ իմաստութիւն: Արդ՝ ընդդէմ իշխանութեանն՝ տկարութեամբ, և ընդդէմ իմաստութեանն՝ տգիտութեամբ ոք մեղանչէ. և թէպէտ մեղք է, բայց թողութիւնն ունի, և ոմն զտղիտու-

Հ. Վանի են այնպիսի մեղքերն։
Պ. Եօթն։

Ա. Ապարառութիւն։
Բ. Կամանձ։
Գ. Բարկութիւն։
Դ. Շօռվութիւն։

Թիւնն։ Խսկ՝ ի Հոգին սուրբ մեղանչէ ոք նենդութեամբ՝ յորժամ կարէ և դիտէ հակառակել չարեաց, բայց նենդութեամբ միայն զայն ընտրեաց . . . Անբողլէ ասաց զայսպիսիս Քրիստոս. զի ոչ երբէք ընթեռնումք՝ ի գրոց՝ եթէ թողեալ իցէ, որպէս Մելքիսեդէկ Անհոյր և Անհոյր ասի. ոչ եթէ ոչ ունէր (հայր և մայր), այլ զի ոչ գրեցաւ։ Դարձեալ՝ զի հակառակի աղբեր թողութեանն, որ է Հոգին սուրբ։ Դարձեալ՝ վասն անկարութեան մարդոց, զի հաղիւ կարէ ոք պատրաստիլ առ՝ ի յընդունել զշնորհս՝ վասն ծանրութեան մեղացն, որ է ընդդէմ Հոգւոյն սրբոյ։ Դարձեալ՝ Մէ՛ Բողչէ ասելն՝ երկակի է, երբեմն՝ թէ Ո՛չ թողեալ լինի, որպէս մեղք հրեշտակաց և կորուսելոց մարդկան անթողլի. և երբեմն ըստ այնմ է անթողլի՝ զի ոչ ունի պատեհութիւն յինքեան թողուլ, թէպէս ըստ Աստուծոյ պատեհութեանն՝ ամենայն մեղք է թողլի։ Բայց ամենայն մեղք մահուշափ՝ անթողլի է, զի հակառակին շնորհացն՝ ոչ թողուն զմեղաւ։ Եւ այս լինի ըստ վեց եղանակի, որք են տեսակք մեղաց՝ ի Հոգին սուրբ. առաջին՝ անյուսութիւն, երկրորդ՝ լրութիւն, երրորդ՝ ճանաչել զՃշմարտութիւն՝ և հակառակել, չոր-

Ե. Ազահութիւն:

Զ. Որկրամութիւն:

Է. Բղախոհութիւն:

Դ. Կարէ մարդ աղաստ մնալ բոլորովին յամենայն և երգործական մեղաց:

Պ. Ոչ²¹⁵ բայց կարէ զգուշանալ 'ի կամաւու

բորդ՝ նախանձ եղլայրական սիրոյ. հինգերորդ՝ խստասրտութիւն. վեցերորդ՝ անապաշաւ մեռանել»:

«Գոյ 'ի տեղիս (յայս) տարակուսանս, եթէ զիանը ոչ թողցէ զմեզս՝ յորժամ ապաշխարից ոք. և այն զի ասաց՝ Ո՛չ կամոմ զմահ մեղաւորին, այլ զգարձն. մանաւանդ թէ նոքա՝ որ զայն բան ասացին (այսինքն՝ հայհայեցն Հոփասյն), բազումը 'ի նոցանէ ապաշխարեցին հաւատովը՝ և արդարացան: Արդ՝ կամ թէ ոչ թողու դատաւորն՝ զի ցուցցէ եթէ որչափ ծանր է յանցանքս այս. և թէ թողուցու՝ յայտ արասցէ թէ որչափ է բարերարութիւն նորա: Եւ դարձեալ՝ (ոչ) եթէ ոչ թողու եթէ ապաշխարեցցեն. այլ զի որ զգեն հայհայութեան զգենու, յափշտակեալ է զմիսո նորա, և ոչ տայ թոյլ գառնալ յապաշխարութիւն. վասն որոյ կանխաւես զօրութեամբն իմացեալ զանդարձութիւն նոցա՝ ասաց զայս...: Դարձեալ՝ որ զջոգին սուրբ հայհայէ՝ մի թողցի նմա, մի յայսմ աշխարհի և մի 'ի հանդերձելումն: Հայհայող սուրբ Հոգւոյն նոքա՝ են՝ որ անզեղջ մեռանին մեղօք՝ ոչինչ համարելով զջոգւոյն վարդապետութիւն, որ խրատէ դառնալ 'ի մեղաց: Արդ՝ այսպիսիքս յորժամ մեռանին՝ թողութիւն ոչ ունին յայսմ աշխարհի. զի ոչ խոստօվանեցան» և այլն ('ի Մեկն. Մատթ. դլ. ժլ.):

- լրապէս մեղանչելոյ: Եւ այս լինի՝ ոչ թէ
միայն մարդոյն յօժարակամ ջանիւքն, այլ
և օգնականութիւն Աստուծոյ շնորհացն²¹⁶.
զոր պալտ է աղօթիւք * ինդիւել²¹⁷:
- ♦. Ե քանիս բաժանի Աղօթքն:
- Պ. Յերկուս, այսինքն՝ 'ի ♦ լրապարակական,
և յԱռանձնական:
- ♦. Ո՞ր է ♦ լրապարականն, և ո՞ր Առանձնա-
կանն:
- Պ. ♦ լրապարակական աղօթքն այն է՝ զոր
հրապարակաւ (յայտնապէս) այլ աղօթաւո-
րաց հետ 'ի միասին առնեմք եկեղեցւոյ մէջ,
սահմանադրուած ժամանակներում***²¹⁸:

* Զաքանի մի մասնաւոր գիտելիքները աղօթից վերայ տես
ընդարձակ հրահանգի մէջ. յէջ. 88 — 91:

** Ս. Եկեղեցին հայելով՝ ի բան մարդարէին Դաւթի «Եօթն
անգամ յաւուր օրհնեցից զքեզ (Ասզմ. Ճ՛լ. 164), սահմա.
նած է 'ի սկզբանէ անտի եօթն կանոնական ժամերգութիւնք
յիւրաքանչիւր աւուր, որք են՝ Գիշերացինն, Առաւօտեանն,
Երրորդ ժամուն, Աեցերորդ ժամուն, Խններորդ ժամուն, Երե-
կոյեանն, Հանգստեանն: Սոցա վերայ յաւելացան ապա և այլ
երկուք, այն է՝ Արևատալին և Խաղաղականին: Եւ այս՝ այնու
խորհրդով, որ 'ի գէմս խրաքանչիւր անձանց ամենասուրբ Եր-

Իսկ Առանձնականն այն է՝ զոր առանձնաբար (Հանունք) կատարեմք մեր սենեկաց մէջ,
կամ այլ պատշաճաւոր տեղերում երբ և
իցէ²¹⁹:

Հ. Եղօթից զիսաւորն ո՞րն է:

Պ. Ե՛ Տէրունական աղօթքն «Հայր Ար» , որ
թէեւ համառօտ է , բայց բովանդակէ իւր
մէջ զամենայն կարևոր խնդրուածքը մար-
դոյ համար :

Հ. Վանի խնդրուածք կան այն աղօթքի մէջ:

Բորդութեան՝ կատարուին երեք երեք ժամերգութիւնը ըստ
այսմ կարդի

Գիշերայինն	՚ի դէմն Հօր Աստուծոյ :
Վեցերորդ ժամուն	
Հաներորդ ժամուն	՚ի դէմն Որդւոյն Աստուծոյ :
Երեկոյեանն	
Արեագալին	՚ի դէմն Հոգւոյն սրբոյ :
Երրորդ ժամուն	
Խաղաղականին	

(Տէս ՚ի Ժամագիրս):

Պ. Եօթն. վասն զի խնդրեմք այնու յերկնաւոր ձօրէն յԵսաուծոյ՝

Ա. Որ արժանացուցանէ զմեղ՝ սուրբ առնել (Քառասորեւ) զնորա ամենասուրբ անունը՝ որդիաբար ծառայելով նմա:

Բ. Որ նա ինքն մեր սրտի մէջ թագաւորէ շնորհօք, որպէս զի չծառայեմք մեղաց:

Գ. Որ զօրացուցանէ զմեղ՝ հնազանդութեամբ կատարել զնորա կամքը երկրիս վերայ, այնպէս՝ որպէս հրեշտակըն կատարեն յերկինս:

Դ. Որ տայ մեղ զմեր հանապազորդ (Հան օրուան) հացը, այսինքն՝ ինչ որ հարկաւոր է մեր ժամանակաւոր կենաց պիտոյըի համար:

Ե. Որ զմեր պարտիքը (յանցոնց) թղու, որպէս և մեր մեր պարտապանաց, (նոցա՝ ոք յանցուոր էն առ մէն) թողումք:

Օ. • Որ թոյլ չտայ մեղ փորձութեանց
մէջ անկանիլ:

Ե. • Որ պահէ զմեզ 'ի չարէն, այսինքն՝
յորպիսի և իցէ՝ 'ի չար գործոց, 'ի
չար խորհրդոց, և այն *:



* Զայս աղօթքս ճոխ իմաստիւք մեկնած ևն ընդարձակօրէն
հոգենհանձար վարդապետքն մեր՝ Եղեշէ, և Ն. Լամբրոնացի-
բայց զհամառօտ և գդիսրիմաց բացատրութիւնը, կարող են ա-
շակերտք և ամենայն ընթերցասէրք տեսանել «Ուղեցոյց քրիս-
տոնէական հաւատոյ» անուանեալ գրքի մէջ. զոր յառաջ ևս
յիշաստակած եմք:



«Եւ մեք այսուհետև շնորհօք Տեառն մերը Յիսուսի Քրիստոսի զհետ գնացուք վարդապետութեան Աստուածային Գրոց, անմոլորապէս 'ի նոսա հայելով, և տեսանելով զիմաստն՝ որ 'ի նոսա : Եւ նախ առաջին զանձինս կրթելով 'ի Հրահանգս նոցա ոգեշահս, և ապա այլոցն ուսուցանելով» :

Ս. Շնորհընէ

('ի Մելին . Բղն . Կանոնի . յառաբարձրն) :



Հիմա մասն պաշտու անձն առաջ գլու այլ է կը
համեմ առաջարկու պատճենը ուշադրութեան վրա առաջից
ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ
առաջ մասն այլ պատճենը առաջարկու պատճենը առաջից
աշխարհու առաջ պատճենը այլ պատճենը առաջից մասն ա
վեճութիւնք

(Տարբար բարեա այս պատճենը)



«Ո՛չ եթէ որպէս մարդկան հաճոյ թուէր՝ եղաւ հաւատոցս հաստատութիւն, այլ յամենայն զրոց ազդոյ ազգոյ բան ժողովեալ՝ 'ի մի վարդապետութիւն հաստատութեան կատարին» :

(Կէ-րէն Երանա . 'ի Կոն Ընծ . Քւ . Ե) :

«Պաշեսցո՞ւք զբարւոք աւանդն՝ զոր 'ի հարանցն առաք, երկիրագանելով Հօր և Որդոյ և Սուրբ Հոգւցն, Որդուով՝ զշայր, և Հոգւով՝ զՈրդի ծանուցեալ. յորս մկրտեցաքն, յորս հաւատացաքն, առ որս եւ կաքն» :

(Գ. Տէֆէն Աստուածածոն . յԱռա սրա , Ֆառ ժան) :





ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ

ՅԵՍՈՒԵՏՈՒՆ ԳՐՈՅ *

ԵՒ Ի ԱՐԲՈՅ ՎԵՐԴԵՎԵՑԵՑ

Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿԱՐԳԵԼՈՅՆ ԲԱՆԻՑ

1

Ո՞ւատթ. իդ. 8. 10. Յովէ. ժդ. 13: Ա. Կորն. դ. 11:

— Կատարեաց (Քրիստոս) զարդարութիւնս ամենայն ՚ի լիառու և ՚ի պարծանս մարդկութեանս մերում,
և եղեւ վարդապետ ամենայն արարածոց (Գ. Լուսաւորիչ ՚ի Յաճախապատում. Ճառ ժդ.):

— Եմենայն հաւատոց մերոց հիմն հաստատուն և
ճշմարիս՝ է ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս. և ՚ի
վերայ այսր վիմի հաստատեալ են հաւատք, և ՚ի վե-

* Աստուածաշունչ Գրոց վկայութեանց տեղերը միայն նշանակել ըստ գլխոց և համարոց՝ բաւական համարեցաք, ըստ որում ամենայն բարեկարգ վարժատանց մէջ և ամենայն ընթերցասէր մարդոց մօտ գտանի այժմ նոյն Ա. Գիրքն:

լայ հաւատոյն՝ շինուածն մինչեւ 'ի կատարած իւր:
Բայց հիմն նա ինքն է 'ի սկզբանէ շինուածց ամենայ-
նի (Յակոբ Մծբն. ճառ առ. վասն հաւատոյ):

2

Վատթ. դ. 23: Գործ. առ. 1:

— (Քրիստոս). Ըուսաւոր վարդապետութեամբ ըս-
տուգեաց ճշմարիտ հաւատս յամենասուրբ Երրորդու-
թիւնն (Գ. Լուս. 'ի Յաճախ. ճառ ժդ):

— Ա, ախանկար օրինակս ու նին հովիւքն հոգևորք
զհովիւն քաջ՝ որ եղ զանձն իւր 'ի վերայ ոչխարացն,
որ բանիւք ասաց և ուսոյց, և արդեամբք կատարեաց
(Ս. Շնորհ. 'ի Մեկն. Ա. Պետ. ճառ դ. 'ի Յորդոր.):

— Գիտեմբ՝ եթէ Որդին Աստուծոյ եկն, և ետ մեզ
միտս, զի ծանիցուք զճշմարիտն: Մերս զԱստուածիւն-
սութիւն Որդւցն ասէ՝ որով ուսոյց զնոսա, և որով
իմաստնացան (նոքա) և նորոգ միտս ստացան... և այ-
նու ծանեան զճշմարիտն Հայր և զճշմարիտ Հոգին
(Կոյն. 'ի Մեկն. Ա. Յովհ. ճառ թթ.):

— Եկաց լնդ նոսա զաւուրս քառասուն, և ուսոյց
զարբայութեանն Աստուծոյ անճառ գիտութիւնն (Կ.
Լամբ. 'ի Ճառն Համբարձ.):

3

Վատթ. իշ. 19. 20: Մարկ. ժդ. 15:

— Ո նթացան (Առաքեալքն) լնդ տիեզերս ամենայն

մինչև 'ի ծագս երկրի լի' առնել զբարողութիւն բանին կենաց (Գ. Լուս. Անգաթանգ.):

— Որ կոչեցեր զտիեղերս 'ի հաւատս ճշմարիտս ընտրելովք քո Առաքելովք ('ի Շարակ.):

— Հաճեցար (Տէր) մարմնանալ վասն մեր, և ուսուցեր մեզ սրբովք Առաքելովք հաւատս անրիծս՝ որ 'ի սուրբ Երրորդութիւնն (ի Մեծ Մաշտոցն):

4

Ա. Թեսաղ. թ. 13: Յուդ. 'ի Կաթող. 3: Բ. Թեսաղ. թ. 14:

5

Ա. Կորն. ժդ. 13:

— Արարածք (մարդիկ) ճշմարիտ սիրովն մերձենան առ Աստուած՝ հաւատով և յուսով և պատուիրանաւ պահութեամբ. . . (Ապա և մեզ) յամենայնի գոհանալով զբարերարութեանն նորա խնամոց, խոստովանողք և գաւանողք ճշմարտութեանն լիցուք (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ թ.):

— Ամենայն գործք առաքինութեան 'ի հաւատոց և 'ի յուսոյ և 'ի սիրոյ բղիսեն: Զի թէ զհաւատ և զյօյս և զսէր արժանացուք ստանալ, դիւրաւ զամենայն առաքինութիւնս ուղղիցեմք և կամարալք Աստուծոյ լինիցիմք (Խոսրով 'ի Մեծն. Ժամակարգ.):

6

Հոռմ. ժ. 8—11:

— Հաւատոյն անուն մի է, բայց կրկնն ունի զօրութիւն։ Առաջին՝ դաւանութեան հաւատն, որ է խոստովանութիւնն 'ի սուրբ Երրորդութիւնն, զոր ընկալաւ իւրաքանչիւր ոք յաւաղանէն։ Երկրորդ՝ հաւատ այն է, որ զբանս՝ զոր չոգին սուրբ խօսեցեալ է բերանով Մարգարիցն և Առաքելոցն և եկեղեցւոյ Վարդապետօք՝ զոր ՚ի զիրս սուրբս գրեցին, չհամարի առասպելս և սուտ։ այլ հաւատայ՝ թէ ճշմարիտ են և ուղիղ այնպէս՝ որպէս թէ աչօք իւրովք տեսանէ զամենայն, զեղեալմն, և զլինելոցն, և զոր ենն (Կ. Շընորհ.՝ ՚ի Թաղթ. Ընդհ.):

7

Բ. Տիմոթ. դ. 14. 15:

— Համբուրեսցէս զիս 'ի համբուրից բերանոյ քո. զի առատ են ստինք քո քան զգինի. . . . Եւ ովէ հարսն, թէ ոչ եկեղեցի հեթանոսայ. կամ ովէ փեսայն, եթէ ոչ Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ. . . . Եւ զի՞նչ երկու առատ ստինքն, եթէ ոչ (երկու) կտակարանք Աստուծոյ, որ արբուցանեն զամենայն տղէտս հոգեոր կաթամբն զիտութեանն (Գ. Լուս. յԱգաթ.):

— Ճ' շմարտութիւն հաւատոյ լըս է աչաց մտացլն. . . որ զառաջնորդական զմիտսն լուսաւորէ, և Գրովք սրբովք յանդիման կացուցանէ զաներևոյթսն (Գ. Լուս. ՚ի Յաճախ. ճառ դ.):

— (Պարտ է) կշռել և խորհել, ասել և առնել որ

՚ի հաճոյս Աստուծոյ աւարտի ճշմարիտ վկայութեամբ
սուրբ Գրոց, և մի անկանել ՚ի բազմախոցյ ինդիրս՝
որ վրիպեցուցանեն ՚ի ստոյգ հաւատոց (Նոյն. անդ.
Ճառ. դ.):

— Օօրութիւնն Աստուծոյ Գրոց գիտութեամբն
ծանուցեալ լինի, և զնոյն ինքն զԱստուած չկարէ ոք
գիտել կամ պաշտել որպէս պարտն է՝ առանց Գրոց
գիտութեան (Ս. Ընորհ. ՚ի Մեկն. Բ. Պետ. Ճառ. դ.
՚ի Ժորդ.):

8

Աշ. իդ. 3: Բ. Օրին. լր. 7: Սաղմ. ՀԷ. 3—6:
Առկ. ա. 2: ՅովՀ. իա. 25: Ա. Կորն. ժա. 2:
Գործ. ժդ. 4: Բ. Թեսաղ. ը. 14:

— Ամենայն նահապետացն շատակեաց եղեալ ՚ի
բարերարութենէն Աստուծոյ, սերեալք բազմացան.
Նոյնպէս և յետ ծննդոցն յերկարակեացս արարեալ,
զի որք Աստուծովն ստացան՝ պատմեսցեն հարք որդոց,
զի իբրև պատուիրանք զգուշացուցիչք լինիցին՝
առ ՚ի ծանօթ առնել զնոսա Աստուծոյ. որպէս ասա-
ցաւն՝ թէ Հարցմիր զՀարս քո և պատմեսցեն քեզ (Գ.
Լուս. յԱզաթ.):

— Իսուն հարի առ ՚ի քննել զսա (պյսինքն՝ ըզ-
Գիրսն Գործոց Առաքելոց), զի զու գիտողն սորին
զարթուցից, և ոչ թողից ՚ի թաքուստ մնալ այսչափ
պատուական գանձուցս մեծաց՝ որ ոչ ինչ նուազ քան
զաւետարանն շահեցուցանէ զմեզ բարձրագոյն իմաս-

տիւք և ուղղութեամբ աւանդութեանց . . . : Ե գտա-
նել 'ի սմա և վասն Աստուածահաճոյ գործական վա-
րուց, այլ և աւանդութիւնս յցի պիտանիս. զոր թէ
ոչ աստի, ոչ այլ ուստեք մեղ լինէր գիտելի (Յ. Աս-
կեր. 'ի Մեկն. Գործ. Ճառ ա):

9

Ի. Պետ. դ. 1. 2: Կողոս. ա. 23: Ա. Պետ. ա.
10 — 12:

— Հոգոյ շնորհացն Աստուածութեանն արժանի
եղեն (մարգարէք) ուսուցանել ամենեցուն զօրէնս Աս-
տուածոյ, և զկամ և զկարգս նորուն ուղղութեան երկ-
նաւոր հրամանացն ամենայն ուրեք առաջի գնելով. որ-
պէս նոցուն իսկ մատեանք մարգարէութեանն հաւաս-
տեաւ պատմեն (Գ. Լուս. յԱգաթ.):

— Առեալ հոգելից և Աստուածամնիս Աստուածա-
տեսացն զԱստուածատուր աւետիսն, և զրով հաս-
տատեալ և զմի աւանդութիւն՝ չորս աւետարանս
սահմանեալ. ոչ օտարագցնս 'ի միմեանց արուեստա-
խոսնալ, այլ ամենազէտ Հոգովովն Աստուածոյ՝ զմիաւոր
Ճշմարտութիւն հրամանացն Քրիստոսի պատմեալ
(Նցն. անդ):

10

Ի. Պետ. ա. 21: Ա. Թեսաղ. ը. 13: Ա. Կորն.
ը. 12. 13:

— Հաւատամիք և 'ի սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի

կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս, և 'ի Մարգարէս,
և յԱւետարանս (ի Ճանդ.) :

— Հոգւովն Աստուծոյ խօսեցան (մարգարէքն)
պատգամն, ոչ ըստ իւրեանցն ախորժակաց՝ այլ ըստ
նախագուշակելց 'ի նոսա Հոգւոյն. և որբան ինչ միան-
գամ վկայութիւնս զրեցին նոքա զմարդանալցն Քրիս-
տոսի և զանպարտ չարչարանաց նորա, Հոգին Էր՝ որ
թելադրէր 'ի շրմունս նոցա: Զի որպէս Պողոս Քրիս-
տոսիւ խօսէր առ որս բարբառէրն, նոյնգունակ և նո-
քա՝ Հոգւովն: Եւ զայս Դաւիթ տիրապէս խոստովա-
նի. Լեզու իմ, ասէ, որպէս զրիչ երազագիր զրչի,
սովաւ զրել զգործս իմ թագաւորին (Ս. Ճնորհ. 'ի
Մեկն. Ա. Թետ. Ճառ. թ):

— Զէին Մարգարէիցն բերանքն, այլ Հոգւոյն սըր-
բոյ ազդեցութիւնն. որպէս եղէքն ո՛չ զոր կամի՝ զրէ,
այլ զոր ձեռն հրամայէ, նոյնպէս և Մարգարէիցն լե-
զուն ո՛չ զոր կամմէր՝ բարբառէր, այլ զոր Հոգւոյն սըր-
բոյ ճոխութիւն տայր հրաման (Սեբեր. Ճառ. թ):

11

Երանելի Առաքելոցն ընկալեալ 'ի վարդապետու-
թենէ Ճմարտութեանն, նախ կարօտական անձանցն
օգուտ, և ապա օրինակ աշակերտեցելոցն, բարձեալ
տանէին. երբեմն առանձինն, և երբեմն ժողովովք գու-
մարելովքն զփառսն Քրիստոսի բարձրացուցանէին...:
Զոր և մարգարէքն յառաջագոյն գործէին, որք 'ի լե-

ըինս՝ յանապատս՝ յայրս՝ և 'ի քարածերպս վիմաց
զԱստուածեղէն կրօնիցն ծառայութիւն հարկանէին։
Նշյնպէս և ամենայն Հարբն, որ առաջնորդեցան յԱ-
ռաքելական կանոնացն, և յինքեանց անձանցն բերին
օրինակս վերջնոց։ Ուստի և երանելիս այս (Գրիգոր
Լուսաւորիչ) բարձեալ տանէր զաւանդելոցն պատիւ,
և ամենայն ումեք մատուցելոց առ նա վնոյն պատուի-
րեալ գուշակէր։ Եւ այսպէս յառաջ ամենայն Աստ-
ուածեղէն գանձուցն վայելըութեամբք լցեալ՝ պարար-
տացուցանէր ամեթութեամբք զամենեսեան (Ագաթ.
'ի Պատմ.)։

— Եյնպիսի սրբազան վարս պիտոյ էր մեզ ստա-
նալ, որ գիրս ո՛չ պիտոյանայր, որպէս Նշյն և Աբ-
րահամոն, և նոցին որդուց և թոռանց, որպէս Յովե-
րայն և Մովսիսին և Առաքելոցն, որ փոխանակ գրոց
'ի սիրտս նոցա բնակէր (Աստուած) և ուսուցանէր, և
'ի տախտակս սրտին գրէր, և ո՛չ 'ի գիրս (Գ. Նարեկ.
'ի Յառաջար. Մեկն. Երգ.)։

— Եռաքեալքն զյոլով ժամանակս 'ի տաճարին
զառ 'ի Քրիստոսէ նոցուն կատարէին աւանդեալ զիսոր-
հուրդս եթէ զաղօթից, եթէ զշաղորդութեան։ Իսկ
այժմ կանոնական սահմանաւ զմեզ պարսպեալ զգու-
շացուցին նոցին աւանդապահչք և ժառանգորդք՝ ո՛չ
երթալ 'ի ժողովարանս և 'ի մատունս Հրէից կամ
չեթանոսաց (Յովհ. Իմաստ. յԱտենաբ.).

— Օ այս դաւանութիւն և զե ևս անձառագոյնս,

Առաքելոցն սրբոց որպէս Աստուածային ժառանգութիւն որդի ՚ի հօրէ առեալ՝ հասուցին մինչև առ մեզ
(Ա. Շնորհ. ՚ի Մեկն. Բ. Պետ. Ճառ զ. ՚ի յորդ.):

— Ճշմարիտ և սուրբ հաւատ ոչ միայն զխոստովանութիւն սուրբ Երրորդութեանն ասէ, այլ և զշաւատալն եկեղեցական բարեկարգ աւանդութեանց (Կ. Լամբ. ՚ի Մեկն. Պատ.):

— Ընդէր արդեօք մինչ ՚ի վախճան զգործս նորա (Պաւլոսի) ոչ զրեաց (Առկաս), թերեւս ասիցէ ոք: Ասեմք՝ թէ բաւական էր այս որոց կամին ՚ի միտ առնուլ, թէ և ոչ զրեցեալքն սցյալիսիք իցեն: Եւ դարձեալ՝ զի առ հարկաւորմն և եթ և ոչ ՚ի ճառագրելինչ Աստուածաբանքն փութային. այլ և բազում ինչ անզիր աւանդեցին (Յովհ. Ոսկել. ՚ի Մեկն. Պործ. Ճառ առ):

Տես և ՚ի համարն 8:

12

Յովհ. ժդ. 16. 17. 26: ժդ. 13: Ա. Տիմոթ. դ. 15:

— Ա արդապետ է (Հոգին սուրբ), ուսուցանել և յիշեցուցանել զառ ՚ի Քրիստոսէ ասացեալն ամենայն ճշմարտութեամբ... Ա երակացու է արթուն՝ Հրահանգիչ կարգաց եկեղեցւոյ (Կ. Լամբ. ՚ի Ճառն դալատ. Հոգւցին սրբոյ):

— (Եկեղեցին) իրը զաշակերտ հրահանգեալ Հոգւցին Աստուծոյ՝ փախչի ՚ի նենգութենէ (Գ. Նարեկ. ՅԱՂՈԹ. ՚ի բանն չէ):

— Գեղեցիկ է այս եկեղեցւոյ սրբարար և օգնական
և բարեխօս Հոգին սուրբ, և վարդապետ. վասն որոց
ասաց Փրկիչն. «Նա ուսուցէ ձեզ զամենայն ինչ զոր
ասացի ձեզ: Ո՞չ ուսուցանէ միայն, այլ և յիշեցու-
ցանէ զոր ինչ ասացի ձեզ»: Զի՞՞ն եթէ այլ վարդա-
պետութիւնք են Քրիստոսի, և այլ Հոգւոյն սրբոյ, այլ
մի և նոյն (Կիւրեղ Երուս. ՚ի Կոչ. Ընծ. Պլ. Ժղ):

— Իբրև զլեառն յաւիտենական՝ անհարուածելի է
՚ի գիմամարտից. ըմբռնէ զշոգեռս իբր զշնարադրու-
թիւն մեծին արուեստի. անմեղս և անլոիպութիւնս
(իմա՝ առանց վրիպելց) ըստ Քրիստոսի հետոցն ըն-
թանայ (Գ. Նարեկ. յԱղօթս ՚ի բանն չե):

13

Յակոբ. թ. 14. 17. 20. 26:

— Որպէս զլուխ՝ առանց անձին յարմարութեան
ո՞չ կարէ կրել կենդանութիւն, և ո՞չ անձն առանց գըլ-
խոյ, նոյնպէս և հաւատ առանց գործոց, և գործք ա-
ռանց հաւատոյ, մեռեալ են երկոքին ըստ Առաքելց
(Ճնորհ. ՚ի Թղթ. Ընդհ.):

— Որ բանիւ միայն ունի զառ. ՚ի յԱստուած խոս-
տովանութիւնն, այլ ո՞չ գործով, այնպիսւցն հաւատն
մեռեալ է (Նոյն. անդ):

14

Բ. Մակար. ժե. 4: Դանիէլ թ. 28: դ. 17: Եբր.
Ժա. 6:

15

Կարեաց (Աստուած) զինքն և յղացաւ ի միտս և
ի խորհուրդս մարդոյն (Յակ. Մծբն. Ճառ. ԺՂ):

16

Հռովմ. առ. 20:

— Կարգեաց Աստուած զաշխարհս որպէս դպրոց,
զի ուսցին արարածք զինսամն Արարչին յառնելն և ՚ի
կազմելն. (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ. Է):

— Յարարածոցըս ծանուցաւ

Ստեղծող սոցուն՝ թէ է անբաւ (Ն. Շնորհ. 'ի Բան
Հաւատ.):

17

Ապղմ. ԺՂ. 2: Խմաստ. ԺՂ. 5:

— Արարածք են Աստուծոյ և լուսաւորք՝ արեգակն
և լուսին և աստեղք ամենայն, որք իւրեանց փոփոխ-
մամբն ցուցանեն զիւրեանց սպասաւորութիւնն ըստ
սահմանելցն՝ այլ ևս արարածոց. և յայտ առնեն մեզ՝
եթէ արարածք են (Գ. Լուս. 'ի Յիճախ. Ճառ. ղ):

— Ունջ է և ընդարձակ երկին. լայն և անեզը է
ծով. սփիռ է երկիր. գեղեցիկ է արեգակն. ցանկալի՝
է մարդ. սիրահարուստ է տեսակ մարդոյ և ձգող...
վայելուչ է ոսկի... Տես 'ի սոսա զԱրարիչն՝ համե-
մատեալ զանեղն ընդ եղականքս, զարարողն՝ ընդ ա-
րարեալքս, զկառավարն՝ ընդ բերեալքս, զաղբիւրն
իմաստից՝ ընդ բանաւորքս, զբղխօղն սիրոյ՝ ընդ սիրա-

Հարուստքս. և արա սոքօք առ նորա գեղն և զօրութիւնն և քաղցրութիւնն ճանապարհ, և լեր երկնային երկնային խոկմամբ (Ա. Լամբ. ՚ի Անկն. Իմաստ. գլ. ժդ):

— Ո՞ք այնպէս հէք և թշուառական, որ տեսեալ զերկինս, տեսեալ և զծով և զցամաք, և զզուզախառնութիւն եղանակաց տարւոյ այնպէս ճշդիւ չափեալ, և զանխոտոր կարգ տուընջեան և զիշերոյ, իւրովի զայսոսիկ համարիցի լինել, և ոչ երկիրպագանիցէ Այնմ՝ որ զայս ամենայն իմաստութեամբ յարմարեաց (Յ. Ռուկե. Ճառ թ, խօսեցեալ առ ժողովուրդն Անտիոքայ):

18

Շոռվիմ: ամ. 19:

— Աակաւք ՚ի հեթանոսաց լուսաւորեցան, և ծանեան արարածովքս զԱրարիչն (Եփր. առ Վարդ. ՚ի Անկն. ծնն.):

19

Իմաստ. ժդ. 1:

20

Շոռվիմ: ամ. 21 — 23:

21

Ոչ եթէ զանհաս բնութենէն կարիցէ ոք ճառել, և որպէս էն՝ զայն կարիցէ ոք պատմել. զի անհաս և անբաւ և անբաւանդակ և անքնին, անմատոյց անիմաց է յամենայն արարածոց (Գ. Լուս. յԱգաթ.):

— Օ. ի եթէ է՝ գոլ հաւատամք.

Իսյց թէ զի՞նչ է՝ անդիտանամք (Ա. Շնորհ. 'ի բան հաւատ.) :

— Ա. սեմք՝ եթէ Աստուած սէր է, և եթէ որպէս՝ զայն ոչ գիտեմք։ Ապա յայտ է, եթէ բազում ինչ է՝ զոր ասեմք զԱստուծոյ, և ոչ գիտեմք զի՞նչ ասեմք (Ա. Շնորհ. 'ի Մեկն. Ա. Յովհ. Ճառ. Է) :

— Քորժամ իմանան զնա, յայնժամ ճանաչեն՝ թէ անհաս է (Ա. Լամբ. 'ի Մեկն. Սաղմ.):

22

Ա. ստուածայինքն ամենայն անճառելիք են և անիմանալիք և անպատմելիք, և եզերովք ումամիք ոչ սահմանին։ Զի որքան ինչ միանդամ ոք ասէ զնմանէ՝ զոչ էն սահմանէ՝ 'ի վերայ նորա (Ա. Շնորհ. 'ի Մեկն. Ա. Պետ. Ճառ. ա) :

23

Անբաւ է մարդոյ տեսանել զԱստուած գոյիւ իւրով . . . բայց իւրեւ ինքնակամ կամօք բարերարութեամբ իւրով զի՞նքն ցուցանէր (Աստուած) . . . ումեմն լցա, ումեմն հուր։ Թէ ասիցեմք՝ եթէ հուր է, զոր ինչ տեսանեմքն ասեմք. թէ ասիցեմք՝ լյա է . . . նմանութիւնք ցուցանեմք աներեւութին վասն մերոյ անհասութեան (Գ. Լուս. յԱղաթ.):

— Համբ անուն զանմարմին լնութիւննշանակէ՝ ըստ Տեառն ասելոյ՝ յաղակս յաւէտ անմարմնութեան,

Եթէ Հոգին է Աստուած (Ն. Շնորհ. 'ի Թղթ. առ քահանայս Յամայք նահանգի):

— Առվորութիւն է զԱստուած վասն մաքրութեանն՝ հուր անուանել, և վասն պարզութեանն՝ ըստ նաև բազումն առնումք ՚ի վերայ նորա այսպիսի անուանս. սակայն ո՞չ թէ մի ոք ՚ի սոցանէ զէութիւն նորա ստուգէ՝ որ անհասն է; այլ միայն զներգործութիւն կամաց նորա մեզ յայտնի ցուցանէ (Ն. Լամբ. յԱտենաբան.):

— ԶԱ ստուած որ հուր անուանեցաք՝ ո՞չ ստուգեմք հուր լինել, այլ՝ անհաս էութիւն. սակայն վասն մաքրողական ներգործութեանն՝ այսպէս կոչեցաւ (Նոյն. անդ.):

24

Ո՞ի է բնութիւն և գյութիւն ամենասուրբ Երրորդութիւնն, և իւր է ինքնութիւնն և յիւրմէ գյութենէ (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ առ):

— Ո՞ի բնութիւն և մի Աստուածութիւն... ո՞չ յումեքէ եղեալ, և ո՞չ յետոյ սկսեալ (Ն. Շնորհ. 'ի Թղթ. Ընդհ.):

25

Իսկ որք ասենն. Է՛ր երբեմն՝ յորժամ ո՞չ էր Որդի, կամ էր երբեմն՝ յորժամ ո՞չ էր սուրբ Հոգին... զայնպիսիան նզովէ Կաթուղիկէ և Առաքելական եկեղեցի ('ի Հանդ.):

— Այլ զի ասեմք զՀոգին սուրբ՝ մշտնջենաւորա-

կից և էակից, խոստովանիմք միշտ առ Հօր և ընդ Հօր։
Որպէս Հայր Էր և Է, և միշտ Է, և չիք ժամանակ՝ զի
չէր. Նոյնպէս և Հոգին սուրբ՝ միշտ ընդ Հօր և ընդ
Որդոց Էր և Է (Խոսր. ՚ի Մեկն. Պատ.)։

26

Եսայ. Խա. 4: Խդ. 13. Խղ. 4:

— Բարերարն և հաստին Աստուած՝ Էր, և Է, Էր
անսկիզբն յիւրում փառմն . . . և Ճշմարտութիւն Էր
և Է, յէութեան իւրում անփոփոխ (Գ. Լուս. ՚ի
Յաճախ. Ճառ ղ)։

— Յառաջ քան զամենայն յաւիտեանս Էր, և
յայժմուս Է, և յանվախճան յաւիտեանս եղիցի (Կ.
Շնորհ. ՚ի Թղթ. Ընդհ.)։

— Եր միշտ և Է յայժմուս,

Եւ էասցի՝ յանբաւ դարուց (Կցն. ՚ի Բանն Հա-
ւատ.)։

27

Առակ. Ղ. 4: Պատ. Ժդ. 18:

— Օնորա զանունն ո՞ւ ոք գիտաց, զի չէր ևս անդր
քան զնա ոք, որ անտի և այսր անուանեսցէ (Գ. Լուս.
Ալգաթ.)։

— (Աստուած) զիւր անունն ինքն միայն զիտէ
(Կցն. ՚ի Յաճախ. Ճառ ղ)։

— Ենուն Աստուածոյ ո՞կարէ զնել (Եղիշէ ՚ի Մեկն.
Տէրուն. աղօթ.)։

— Ո՛չ անուամբ չափեալ, և ո՛չ յորջորջմամբ նշանակեալ (Գ. Նարեկ. 'ի Ալղօթսն. բան լրտ):

— Աստուածուն՝ արարչութեան և նախախնամութեան է անուն, այլ ո՛չ եթէ բնութեան, քանզի անգիտելի է այն մեղ, և 'ի վեր քան զամենայն միտս և զնշանակս (Ն. Լամբ. 'ի Մեկն. Պատ.):

— 'Եցն ինքն Աստուածայինքնութիւնն անձառելի և անձայնելի կայ մնայ՝ գերազանցելով քան զամենայն ձայնի նշանակս (Գ. Աստուածար. Ալո. որս. Է):

28

Անահանն (Աստուած) յանուն գայ. զի ո՛չ եր ոք ընդ անսկզբանն, որ կոչեր զանուն Աստուծոյ. այլ ինքն վասն բարերար կամացն՝ Արտեհն արարածոց անուանի... զիւր անունն ինքն միայն զիտէ (Գ. Լուս. 'ի Յաճախ. ձառ լ):

— Անիմանալի է Աստուած և անահան (Գիտնէսիոս 'ի գիրս Աստուածային անուանց):

— Անուն նորա Արտեհն երկնի և երկրի, իսկ յառաջ քան զերկին և զերկիր, որպէս ինքնագոյ՝ բնահանուն է ('ի Թղթ. Հայոց առ Միջըներսեհ հազարապ. առ եղեշեայ):

29

Առակ. Ժը. 10:

— Արարին Աստուած և հաստին Տէր 'ի գործոց

անտի իւրոց ունի զիմառաւորութիւն և զկեցուցիչ անուանսն զերախտեաց իւրոց՝ զբարերարն և զԱղորմածն և զԳթածն, զՍուրբն և զԵրկայնամիտն, և այլն (Գ. Լուս. 'ի Յաճախ. ճառ. դ.):

— Ինութեան անուն ո՛չ գիտեմք Աստուծոյ. իսկ դրական անուանցն ո՛չ գոյ բաւ. վասն զի կոչի՝ Տէր, և Աստուած, Արարիչ, Թագաւոր, Լոյս, (Խոսրով 'ի Մեկն. Ժամ.):

— ԶԱՐ Աստուծոյ բնութիւն ոք յարարածոցս ո՛չ երբէք կարաց Ճանաչել, ո՛չ զբնութիւն և ո՛չ զանուն նորա տիրապէս. այլ անուանեմք զնա բազմապատիկ անուանմք բատ ներդործութեան կամացն (Կ. Լամբ. 'ի Մեկն. Պատ.):

30

Աաղմ. ձր. 19: Երեմ. ժ. 10: լդ. 3: ծա. 57:
Եսայ. իսր. 8: լդ. 22:

31

Օմին Աստուած որ էն միշտ . . . զբավանան, զամենազօրն . . . իբր ո՛չ եթէ փոխանակ զի անուանեալ կոչի արդար, և բարերար, և ամենակալ, և կամարար, և այլ այնպիսի անուանք, վասն այնորիկ պարտ և պատշաճ է ազգի ազգի ինչ ասել, և այլազգ. այլ մի և նոյն է, և բիւրազգի զօրութիւնս Աստուածութեան ընդ ամենայն կողմանս առաքէ (Աիւրեղ Երուս. 'ի Կոչ. Ընծ. դ. դ.):

32

Ե՞ն (այսինքն՝ տառդ է) էապէս մեզ քարողէ
զիր կնն ուսեալ 'ի Մովսիսէ,
թէւ Աստուած էր 'ի սկզբանէ,
Եւ ո՛չ եղեալ 'ի յումիքէ (Ն. Ճնորհ. 'ի բանն
հաւատ.):

— Ո՛չ եթէ Որ Ին ասել՝ յայտնիչ է բնութեան
Աստուածութեանն... այլ է ասելն՝ գցութեան է
յայտնից և ընդդէմ չէիցն՝ լոկ անուամբ կոչեցելոցն,
որ ո՛չ է գցութիւն նոցա աստուած, այլ նիւթ եղաւ
կան (Մեծն Վարդան, 'ի Մեկն. Ել. զլ. դ):

— Ե՞իւն հասկացեալ հաւատաց (Մովսէս), եթէ
Աստուած է նա, որով է է, զի աստ ածող է... և զի
միշտ է է, և ո՛չ է եղեալ (Նշն. 'ի Պատմ.):

33

Աստուած՝ բնութեամբ մի Աստուածութիւն միայն
է... իսկ այլք յարարածոց՝ որք ո՛չ ունին զընու-
թիւն, ո՛չ կարեն տիրապէս ունել և զանուն՝ ո՛չ յեր-
կինս, և ո՛չ 'ի վերայ երկրի... վասն որոյ եթէ ոք 'ի
մարդկանէ եղականաց ուրուք մասանց զԱստուածու-
թեան զնէ զանուն, ամըսրշտէ, որպէս առաջին հե-
թանոսքն՝ որք ամբարշտեցան յԱստուածոյ: Զի այս ա-
նուն (Աստուած)՝ Նման է սեպհական և վայելուչ որ 'ի
վեր է քան զամենայն անուն... զի Աստուածն անուն՝

Արարշութեան է (Ն. Շնորհ. 'ի Թղթ. առ քահ. Յամայք նահանգի):

Տես և 'ի համարն 34:

34

— Աստուած անունն՝ արարչական է, և առ մեղ ստուգաբանի՝ թէ Աստ Էռա Վել (Խոսրով 'ի Մեկն. Ժամ.):

— Ատեղծիչ արարածոցս զիտացեալ միայն զնա, այսը աղագաւ յարդեանց իրացն կոչեցաք զարարիչն՝ Աստ, այսինքն՝ Աստ Էռա Վել զոչէն՝ յէութիւն և 'ի գյութիւն՝ զերկնաւորն և զերկրաւորս (Ն. Լամբ. 'ի Մեկն. Պատ.):

— Այն զօրութեանն՝ որ արար զամենայն ինչ, Աստ Էռա է անունն, որ թարգմանի՝ Զմեղ Յանդին Էռա (Յ. Վանական Վ. 'ի Բացատր. աղօթ. Ամբակ.):

Տես և 'ի համարն 32:

35

Եղեկ. Ե. 11: Ժ. Յ: Գատ. Ե. Յ: Եսայ. Խը. 2:

36

Գ. Թագ. ը. 27: Եսայ. կղ. 1:

— Աստուած է արարիչ և անուստեք... Երկինք ամենայնիւ, աշխարհ ամենայնիւ, և տիեղելը ամենայնիւ 'ի վեր ունել (զնա) ո՞չ բաւեն: Ինքն պատեալ զամենայնիւ, 'ի ներըց ամենայնի, 'ի վերոց ամենայնի,

արտաքսյ ամենայնի, և ամենայն 'ի նմանէ, և ամենայն 'ի նա (Գ. Լուս. յԱգաթ.):

— Օ, ի է անկէտ և անսահման,

Վնեղ, ան'ուր, և անվախճան (Կ. Շնորհ. 'ի բանն հաւատ.):

— Վնսկիզբն է Աստուած, անձառ և անհասական, որ ո՛չ տեղեօք սահմանի, և ո՛չ վայրօք բովանդակի (Սեբեր. Ճառ ա՛):

37

Աաղմ. Ճը. 19. 22. Երեմ. իդ. 23. 24.

— Վնպարագիր և անվայրափակ տեղի ամենեցուն, բոլոր իսկութեամբ հուպ յամենես/ն (Գ. Կարեկ. յԱղօթ. բան իդ):

— Հուպ ամենից և մերձաւոր,

Եւ յումեքէ ո՛չ հեռաւոր (Կ. Շնորհ. 'ի բանն հաւատ.):

— Պատուանդան ոտից նորա երկիրս է. այլ հասու է զօրութիւն նորա մինչև յանդունդս սանդարամետի (Աիւրեղ Երուս. 'ի Կոչ. Ընծ. զԼ. ե):

38

Յովհ. Ժդ. 23. Ա. Յովհ. դ. 15. 16:

— Յորժամ ոք յարդարութեան գործս է, և զգուշանայ զկամն վարդապետութեան Աւետարանին սրբոց կատարել, ճանապարհ է այնպիսին Հոգւցն սրբոց և

օլմւան և տեղի հանգստեան (Կ. Լամբ. ՚ի Մեկն. Առակ. գլ. լ) :

39

Աաղմ. ժը. 2:

— Երկնք՝ փառացն Աստուծոյ լինին պատմաբան (Գ. Կարեկ. ՚ի Կերբող Աստուծածնի):

— Ու միայն ՚ի բարձունս է (Աստուծ), այլ ամենայն ուրեք. այլ զի որ անդն են՝ կամարարք նորա ամենեքեան են, վասն այնորիկ անդ լինել ասեմք (Խոսրով. ՚ի Մեկն. Պատ.):

— Ե՛նդ ասի Աստուծ՝ ուր յայտնին զործք նորա, և ուր առաւելու՝ մանաւանդ մերձ է, և երկի յերկրորդ բանաւորքս, և առաւել մերձ ՚ի զօրս երկնից (Եւագր. ՚ի Հարիւրաւորսն. գլ. ան):

Տես և ՚ի Համարն 17: .

40

Եշ. լր. 20: Յով. ան. 18: Ա. Յով. դ. 12: Ա. Տիմոթ. դ. 16):

— Ու տեսաւ (Աստուծ) երբէք ՚ի մահկանացու մարմնաւորաց, նա՝ և ո՞ւ ՚ի հոգեղինաց և ՚ի հրեղինաց զուարթնոց (Գ. Լուս. յՆգալթ.):

— ԶԱ Աստուծ զցիւ ո՞ւ (է) տեսեալ ուրոք, ո՞ւ հրեշտակաց և ո՞ւ հրեշտակապետաց, ո՞ւ պրովեէից և ո՞ւ քրովեէից, ո՞ւ բիւրաւոր բանակաց երկնաւոր զուարթնոց (Կայն. անդ):

— ԶՈՐ ԷՆ ԱՍՏՈՒԱԾ ո՛չ միայն մարգարէքն, այլ
և ո՛չ հրեշտակը, և ո՛չ հրեշտակապետը տեսանեն
(Յ. Ռուբեն. 'ի ՄԵԼԻՆ. Յովհ. Ճառ. ԺԵ) :

41

Ա. Տիմոթ. ա. 17:

— Արարին ամենեցուն աներւոյթ է 'ի մարմնաւոր
աշաց (Սահակ եպիսկոպոս յԵղիշ. ՊԼ. Ը) :

— ԶԱՄԱՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ բնութիւն մարմնաւոր ա-
շաց տեսանել անհնար է (Կիւրեղ Երուս. 'ի Կոչ.
Ընծ. ՊԼ. Ժ) :

— ԱՄԱՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆ ըստ ինքեան աներւոյթ է
(Գ. ԱՄԱՏՈՒԱԾԱԲԱՆ Ճառ. Ժ. առ Կղղղոնիոս) :

42

Ի. Օրին. Ղ. 4: Խմաստ. ԺԵ. 13: Եսայ. ԽՎ. 11:
ԽԵ. 21. 22: Մարկ. ԺԵ. 29: Գաղատ. Ղ. 20: Ա.
Կորն. Ղ. 4: Ա. Տիմոթ. Բ. Յ:

— Հաւատամք 'ի մի ԱՄԱՏՈՒԱԾ՝ Հայր ամենակալ,
յարարին երկնի և երկրի, երևելեաց և աներւութից
('ի Հանդ.):

— Տէր ԱՄԱՏՈՒԱԾ, որ նա միայն ինքնութեամբ, և
յառաջ քան զնա չիք ոք այլ արարիչ ամենայնի (Գ.
Լուս. յԱգաթ.):

43

Երեմ. ԺՂ. 20: Ա. Կորն. Ղ. Յ. 6: Խմաստ. ԺԵ. 21:

— Ա ասն զիցն թէ ասես՝ զոր կոչես դու աստուածս, ստոյդ իսկ են հաստուածք. վասն զի հաստեալք են 'ի մարդկանէ (Գ. Լուս. յԱգաթ.):

— Աղքա (կռապաշտք) 'ի գեղ պատկերին զօշոտութեամք տուփեցան և կամք երկրպագեցին. և զԱստուծոյ անունն՝ որում անհաղորդ են արարածքս, 'ի վերայ նոցին (կռոց, քարեայ և փայտեայ պատկերաց) կարդացին (Ն. Լամբ. 'ի Մեկն. Իմաստ. գլ. ԺԴ):

44

Վատթ. Ե. 48: Երր. Է. 28:

— Կատարեալ է Հայր և զօրութեամք, գիտութեամք և իմաստութեամք, արարչութեամք և բարերարութեամք... Կատարեալ է և Որդի... Կատարեալ է և սուրբ Հոգին (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ ը):

45

Վաղաք. Ք. 6: Յակ. ա. 17:

— Աստուած հոգի կենդանի է... անփոփոխ է (Գ. Լուս. յԱգաթ.):

— Անփոփոխելի է Աստուած (ՆՍՅ. 'ի Յաճախ. Ճառ իր):

— Յիւրում էութեան ընութեան և բարձրութեան՝ յորում էր և է, մշտնջենաւոր 'ի նմին կայ և մնայ անփոփոխելի... Զի որպէս Հայր, նոյնպէս և 'ի նմանէ Որդի և Հոգին, են անփոփոխելիք 'ի նոյն բնութեան (Ս. Շնորհ. 'ի Մեկն. Յակ. Ճառ դ):

46

Աաղմ. Ճիղ. 3:

— Ի վեր է (Աստուած) քան զիմանալիս յանսահամանութեան և յանբաւութեան իւրում (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ ա):

— Որ վասն մեր 'ի չափաւորութիւն եկիր անչափդ Աստուած ('ի Ժամագիրս):

— Տէրութիւն անսահմանելի, մեծութիւն անչափելի (Գ. Կարեկ. Խնդօթ. բան իշ):

47

Պ. ուկ. ա. 37:

— Օ ամենայն ինչ զոր ասէ՝ կարո՞ղ է կատարել և տկարանայ նմա և ոչինչ (Գ. Լուս. Խնդօթ.):

48

Ա. մենակալ ինքնիշխանութիւն բոլոր էականութեան (Գ. Կարեկ. Խնդօթ. բան ծէ):

— Աստուած իշխան է ամենայն եղելոց, և զոր ինչ կամի՝ առնէ իշխանաբար յարարածս իւր. և ոչ ոք ընդդիմանայ եղելոց 'ի նմանէ (Կ. Շնորհ. 'ի Թղթ. առ քահ. Յամայլք նահ.):

— Աստուած մի է, միայն անձիշխան (Կիւրեղ Երուս. 'ի Կոչ. Ընծ. գլ. դ):

49

Աաղմ. Ճիղ. օ:

— Անսկիզբն է (Աստուած) և ամենիմաց (Գ. Լուս. ՚ի Յաճախ. Ճառ. Ժը):

— Ամենիմաստ ամենից հսյր (՚ի Շարակ.):

— Քան զամենայն մեծ է (Աստուած), քան զամենայն իմաստուն է (Կիւրեղ Երուս. ՚ի Կոչ. Ընծ. Պլ. Ղ.):

— Ծակվէտե նա ամենագէտ է, դու մի յապաղեր խոստովանել նմա զմեղսն (Եփրեմ ՚ի Ճառնյղ. պահ.):

50

Անեղծական՝ անստեղծական՝ անտարրական՝ Աստուածութիւնն Ճանաչի . . . նոյն պարզական և անշարժական միապէս (Գ. Լուս. յԱգաթ.):

— Պարզականք (Են Հրեշտակը) ՚ի պարզագունէն Աստուծոյ (Կ. Շնորհ. ՚ի Գով. Հրեշտ.):

— Աստուած պարզ է և առանց շարադրութեանց, և առանց ձեռոց (Յ. Ասկեր. Ճառ. դ. յղ. անհասան.):

51

Ապոլ. Ճառ. 28:

— Մշտնջենաւորութիւն անսահման (Գ. Լուս. ՚ի Յաճախ. Ճառ. ա.):

— Աստուած մշտնջենաւոր, Աստուած յաւիտենական (՚ի Ֆամագիրս):

52

Ա. Տիմոթ. Ղ. 16:

— Անմահութիւն՝ Անեղին (Աստուծոյ) է տիրա-

պէս . զի հրեշտակը թէպետև անմահք կոչին . սակայն
եղականք են , և վրիպել նոցա ՚ի շնորհացն Աստուծոց
մահ կոչի (Խոսրով ՚ի Մեկն . Ժամ.) :

— Շնորհատու բարեաց՝ յամենայնի առատ՝ ան-
մահ Տէր (՚ի Ժամագիրս) :

53

Դուկ . Ժը . 19:

— Տէր իմ Տէր , տուիչ պարզեաց , ինքնաբուն բա-
րի (Գ . Կարեկ . ՃԱՂՈՂ . բան դ) :

54

Ա . Թագ . ը . 2 : Պետ . Ժա . 44 : ԺԾ . 2 : Ի . 7 :
Ա . Պետ . ա . 15 :

— Առւրբ՝ սուրբ՝ սուրբ , սուրբ ես Ճշմարտապէս՝ և
ամենասուրբ (՚ի Խորհրդատետրն . յաղօթս Պատ .) :

— Աստուծ ՚ի վեր է քան զսրբութիւն . . . Սուրբ
է Աստուծ , ո՞չ որպէս մեզ հասանելի , այլ որպէս ին-
քեան միայնում է զիտելի (Խոսր . ՚ի Մեկն . Ժամ.) :

— Ու թէ ՚ի մից կողմանէն սուրբ է՝ և ՚ի միւս-
մէն ոչ նցյնպիսի , այլ ամենեւիմբ սուրբ , ամենեւիմբ
յստակ , բոլորովիմբ ազատ . բնութեամբ և էութեամբ
ունի զսրբութիւնն , ո՞չ եկամուտ՝ և ո՞չ ստացական .
և ամենեցուն սրբութիւնն ՚ի նմանէ՝ է՝ մարդկան և
հրեշտակաց (Ա . Շնորհ . ՚ի Մեկն . Ա . Պետ . Ճառ դ) :

55

Աաղմ . Ճը . 8 : Երեմ . իդ . 24 :

— (Օրջնաբանեալ աշաւորութիւն, ամենավայր ձեռնկալութիւն (Գ. Նարեկ. Աղօթ. Բան զդ) :

— Ենսահման և անոլո՞րտ է բնութիւն Աստուածութեան յերկինս 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ. և չի՞ք ինչ այն տեղի՝ որ թափուր է 'ի նմանէն. զի յամենայնի լի՛ է և պատարուն (Ս. Շնորհ. 'ի Մեկն. Ա. Պետ. Ճառ ը) :

— Ասեմք՝ եթէ ամենայն ուրեք է Աստուած, և ո՛չ զիտեմք որպէս է (Նոյն. 'ի Մեկն. Ա. Յովհանն. Ճառ ա) :

56

Երիս դաւանեմք զանձինս (Աստուածայինս), և ո՛չ առաւել կամ նուազ քան զերիսն (Ն. Շնորհ. 'ի Թղթ. առ. Մանուել կայսր) :

— Երեակ անձամք թիւ կատարեալ
ԶԵՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ ծանուցեալ.
Ո՛չ քան զերիսն առաւելեալ,
Եւ ո՛չ երկուս կամ մին եղեալ (Նոյն. 'ի Բանն Հաւատ.) :

57

Երանելի սրբոյ Երրորդութեանն բնութիւնն, անսահմանելի միապէս յերիս անձինսն է, 'ի Հայր և յՈրդի և 'ի Հոգին սուրբ (Մամբրէ, 'ի Ճառն յարութեան Ղաղարու) :

— Ո՞ի է Տէր, և մի Աստուած... Ո՛չ (Երիս)

Տեարս՝ և ո՛չ (Երիս) Աստուածս դաւանեմք զսուրբ
զԵրրորդութիւնն... Քանզի մի է Տէրութիւն Հօր և
Որդւոյ և Հոգուցն սրբոյ... Երիս՝ և մի, մի՝ և Երիս.
Քանզի մի էութիւն սուրբ Երրորդութեանն դաւա-
նեմք՝ յԵրիս կայս կատարեալ անձանց (Սեբեր. Ճառ-
ա. վասն հաւատոյ):

58

Երեք անձինք... մի իսկութիւն, մի էութիւն, մի
Աստուածութիւն (Գ. Լուս. Խպաթ.):

— Երեք անձինք և մի բնութիւն, մի Աստուածու-
թիւն, զքեղ խոստովանիմք յաւէտ սուրբ Երրորդու-
թիւն ('ի Ժամագիրս):

— Խոստովանիմք համագոյ և անեղ զամենասուրբ
զԵրրորդութիւնն՝ յԵրիս անձնաւորութիւնս բաժա-
նեալ, և 'ի մի բնութիւն, և 'ի մի Աստուածութիւն
միաւորեալ (Կ. Ընորհ. 'ի Թղթ. առ Մ. կայսր):

59

Մատթ. ի՛ը. 19: Յովհ. առ. 1. 14. 18: դ. 35: Ե.
18—26, և այլն: Ա. Յովհ. առ. 1: Ե. 7: Յայտն. Ժթ.
13: Ղուկ. Ժ. 21: իդ. 46: Մարկ. առ. 10. 11:
Մատթ. դ. 16: ժդ. 28. 31: Յովհ. ժդ. 17: ԺԵ.
26: ժդ. 13:

— Հաւատով ճշմարտեսցուք 'ի մի Աստուած Հայր
և Տէր և Արարիչ ամենայինի, և 'ի Միանհն Ուրբին՝ որ

՚ի Հօրէ և առ Հօր և ընդ Հօր, և ՚ի սուրբ Հոգին՝ որ
՚ի նորուն էութենէ (Գ. Լուս. յԱզաթ.):

— Եւ զի՞նչ իցէ որ ասէ՝ Բան. միթէ բարբառ լո՞կ
իցէ բախիւն լեզուի ընդ օգս, որ յառաջ քան զասել
ասողին՝ չէ՛ յայտ, և յետոյ անհետ՝ չէ՛ ՚ի միջի. այլ
վասն այսորիկ անուանեցաւ Բան. զի որպէս բան ՚ի
բերան ասողին, նշյնպէս և ամենայն հրամանք Հօր
կամաց ելանեն ՚ի բերանց Որդւց (Նշն. անդ):

— Եւ յնպէս խոստանան (Հերձուածողքն) գիտել
զԱստուած, որպէս և ոչ ինքն զինքն։ Խոկ մեղ շատ է
գիտել միայն, եթէ մինն (յերից անձանց Հոյր է, և
միւսն Որդի, և միւսն Հոյր սուրբ). և երեքեանն միոյ
բնութեան և զօրութեան և Աստուածութեան են (Ա.
Ճնորհ. ՚ի Մեկն. Բ. Պետ. Ճառ ՛):

— Ո՞չ երկուս անծինս, և կամ երկուս ծնունդս
խոստովանիմք, այլ միածին, և մի ծնունդ, և մի Հոյր
Ճնորհութեան՝ որ ՚ի Հօրէ ելանէ (Սեբեր. Ճառ ՛):

Որք Բան ասեն ըստ Յովհաննու,

Եւ յանուանէ փախչին յՈրդւց.

Ո՞չ գիտելով Հիմար Հոգւով

Թաէ չէ՛ օտար Բանն ՚ի յՈրդւց:

Օ ՚ի որպէս ծնունդ է բան սըրտի,

Կ նշյնպէս և Հօր ծընունդ Որդի . . .

Բան ասացաւ անուն նորին,

Օ ՚ի անմարմին է ծնունդ բանին (Ա. Ճնորհ. ՚ի
Բանն Հաւ ատ.):

60

Վատթ. ժա. 27: Յովհ. կ. 45. 46:

— Աստուածայինքն ամենայն հաւատովք իմացեալ լինին, և ոչքննութեք (Իգնատ. ՚ի Մեկն. Պուկ. ա. 45):

— Վասնաւոր մեր զիտութիւնս տուեալ է ՚ի Հօրէ վասն Որդւց, և յՈրդւց՝ վասն Հօր, և ՚ի սոցուն՝ վասն Հոգւցյն, և ՚ի Հոգւցյն՝ վասն նոցին (Իգնատ. ՚ի Մեկն. Պուկ. ժ. 22):

— Եթէ ոչ էր ասացեալ Գրոց մեզ՝ եթէ զՔրիստոս (Աստուածութեանն) Հայր (Աստուած) ծնաւ, ուստի՝ զիտէաք զխորհուրդ Աստուածութեանն (Եփիրեմ. ՚ի Բանն՝ Որ ունի զշարսն, և այլն):

61

Ը. Կորն. գ. 14:

— Վարդարէքն (զխորհուրդ սրբոյ Երրորդութեան) յայտնէին և թաքուցանէին. յայտնէին բանիւք՝ և թաքուցանէին արդեամբք: Զոր և մեծն Դաւիթիթ ծանուցեալ Հոգւցյն յայտնութեամբ՝ զխոստովանութիւնն առաջի գնէ զերից անձանց և զմից Աստուածութեան և զտէրութեան և զիշխանութեան, այսպիսի իմն ունելով բանին. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, այս՝ Հօր դէմք. Եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան. այս՝ անցերկուանալի Որդւց դէմք. Եւ Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա...: Եւ այլս յոգունս այսպիսիս՝ եթէ ոք հաւաստի միտ դնիցէ՝

գտցէ 'ի բանս մարդարեկիցն առակաւ և օրինակաւ ասցեալ վասն Որդւոյ և վասն Հոգւոյն (Ս. Շնորհ. 'ի Մեկն. Ա. Պետ. Ճառ դ):

62

Հօր արարչի Խորհուրդ 'ի մէջ առեալ ընդ արարչակից Որդւոյ և ընդ արարչակից Հոգւոյ, իբրև զխորհուրդ զառաջին նախաստեղծն մարդոց. զի որպէս անդըն ասաց, թէ Արասցուք մարդ 'ի նմանութիւն պատկերի կերպարանաց մերոց, և անդէն ստեղծեալ Ադամ 'ի կենդանութիւնն ի չգոյէն հաստատեցաւ. նոյն օրինակ և ասացեալ Հօր առ Որդին և առ Հոգին, ասէ՝ Եկայք արասցուք Ադամայ օգնական նման նմա՝ ըստ նմանութեան պատկերի իւրոյ և կերպարանաց (Գ. Լուս. յԱգաթ.):

— Եւ ասաց Ած. Եկայք իջցուք և պղտորեսցուք զլեզուս նոցա. և ոչ ասաց՝ թէ Գնացէք իջէք և պղտորեցէք զլեզուս նոցա. որպէս և կարդ հրամանին պատշաճէր Աստուածութեն. այլ Եկայք ասէ իջցուք և պղտորեսցուք. իբրև առ հաւասարութիւնն գործոյն 'ի Պղտորեսցուքն ասել, յիրաւի առ մարդոյն արարչութեամբն և լեզուացն բաժանմամբ՝ օրինակեաց զայս։ Քանզի զմարդկութիւնն վասն մերոյ փրկութեան յանձըն առնլոց էր Աստուածութիւնն, զթիւ Երրորդութեան երեսացն ուսուցանել Առաքելոցն (Նոյն. անդ):

— Տէր ասաց Միաձնի Որդւոյ իւրոյ. Արասցուք

մարդ ըստ պատկերի մերում (Եփրեմ. Տառ. 'ի տօնն
Բարեբան.):

— Այն որ ասաց, բա «Արասցուք ըստ նմանու-
թեան պատկերի», ապաքէն յայտ է թէ ընդ ուժեմ
որ առ նմա կայր՝ ասէ (Կիւրեղ Երուս. 'ի կոչ. Ընծ.
Պ. Ժա. Ժա.):

— Որ «Արասցուքն ըստ մերում պատկերի» ասաց,
'ի ձեռն յոքնական նշանակին զսուրբ Երրորդութիւնն
ծանցյ (Գ. Նիւսացի, 'ի գիրսն կազմ. մարդ.):

— Արասցուք մարդ ըստ պատկերի մերում. . . Մե-
րումն ասելով զանձինսն յայտնեաց (Վարդ. 'ի Մեկն.
Ծննդ. Պ. Ժ. Ժ.):

— Եկայք իջցուք և խառնակեսցուք զլեզուս նո-
ցա: Ընդ Ոլոփի և ընդ Հոգի է բանս, որովք արար ըզ-
մարդն ազգ մի և լեզու մի (Նյոն. 'ի նյոն գիրս. Պ. Ժ. Ժ.):

— Ոչ թաքեաւ 'ի նմանէ (Է Մաշտակ) իմաստք Եր-
րորդութեանն. քանզի ծանեաւ՝ եթէ էն երեք է
(անձնաւորութեամբ), որպէս յառնելն զմարդն և 'ի
բաժանել լեզուացն և յայլսն խոստովանի զերեքն
(Նյոն. 'ի Պատմ. ըստ ձեռ.):

63

Ո՞ի է Աստուած Հայր, յորմէ ամենայն. և մի Տէր
Յիսուս Քրիստոս, որով ամենայնքս. և մի Սուրբ Հոգի
Նորոգող. Երրորդութիւն սուրբ: Զի Բանիւ Տեառն
Երկինք և երկիր հաստատեցան, և Հոգւով բերանց

Նորա ամենայն զօրութիւնք նորա, որպէս ասացաւ՝
մարդարէէն (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ Ե):

Տե՛ս և 'ի Համարն 61:

64

Խոստովանիմք զամենասուրբ զԵրրորդութիւնն՝ ըզ-
շայր և զՈրդի և զսուրբ Հոգին, յերիս անձնաւորու-
թիւնս բաժանեալ (Ն. Ծնորհ. 'ի Թղթ. առ Ալեքս):

— Եւ ոչ դարձեալ Հրէականին հետևողի՝ Սարէլի
լիբէացւոյ՝ ձայնակցելով, զերիսն ՚ի մի հաւաքեմք
անձնաւորութիւն, այլ՝ բաժանեմք անբաժանաբար,
և միաւորեմք որոշմամք, ըստ ուղղափառ Հարցն դա-
ւանութեան (Նոյն. 'ի Թղթ. առ Մ. Կայսր):

— Երկրպագեմք Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն.
զառանձնաւորութիւնս որոշեմք, բայց զԱստուածու-
թիւնն միաւորեմք. ոչ 'ի մի զերեսեանն հաւաքեմք՝
զի մի' զՍարէլին ախտանյցեմք. և ոչ որոշեմք յերիս
այլազգիս և օտարոտիս՝ զի մի' զԱրիոսին մոլիցիմք (Գ.
Աստուածաբ. Բռ. որս. Ճառ Ե. յշ. Հաւատ.):

— Ծէպէտ և անձնաւորութեամք որոշեալ են Որ-
դի և Հոգի ՚ի Հօրէ, սակայն Աստուածութեամքն ոչ
բաժանին, և ոչ բնութեամք, և ոչ էութեամք (Ա.
Ծնորհ. 'ի Մեկն. Յակ. Ճառ Ե):

65

Այս է կատարումն հաւատոյն, զՀայր և զՈրդի և
զսուրբ Հոգին ճանաչել երիս անձինս և մի Աստուած,

ոչ գիտել՝ ի նոսա առաւել կամ նուազ կամ յառաջ կամ յետոյ, պյլ՝ հարթ հաւասար և միապէս յամեն նայնի և նոյն բնութեամբ (Խոսրով. ՚ի Աեկն. Պատ.):

— Ո՛չ նախաթուելով յերրորդութեանն՝ ոք մեծ ինչ քան զմիւան, և կամ զինի անուանիլն՝ նուաստագյն առ նմանն (Գ. Նարեկ. Անոթ. Բան լի):

— Ո՛չ ըստ բնութեանըն մեծ է Հայր

• Բան որոց սկիզբն է և պատճառ.

Եւ ո՛չ նուաստք որբ ՚ի նմանէ.

Օ, ի այս և զշայր տըկար առնէ (Կ. Շնորհ. ՚ի Բանն Հաւատ.):

— Երրորդութիւն աձնաւորեալ,

ՅԵստուածութիւն մի հաւաքեալ...

Ո՛չ արարած զյ անդ թուեալ,

Եւ ո՛չ կըրսեր ոք ծառայեալ.

Ո՛չ բարձրութեամբ ոք մեծացեալ,

Ո՛չ ելեկջ աստիճանեալ (Կոյն. ՚ի Վիպաս. Կախն.):

— Ո՛չ մեծ և ոչ փոքր ՚ի սուրբ Երրորդութեանն երեխ. զի զմեծ և զփոքր, զծանր և զթեթե, զշատ և զսակաւ, ժամբ և ժամանակը բովանդակեն: Խսկ ուր ոչ ժամբ, ոչ չափ և ոչ կշիռ մերձենայ յանբաւելի բնութիւնն, անդ ոչ նկարի ոչ փոքր և ոչ մեծ (Մամբը, Ճառ. ՚ի յար. Վաղարշ.):

— Արի է բնութիւն և գյութիւն ամենասուրբ Երարորդութեանն (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ. ա):

— Երեք անձինք, մի կատարեալ կամք... մի իսկութիւն, մի էութիւն, մի Աստուածութիւն... մի զօրութիւն Աստուածութեան (Նշն. յԱզաթ.):

— Արի էութիւն, մի իշխանութիւն, մի կամք, և մի արարչագործ զօրութիւն յերիս անձնաւորութիւնս իմանի (Կ. Շնորհ. 'ի Թղթ. առ Ալեքս.):

— Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրպագեմք զգուգափառ միութիւն ամենասուրբ Երրորդութեանն, Աստուածութիւն անձառ, միշտ բարի, նոյնագոյ, հաւասարապատիւ (Գ. Կարեկ. յԱղօթ. Բան լի):

— Համապատիւ Հօր և Որդւց քարոզեցին զբեզպ (սուրբ Հոգի) Աստուածաբանք եկեղեցւց (Կարակ.):

67

Հայր ծնող է, և Որդին ծնունդ, և Հոգին սուրբ ելող... Հայր ոչ ծնունդ և ոչ ելող, և Որդի ոչ ծնող է և ոչ ելող, և Հոգին սուրբ ոչ ծնող է և ոչ ծնունդ, այլ միշտ զելողութիւն ունի... Արդ զայս դաւանութիւն ընկալան Հայք 'ի մեծէն Գրիգորէ (Լուսաւորչ) և 'ի սրբոյն Ռստակիսէ և յերանելոյն Կերսիսէ (Մամբրէ, 'ի Ճառն յար. Ղազ.):

— Այս է կատարումն հաւատոցն, զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին Ճանաչել երիս անձինս և մի Աստ-

ուած . . . ծնօղ՝ զշայր, և ծնունդ՝ զլրդի, և ելումն՝ զշողին՝ 'ի Հօրէ, և ոչ ծնունդ (Խոսրով. 'ի Մեկն. Պատ.):

— Հայր ծնօղ ասի՛ և ոչ ծնունդ. և Որդի ծնունդ ասի՛ և ոչ ծնօղ (Խոսրով. 'ի Մեկն. Ժամ.):

— Խոստովանիմք զշօր յատկութիւն անձնաւորութեանն՝ անծին և անսկիզբն. և զլրդւց՝ ծնունդ անսկզբնականին շօր անեղապէս և անժամանակ. և ըզշոգուց՝ բղխումն և ելումն և արտաքս առաքումն՝ 'ի Հօրէ անձառաբար (Ա. Շնորհ. 'ի Թաղթ. առ Մանուկը կայսր):

— Օ ելողն 'ի Հօրէ՝ դէակից Որդւցն՝ սուրբ զշողին օրհնեցէք (Շարակ.):

— Դաւանեցին (Հայրապետքն) սուրբ զշողին՝ ելող՝ 'ի Հօրէ՝ էակից Որդւց (անդ):

68

Ի Հօրէն՝ Որդի և Հոգին սուրբ, այչ ոչ կոչին եղաբք, և ոչ որդիք երկրպեանն. զոր օրինակ Աւամայ են Սէթ և Եւայ, այլ ոչ եղաբք և ոչ որդիք երկրպեան (Մամբէէ, 'ի Ճառն յար. Պաղ.):

— Որպէս Հայր, Նոյնապէս և որ 'ի Նմանէ Որդի և Հոգին, են անփոփոխելիք 'ի Նոյն բնութեան (Ա. Շնորհ. 'ի Մեկն. Յակ. Ճառ դ.):

— Ո՛չ անձն Հօր՝ է անձն Որդւց, և ոչ անձն Որդւց կամ սուրբ Հոգւցն՝ է անձն Հօր, թէպէտ և ան-

Դըստին ՚ի միոջէ էութենէ Հօր է Որդի և Հոգին առըլլ
(Սերեր, Ճառ առ. վասն հաւատ.) :

Տե՛ս և ՚ի համարսն 69. 70 :

69

Որդին յառաջ քան զամենայն յաւիտեանս ծնաւ
՚ի Հօրէ (Գ. Լուս. յԱզաթ.) :

— Ի միոջէ միայն Հօրէ միածին Որդի : Ո՛չ Երկրքին
անծինք, և ոչ Երկրքին միածինք . այլ՝ մի Հայր է ա-
ռանց ծնանելոյ (յումեքէ) . . . և մի էր միածին Որ-
դին մշտնջենաւոր ՚ի Հօրէ ծնեալ (Կիւրեղ Երուս. ՚ի
Կոչ. Ընծ. պլ. ժամ) :

— Որ ՚ի Հօրէ անմարմնաբար ծնեալ Որդի նախ
քան զյաւիտեանս (՚ի Շարակ.) :

— Որ յառաջ քան զյաւիտեանս անժամանակ
ծնեալ ՚ի Հօրէ անձառելի Բանդ Աստուած (անդ) :

70

Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին Աստուածեղին՝ Հո-
գի սուրբ, Աստուած կատարեալ՝ առանց առնելոյ,
բղխումն մշտնջենաւոր առ ՚ի Հօրէ (Գ. Լուս. յԱ-
զաթ.) :

— Միածին Որդիդ (Հայր) ծնունդ Աստուածութե-
քո, և Հոգիդ սուրբ՝ որ ՚ի քէն բղխէ (Կոյն. անդ) :

— Որ անխմանալիդ ես յէութեան և անպատում
Հոգիդ ճշմարիտ, անսկզբնաբար բղխումն ՚ի Հօրէ (՚ի
Շարակ.) :

— Այսօր զշողին ճշմարտութեան դաւանեցին սուրբ Հայրապետքն ծագումն առ ՚ի Հօրէ յառաջ բղխեալ անհատաբար (անդ):

— Որ զանձնաւոր զէութիւն բղխեցելցյն ՚ի Հօրէ՝ Հոգւցյն սրբոյ դաւանեցին (սուրբ Հայրապետքն անդ):

— Խոստովանիմք և զշողին սուրբ ճշմարտապէս Հոգի Աստուծոյ . . . յառաջ եկեալ յանսկզբնականէն Հօրէ անսկզբնաբար (Կ. Շնորհ. ՚ի Թղթ. առ Մանուկը կայսր):

— Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին, որ բղխէ առ ՚ի Հօրէ, անձնաւոր Աստուծոյ Հաւատար և անեղակից Որդւց (Գ. Կաթող. ՚ի Թղթ. առ Մ. կայսր):

— Որպէս զբանէն Յովհաննէս աստուածաբանեաց յասելն «Բանն էր առ Աստուած», նոյնպէս և զշողւցյն՝ Բանն՝ յասելն «Հոգին սուրբ որ ՚ի Հօրէ ելանէ»: զի նոյն է ծնունդն և ելողութիւնն: Եւ ըստ ուրում Բանն մարմնացեալ Մէակն կոչի յԱւետարանչէն՝ յասելն «Միածին Որդին որ ՚ի ծոց Հօր», նոյնպէս և Հոգին՝ յիմաստմոյս, զի ունի զելողութիւնն ինքն միայնակ յԱստուծոյ Հօրէ, որպէս ասաց Քրիստոս «Հոգին (ճշմարտութեան) որ ՚ի Հօրէ ելանէ» (Կ. Լամբ. ՚ի Մեկն. Իմաստ. պլ. է):

— Լսես՝ թէ Հոգի յառաջ եկեալ է ՚ի Հօրէ, զորապէսն մի հարցաներ (Գ. Աստուածաբ. յԱռ որս. Ճառ լու. յԴ. Հաւատա.):

— «Կիտեմ՝ զի զՈրդին ծնաւ (Հայր), և եթէ զի-

արդ՝ անգիտանամ։ Գիտեմ՝ զի Հոգին ՚ի նմանէ է, բայց եթէ որպէս ՚ի նա՝ ոչ գիտեմ (Յ. Ոսկեր. ՚ի գիրսն յլ. Անհասանելոյն)։

71

Ո՛չ է Հայր ծնեալ ուստեք, այլ Որդի ծնեալ (է) ՚ի Հօրէ՝ և ոչ արարեալ, և ոչ Հոգին սուրբ ստացեալ՝ այլ բղխեալ։ Մշտնջենաւորք (Են Որդի և Հոգին սուրբ) միաբուն իսկութեամբ ընդ Հօր, և առ Հայր, և ՚ի Հօրէ, որպէս բոց և ջերմութիւն՝ ՚ի հրց, որպէս տապ և ճառագայթ՝ յարեգականէ (Գ. Լուս. ՚ի Յաճախ. Ճառ դ)։

— Մինն ծնունդ է Հօր՝ որպէս որդի, և միւսն՝ բղխումն ՚ի նորին բնութենէ՝ ոչ որպէս որդի, այլ որպէս Հոգի. և Երկրեան նորին են Հօրն, անձնաւորութեամբ ՚ի նմանէ բաժանեալք, և ոչ բնութեամբ որոշեալք. որպէս նորին արեգականն են ջերմութիւն և Ճառագայթ, ոչ անջատեալք ՚ի նմանէ՝ թէպէտ այլ և այլք իցեն (Ս. Շնորհ. ՚ի Մեկն. Յակ. Ճառ դ)։

72

Հայր է Հայրն միածնի Որդւց, և բղխումն (բանալ) Հոգւցն սրբայ, պատճառ նոցունց իսկութեանցն ՚ի նոյն բնութենէ (Գ. Լուս. ՚ի Յաճախ. Ճառ ե)։

— Հայր ո՞չ է ՚ի պատճառէ իմեքէ, որպէս Որդի և Հոգի. այլ՝ ի՞նքն է պատճառ Որդւց և Հոգւց, միոյն՝

ծննդեամբ, և միւսոյն՝ ելողութեամբ (Ա. Շնորհ. ՚ի Սեկն. Յակ. ճառ. դ):

— Զազոգին՝ Քրիստոնէ ասել, ոչ ՚ի նմանէ ասէ՝ իբր ՚ի պատճառէ, զի պատճառ Հայր միայն է որպէս Որդւոյ՝ նմանապէս և Հոգւոյ, միոյն՝ ծննդեամբ, և միւսոյն՝ ելողութեամբ, ըստ անսուտ ձայնին. Կա՝ ասէ՝ Հոգին Ճշմարտութեան, որ ՚ի Հօրէ ելանէ (Ա. Շնորհ. ՚ի Մեկն. Ա. Պետ. ճառ. թ):

— Զազոգին՝ Քրիստոնէ ասեմք՝ ոչ եթէ իբր ՚ի նմանէ յառաջ սկիզբն առեալ և բղխեալ, որ է Հաւասար նմին և Համայնառ բղխումն, այլ՝ ՚ի Հօրէ... Հոգի Քրիստոնէ ասեմք, իբր տնօրինաբար առեալ ՚ի Հօրէ, և ոչ եթէ ՚ի նմանէ բղխեալ (Ն. Լամբ. ՚ի Մեկն. Պատ.):

73

Հայր է պատճառ անպատճառից,
Որդւոյ ծննդեամբ, Հոգւոյ բրդիսմամբ (Ա. Շնորհ. ՚ի Բանն Հաւատ. .):

Տես և ՚ի Համարն 72:

74

Մի զայս ասասցուք, եթէ էր երբեմն՝ զի չէր Արդի (Կիւրեղ Երուս. ՚ի Կոչ. Ընծ. զլ. Ժա):

— (Որդին) Բանն է Ճշմարիտ. ոչ երբէք իցէ՝ և երբէք չիցէ, կամ երբեմն չէր՝ և երբեմն եղև, այլ միշտ Հանապաղ՝ ՚ի սկզբանէ յաւիտենից էր իսկ նա. քան-

դի և ասող նորա (Հայր)՝ մշտնջենաւո՛ր էր (Եփրեմ,
՚ի Համաբարբ. զլ. ա)։

Տես և ՚ի Համարն 25։

75

«Օ՞նունդն առաջին՝ ՚ի Հօրէ յառաջ քան զանկէտ
յաւխտեանս, մշտնջենական և յաւխտենական ծնուն-
դըն՝ ՚ի մշտնջենական և յաւխտենական Հօրէն յա-
ռաջ քան զամենայն (Գ. Լուս. ԺԱԳԱԹ.)։

— Ո՞չ նախ Հայր՝ և ապա Որդի, այլ՝ որպէս յա-
ւխտենական է Հայր, յաւխտենական է և Որդի ընդ
յաւխտենականին Հօր, և մշտնջենակից նմին ՚ի սկըզ-
բանն և ՚ի կատարածին՝ ծագմանն արեգական նմա-
նելով ճառապայմից։ Զի որպէս ոչ նախ արեգակն՝
և ապա լցու, այլ ՚ի միում ժամանակի երկեն երկո-
քեան. այսպէս և լցու Որդի՝ ՚ի լուսց Հօրէ ծագեալ,
և ընդ նմին մշտնջենաւորեալ (Կ. Ծնորհ. ՚ի Թղթ.
առ Մ. կայսր)։

— Ո՞չ է յառաջ Հայր քան զՈրդի,
Եւ կամ Որդի՝ քան ըզէոգի.
Եւ որպէս Հայր միշտ յաւխտեան,
Եւ Համագոյք յիւր յէութեան (Կ. Ծնորհ. ՚ի Բանն
Հաւատ.)։

76.

Սաղմ. լր. օ. 6: Իմաստ. թ. 1: Կողոս. ա. 16:
— Տէր Աստուած, որ նա միայն ինքնութեամբ, և

յառաջ քան զնա չեք ոք այլ արարիչ ամենայնի, որ
երեխ և որ ո՞չն երեխ (Գ. Լուս. Անգաթ.):

— Պաշտել զԱստուած (Հայր) արարիչ, և զՈրդին
հաստիչ, և զՀոգին կազմիչ (Կոյն. անդ):

— Հասարակաց Երրորդութեան է արարչագոր-
ծութիւնն (Խոսրով. ՚ի Մեկն. Պատ.):

— Եկից բնութեան Աստուածային
Եկի տէրութեանդ և միշտ էին,
Գերակատար երիցդ անձին՝
Կատարողի արարածին,
Փառք և պատիւ և զօրութիւն (Կ. Շնորհ. ԺՈՂ-
ՔԵՐԴ.):

— Արարչագործ Աստուած, որ յոչնէ գօյացուցեր
զերկինս և զերկիր (՚ի Շարակ.):

— Հաւատով խոստովանիւմ և երկիր պազանեմ
քեզ, Հայր՝ և Որդի՝ և սուրբ Հոգի, անեղ և անմահ
բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամե-
նայն եղելոց (Կ. Շնորհ. ԺԱՂՕԹՄՆ):

Դմաստ. զ. 8. է. 15. 16. ժը. 13. ժդ. 3. ժԾ. 6. Գործ. ժէ. 25. 28.

— Ամենայն արարածք հրամանաւ նորա շարժին
ըստ իւրեաքանչիւր կարգածոցն կազմածոց (Գ. Լուս.
Անգաթ.):

— Կա է տուիչ և յաջողիչ («Պատ») երկնաւորաց և երկրաւորաց (‘Սոյն. ’ի Յաճախ. Ճառ Ժա՛):

— Խնամով սիրոյն (Աստուծոյ) լի են երկինք և երկիր և որ ’ի նոսա արարածք իցեն, և նորա նախանամութեամբն վարին (‘Սոյն. ’ի Յաճախ. Ճառ Ժա՛):

— Ունիս յիւրաքանչիւր կարգի զամենայն արարածս քո՝ ուղիղ հրամանաւ մատակարարելով (’ի Փամագիրս):

— Վկիզբն և կատարած ամենայնի Աստուծ է, որ ամենեցուն զլինելն տայ և զբարւոք գոլն շնորհէ (Խոսքով. ’ի Մեկն. Փամ.):

78

Կամօք Հօր Եմուտ (Բանն Աստուած) յարգանդ կուսին, և ոչ գարշեցաւ, վասն զի ինքն է սրբիչ ամենայնի (Գ. Լուս. ՋԱԳԱԹ.):

— Գլժածաբար զմերս զգեցաւ մարմին կամաւ Հօր և հաճութեամբ սուրբ Հոգւոյն (Խոսրով. ’ի Մեկն. Փամակարգ.):

— Կամաւ Հօր և հաճութեամբ սուրբ Հոգւոյն եղեւ մարմնառիկ տնօրէնութիւն Որդւոյ (‘Սոյն. անդ. ’):

— Այի յերրորդութենէն՝ Բանն Հօր՝ Որդին Միածին՝ կամաւ Հօր և Հոգւոյն... Էջ յորովլայն կուսին Մարիամու (Ն. Շնորհ. ’ի ԹԱՂԹ. առ Ալեքս.):

— Կամաւ Հօր և հաճութեամբ Հոգւոյն զմարմինն

զգեցաւ (Որդին)՝ որով չարշարեցաւն (Ս. Շնորհ. 'ի Սեկն. Ա. Պետ. Ճառ թ.):

79

Առաքեցաւ Աստուած յԱստուծոյ սուբը Որդին,
Էառ զմարմին 'ի կուսէ, մարդ կատարեալ՝ կատարեալ
Աստուածութեամբն (Գ. Լուս. յԱղաթ.):

— Որ յաղազս մեր մարդկան և վասն մերոյ փրկու-
թեան, իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ,
ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգ-
ւոմին սրբով ('ի Հանդ.):

— (Բանն Հօր) ձգեալ յինքն յարենէ ամենամա-
քուր կուսին... միացոյց ընդ Աստուածութեան իւ-
րում (Ն. Շնորհ. 'ի Թղթ. առ Ալեքս):

— Յարենէ կուսին ձգելով մարմին՝ արար կենդա-
նի և Աստուածոյ մարմին (Կոյն. 'ի Մեկն. Բարձր.):

— Լառ կպտարեալ Աստուածութիւնն զկատա-
րեալ մարդկային լնութիւնս (Ն. Շնորհ. առ Մ.
կայսր):

— Աստուածն Բան... Էառ զմեր լնութիւնս կա-
տարելապէս 'ի կուսէն (Կոյն. անդ.):

— Խառնեալ միացոյց յորովայնի կուսին զեղական
լնութիւնս մեր ընդ անեղի իւրում լնութեանն (Կոյն.
'ի Թղթ. առ Քահ. Յամայք նահանդի):

— Միաւորեաց զմարմինն՝ զոր Էառ 'ի կուսէն՝ ընդ
Աստուածութեան իւրում (Եփրեմ. 'ի Ճառն ծննդ.
Քրիստ.):

Ըանն թանձրանայ 'ի մարմնի, մարմնանայ անմարմնն՝ միացեալ բնութեամք 'ի յերկուց ('ի Շարակ.):

— Որ զիրկական տնօրէնութիւն մարդացելցն վասըն մեր՝ ռւսուցեր (ով տէր սուրբ Գրիգոր) մի յերկուց նոր խառնումն սքանչելի (անդ):

— Ունիմք ասել զերկու բնութիւն՝ ըստ Գրիգորի Աստուածաբանի... եթէ բնութիւնք երկու... քանզի Աստուած և մարդ (Ն. Շնորհ. 'ի Թղթ. առ Մ. Կայսր):

— Կրկին էր (Քրիստոս), ոչ այլևայլ ոք, այլ՝ նշնիքն Աստուած և մարդ միանգամայն (Յովհաննէս վ. Արք. 'ի Քացատր. Հանդ.):

— Կատարեալ ունի զկրկնակի բնութիւնն, զի մի կորուցէ զերկոսին. ոչ կէս Աստուած երևեալ 'ի վերայ երկրիս, և ոչ կէս մարդ ել յերկինս... յԱստուծոյ Աստուած, և 'ի կուսէ Քրիստոս (Եփրեմ. 'ի Մարդարիտն):

— Կրկին էր՝ ըստ որում վաստակեցաւն, և երկեաւն, և արտասուեացն, և քաղցեաւ, և ծարաւեցաւ օրինօք մարմնոյն (Գ. Աստուածաբ. 'ի Ճառն Աստուածպայպտ.):

Քրիստոս ոչ էառ զմարդկային անձն, այլ՝ զբնութիւն, և ոչ բաժանի յերկուս ըստ Կեստորի ('ի Սահմ. Ժող. Շիրակվանայ):

— Երկուց կատարեալ բնութեանց՝ յԱստուածայնց և 'ի մարդկայնց (Եղկ) մի անձնաւորութիւն կատարեալ՝ անայլայլելի և անբաժանելի բնութեամբ (Ն. Շնորհ. 'ի Թղթ. առ. Ալեքս) :

— Եղկ նոր խառնումն 'ի յերկուց անբաժանելի բնութեանց՝ Աստուծոյ և մարդոյ՝ 'ի մի անձնաւորութիւն միացեալ (Նոյն. 'ի Թղթ. առ. Մ. կայսր) :

— Լառ (Աստուածն Բան) զմեր բնութիւնս . . . և միացոյց ընդ իւր Աստուածային բնութեանն անշփոթ և անբաժանելի միաւորութեամբ (Նոյն. անդ) :

— Այս որ յաւէտ անմարմական

Եւ եղելոցս արարչական,

Խառնի ընդ մեզ անշփոթաբար,

Եւ միանայ անձառաբար (Նոյն. 'ի Բանն Հաւատ.) :

— Եղեալ Հաւաստեաւ և առանց ցնորից մարդ, և անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յԱստուածնէն և 'ի սուրբ կուսէն Մարիամայ (Ի Խորհրդատետրն Պատ.) :

— Այս անուանք (Յէսուս, Քրիստոս) զերկոսեանն մեղ նկարագրեն զբնութիւն՝ զԱստուածայինն և զմարդկայինն՝ ընդ միմեանս միանալով անշփոթելի և անանջատելի (Ս. Շնորհ. 'ի Մեկն. Ա. Ցովչ. ճառ. ը) :

— 'Եր և սքանչելի խառնուածով միացան երկու բնութիւնքն 'ի մի անձնաւորութիւնն՝ պահելով և յետ միութեանն անշփոթ զտարբերութիւն բնութեանցն յատկութեան (Ն. Լամբ. 'ի Մեկն. Պատ.) :

(**Հաւատամք**) և 'ի մի Տէր՝ Յիսուս Քրիստոս, յՈր-
դին Աստուծոյ (**'ի Հանգ.**):

— Եղեւ Աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ,
հոգւով և մոռք և մարմնով, մի անձն, մի դէմ (**'ի
Ժամագիրս**):

— Եւ զի ճշմարիտ մարդ և ճշմարիտ Որդի Աստու-
ծոյ խոստովանեցաւ (Հարիւրապետն զՔրիստոս) ուղիղ
մոռք՝ ըստ Աւետարանչացն, Հաստատեաց այսու՝ ե-
թէ Քրիստոս՝ Աստուած կատարեալ է և մարդ կա-
տարեալ, 'ի յերկուց բնութեանց՝ մի անձն, մի դէմք,
մի Որդի Հօր Աստուծոյ և մօր Կուսի (Բարսեղ Ճոն.
'ի Մեկն. Մարկ. Ճառ լը):

— Ի մի պատկեր միացաւ առանց որոշման (Եփրեմ.
'ի Ճառն Այլակերպ.):

Անպատկառացըցք (**համարչափակեան շառայան՛դի**) սուրբ
Հարքն երկուց բնութեանց Քրիստոսի՝ Աստուածայ-
նոյն և մարդկայնոյն՝ լեալք, բնութիւնք երկու ասե-
լով, վասն զի Աստուած և մարդ... և եթէ՝ Հաւաս-
տի զերկոսին ունէր զբնութիւնն Քրիստոս... Ո՛չ
եթէ զերկուցն ասելով՝ Հրաժարէին ասել զմին, և
կամ եթէ զսորին Հակառակն՝ զմին խոստովանելով՝
յամառէին յերկուցն գալ խոստովանութիւն. այլ Հա-
մարձակաբար երկոքումըքս այսոքիւք բարեփառու-

թեան ղամպարօք փայլեալք պայծառանային, երկուս
ըստ բնութեան, և մի ըստ միաւորութեան զՔրիստոս
քարոզելով (Յով. Իմաստ. 'ի ճառն ընդդէմ Երե-
ւութ.) :

— Առաջնորդ ունելով զսոսա (պայծառան և բարութեան)
առ Ճշմարտութեան ճանապարհն՝ որ տանի առ Աստ-
ուած, ուղղապէս և ազատաբար բերիմք 'ի կրկին տե-
սութիւնս բանից, մի ասելով բնութիւն բանին մարմ-
նացելոյ՝ ըստ սրբոյն Կիւրղի (Աղքասանորացւոյ) *
յաղագս անձառ միաւորութեանն. և երկուս՝ ըստ
Աստուածաբանին Գրիգորի *** վասն անկորուստ և
անցեղի գոլց բնութեանցն Աստուածայնոյն և մարդ-
կայնոյն (Կ. Շնորհ. 'ի Թաղթ. առ Մ. կայսր):

— Օ մի բնութեանն եղանակ՝ զոր ասեմք մեք, մի
ոք յայլ դէմն կարծիցէ, բայց յաղագս 'ի յերկուց
բնութեանց անբաժանելի միաւորութեանն (Կոյն.
անդ.):

— Եւ մի ասեմք բնութիւն այսու,

* Բանն սրբոյն Կիւրղի Աղքասանորացւոյ՝ այս է. «Յետ միա-
ւորութեանն ոչ անջատեմք զբնութիւնն 'ի միմեանց. և ոչ
յերկուս որդիս հատանեմք զմին և զանբաժանելին. այլ մի
ասեմք Որդի, և որպէս Հարքն ասացին՝ Մի բնութիւն Աստուածոյ
բանին մարմնացելոյ ('ի Թաղթ. առ Սեկոնդոս):

** Բանն Գրիգորի Աստուածաբանի՝ այս է. «Բնութիւնք
յերկու. քանզի Աստուած և մարդ» (Ժն. որս. գլ. թ. և 'ի
Թաղթ. առ Կղեղոնիոս):

Ըստ Խառնըմանն անձառելւց.

Որպէս հոգի մեր և մարմին

Ի մի բնութիւնը ժողովին (Կոյն. Կիբանն հաւատ.)

— Երկու ասել դարձեալ բնութիւն

Ա ասն ՚ի յերկուց գոլ միութիւն,

Զեւ այս օտար ճշմարտութիւն,

Յէ չբաժանեն յերկուս ըզմին (Կոյն. անդ):

84

Որով էառ մարմին, հոգի և միոք, և զամենայն որ
ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք (՚ի
Հանգ.):

— Խոստովանիմք զԱրդին Աստուծոյ զԲանն Աստ-
ուած... առեալ կատարելապէս զմերս բնութիւն՝ ըզ-
հոգի և զմարմին և զմիտս (Սահակ Եպիսկոպոս Տայոց՝
Մոռուտն մականուանեալ. ՚ի Թաղթ. առ Մ. կայսր)
արդ Յունաց):

— Եառ կատարեալ Աստուածութիւնն զկատա-
րեալ մարդկային բնութիւնս՝ զՀոգի և զմիտս և զմար-
մին (Կ. Շնորհ. ՚ի Թաղթ. առ Մ. կայսր):

— Հայց մէք այսպէս խոստովանիմք,

Աստուածայնոցըն հետեւիմք,

Եթէ հոգի՝ մարմին և միոք,

Որով մեղան ազդ մարդկայինք,

Եառ ՚ի մէնջ Աստուածըն Բան,

Եւ միացոյց բնութեամք յինքեան (Կ. Շնորհ. ՚ի
Բանն. հաւատ.):

— Աստուածութիւնն մարմին եղև՝ հոգի ունելով
բանական (Կիւրեղ Աղեքս. 'ի գիրս Պարապ.):

85

Վարմնացաւ Որդին Աստուծոյ կամօք, և յանձն
էառ զամենայն կարիս (Քր.) մարդկային բնութեանս
մերս, բայց 'ի մեղաց (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ ը):

— Կրեաց զամենայն կիրս մարմնոյ և հոգոյ՝ բաց 'ի
մեղաց (Նոյն. անդ Ճառ Ժդ):

— Առ զմարմին անըմբոնելին . . . և զամենայն անցս
մարմնոյն յանձն առեալ իւրովք կամօք . . . : Եւ ո՛չ ու-
րովք բոնադատութեամբ, բայց իւրովք անձնիշխան
կամօք կրեաց զայնս (Նոյն. Յնգաթ.):

— Ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդ-
կային կենցաղոյս առանց մեղաց ('ի Խորհրդատեար
Պատ.):

— Ի անց ընդ ամենայն կիրս մարդկայինս՝ բաց 'ի
մեղաց (Խոսրով. 'ի Մեկն. Ժամ.):

— Օ, մերս առեալ ընտանեցոյց իւրում՝ հրաշափա-
ռագոյն ներգործութեանցն՝ ինքեամբ զմերս ախտա-
կրելով զանանգոսնելի կիրս՝ բաց 'ի մեղաց, որ է մեզ
անձառելի և անզիտելի (Ս. Հնորհ. 'ի Մեկն. Բ.
Պետր. 'ի յառաջաբ.):

— Ուսու մարմնոյն և զամենայն ինչ կրել որ ո՛չ
հետեւին մեղաց՝ զքաղց, զվաստակ, զտրտմութիւն,
զերկիւղ (Խգնատ. 'ի Մեկն. Պուկ. իր. 42):

— Փրկիչն սոքօք (Բնաւորական իրավունք և օրբերի համար կանոնադրություն, ազգային իշխանություն, պատմական ժամանակակից պատմական ազգ)՝ ի կենացաղավարին ընդ մարդկան վարեցաւ՝ ուրանօր և կամցաւ, և յորժամ և որբան. ոչ օտար յեղանակաւ և կամ ստուերաւ իւլիք, այլ ճշմարտութեամբ (Յովլ. Խմաստ.՝ ի Ճառն ընդգէմ Երևութ.).

— Յայտ առնեն դարձեալ (կիրք) Եթէ ինքն ոչ Հետեւէր կրիցն ակամայ, որպէս մեք, այլ կիրքն՝ ծառայաբար նորին կամաց, ոչ ժուժկալութեամբ ըստ առաքինեացն, այլ իշխանաբար՝ ըստ Աստուածութեանն: Եւ յայտ է՝ ի քաղցյա անտի՝ զոր զրէ Աւետարանիչն, Եթէ՝ ի լրման քառասնեկին՝ ապա քաղցեաւ: Քանզի յայնժամ՝ քաղցեաւ՝ յորժամ թոյլետ քնութեանն կրել զերկիւղ՝ վասն փորձողին համարձակելոյ (Ն. Շնորհ.՝ ի Թղթ. առ Յակով Եպիսկոպոս Ասորւց ՚ի Մելիտինէ):

— Օ ի կատարեալ էառ զբնութիւն
Աստուածըն Բան ըզմարդկութեան,
Պարտ էր զերկիւղ՝ զտրտմութիւն
Յիւրումն կրել անօրէնութեան (՚ի Շարակ.):

Տեսանի ՚ի նմա (՚ի Ք. Է. Ա. Վ.) և կամք (մարդկային), որ է բնական հոգւոյս շարժումն. տեսանի և ներգործութիւն ըստ մարմնոյ, զի յայտնի լիցի աշխատու-

թեամբ մեր փրկութիւնն՝ և ոչ զօրութեամբ (Գրիգոր Դ. Կաթող. 'ի Թղթ. առ եկեղեցին Հոռոմոց):

— ‘Եցն ինքն էր՝ որ ներգործէր զԱստուածայինսն Աստուածաբար, և զմարդկայինսն՝ մարդկապէս, ’ի պէտս մերս փրկութեան. զի Աստուած էր և մարդ (Նշն. 'ի նմին թղթի):

— Բ աս կամացս օրինակի զոր ասացաքս՝ ’ի միոյ անձնիշխան կամաց Աստուածութեանն, երկուց լինել անշակառակաբար, Աստուածայինն և մարդկայինն, հաւատամբ և ներգործութեանն նոյնպէս լինել (երկուց) Աստուածայնոյն և մարդկայնոյն՝ ’ի միաւորութեան անդ, ոչ զբարձրագոյնսն՝ Աստուածութեանն միայն տալով՝ առանց մարմնոյն, և ոչ զխոնարհագոյնսն՝ մարդկութեանն առանձինն՝ առանց Աստուածայնոյն. այլ միոյ անձնաւորութեան զերկոսին զայտոսիկ խոստովանիմք, երբեմն որպէս Աստուած՝ զԱստուածայինսն ներգործելով, և երբեմն որպէս մարդ՝ զմարդկայինսն (Ն. Շնորհ. 'ի Թղթ. առ Մ. կայսր):

— Ո՞չ եթէ էութիւն յէութեան բնակեցաւ, այլ մի էութիւնն այն բանին Աստուծոյ՝ որ եղեւ մարմին, երբեմն կրէր զմարդկայինսն որպէս զմարդ՝ յորժամթցլ տայր հոգւոյն մարդկայնոյ և կամ մարմնոյն՝ կրել զիւրաքանչիւրսն, այս է՝ զքաղցնուլն, զծարաւիլն, զննջելն, զվաստակելն, զարտասուելն, զտրտմելն, զերկնչելն, զանգիտանալն, և զայլն ամենայն. և երբեմն զԱստուածայինսն յայտնէր ’ի ձեռն բազմապա-

տիկ նշանացն և Աստուածավայելու զօրութեանցն՝
յորժամ զայնոսիկ կամէր : Ո՞չ ոմն զտկարագոյնն
կրէր, և ոմն զշզօրագոյնն ցուցանէր, որպէս բաժա-
նն բաժանօղքն, զարտասուելն և որ ըստ այսմ՝ մար-
դոյն տալով, և զյարուցանելն զՊաղար և զայլսն՝ Աս-
տուծոյ Բանին . այլ միաւորեալն՝ ի միութիւն (ըստ
տպ. օրին. 'Է Բանին')՝ կրէր զիւրաքանչիւրսն՝ յոր-
ժամ կամէր, զմարդկայինն իբրև զմարդ, զի մարդ
էր, և զԱստուածայինն իբրև զԱստուած, քանզի
Աստուած էր ('Նցն. 'ի Թղթ. առ քահ. Յամայք նա-
շանգի) :

87

Օ կամն (Քրիստոսի՝ զԱստուածայինն և զմարդ-
կայինն) ոչ այլեայլ (հայուսուն) ասեմք, որպէս թէ Աս-
տուածային կամքն հակառակ լինել մարդկայնցն կա-
մաց, կամ մարդկայինն՝ Աստուածայնոյն . այլ 'ի միոյ
էութենէն կրկին եղելոց կամաց, ըստ այլեայլ ժամա-
նակի, երբեմն Աստուածային՝ յորժամ զԱստուածու-
թեանն կամէր ցուցանելզօրութիւն, և երբեմն մարդ-
կային՝ յորժամ զմարդկութեանն կամէր յայտնել ըզ-
խոնարհութիւն ('Ն. Շնորհ. 'ի Թղթ. առ Մ. կայսր):
— Ո՞չ եթէ մարդկային կամքն զԱստուածայինն
բոնադատէր . . . այլ՝ մարդկայինն Աստուածայնոյն հե-
տևէր կամաց ('Նցն. անդ):
— Կամէր ըստ Աստուածութեանն, վասն այնը և

Հետեւեցուցանէր Աստուածութեամն զկամն մարմնցն,
և ասէր՝ Ո՛չ իմ կամն, այլ քոդ լիցի (Գրիգոր Դ.
կաթող. 'ի Թղթ. առ Մ. կայսր):

88

Պ. ուկ. թ. 21: Մատթ. ա. 16. 23: Յով. դ.
25: Եսայ. Է. 14:

— Որ Աստուած էր և բան, յորժամ էջ յերկնից
յերկիր, կոչեցաւ Յիսուս՝ որ է Փրկչւ Քրիստոս՝ որ է
օհեաւ Տեր՝ առաքեալ (Ա. Լամբ. 'ի Մեկն. Առակ.
Ք. Լ.):

89

Յիսուս անուն՝ յեբրայականէն 'ի մերս Փրկչւթարդ-
մանի (Խոսրով. 'ի Մեկն. Փամ.):

— Յիսուս Քրիստոս ասելն՝ Փրկչւ և օհեաւլսի (Խոյն.
անդ.):

Տես և 'ի համարն 88:

90

Մատթ. ա. 21: Ի. 28: Ա. Տիմոֆ. ա. 15: Կո-
ղոս. ա. 13. 14: Երր. Ե. 9: Ա. Յով. դ. 14):

— (Եկն Քրիստոս) փրկել զժողովուրզն ոչ 'ի յայտ-
նի պատերազմցն որ ըստ աշխարհի, և ոչ 'ի մարմ-
նական ծառայութենէ, այլ 'ի մեղաց և յապականու-
թենէ (Ա. Ճնորհ. 'ի Մեկն. Յակ. Ճառ ա.):

91

Որ անձառ Աստուածութեամբ օծեալ զքո ծառայ-

ական կերպ, այսօր հաճեցար օծանիլ իւղով՝ ի մեղաւորաց (՚ի Շարակ.):

— Որ խոնարհեցար ՚ի մեզ իւղ թափեալ անուն Օծեալդ Աստուծց, խառնելով զԱստուածութիւնդ օծեալ զմարդկային առեր բնութիւն (անդ):

— Քրիստոս անուն՝ օքտու կոչի, այսինքն՝ Աստուած և մարդ. զի բանն մարմին եղե... և Աստուածութեամբն էօծ զմարմինն (Խոսրով. ՚ի Մեկն. Փամ.):

— Քրիստոսդ՝ ոչ սոսկ մարդկութեան է անուն, և ոչ լոկ Աստուածութեան. այլ օքտու թարգմանի, այսինքն՝ Աստուած և մարդ. վասն զի Աստուածութեամբն էօծ զմարդկութիւնն (Նոյն. անդ):

— Քրիստոսն անուն՝ ոչ յատուկ Աստուածութեանն է, և ոչ սոսկ մարդկութեանն... : Եւ արդ վասըն զի օծաւ մարդկութիւնն յԱստուածութենէ անտի, նմին իրի զվայելչականս զայս անուն ընկալաւ (Ս. Շնորհ. ՚ի Մեկն. Յակ. Ճառ ա):

— Օ, մարդկութիւն նորա՝ արար Աստուածութիւն նորա Տէր և Օծեալ (Աթանաս, Ճառ ա):

Տես և ՚ի համարն 94:

Երբ. դ. 14. 15: Ե. 10: Է. 21. 24: Մատթ. իա. 11: Գուկ. իդ. 19: ա. 32. 33: Յով. ժ. 37: Յայտն. ա. Յ: Ժէ. 14:

— Երբէ առնցյր զպատուիրանս օրինացն Մովսէս

՚ի ձեռացն Աստուծոյ (՚ի Սինէական լերին) . . . անդ
առնոյր զաւանդութիւն իշխանութեան Քահանայու-
թեան՝ Թագաւորութեան և Մարգարեկութեան ՚ի ձե-
ռաց Աստուծոյ։ Անդ ետ նմա (Աստուծած) զօրինակ
օծութեանն Քրիստոսի . . . Որ միանգամ յօրինակ նո-
րա օծանէին՝ անտի օծան։ Ուստի և օծէր Ահարովն ՚ի
Քահանայութիւն Տեառն, և առնոյր զբահանայու-
թեան թագն օծանել ըստ նմին օրինակի . . . Անդ ա-
րար Մոլսէս զարծաթի եղջեւը օծանութեան իւրոյ։
ուստի Քահանայքն և Մարգարէքն և Թագաւորքն օ-
ծանէին։ Անդուստ զայր կարգեալ օծութիւնն մի ըստ
միոջէ . . . զի աւանդապահք տային ցմիմեանս մինչև
ցՅովՀաննէս Քահանայ, մարգարէ և մկրտիչ, և ՚ի նա
հասեալ՝ իբրև ՚ի ժառանգ մնացեալ։ Զի ՚ի նա հա-
սեալ էր յառաջին նախնեացն, թագաւորացն, մար-
գարէիցն, և յօծելոց Քահանայիցն՝ իբրև յաւանդա-
պահ։ և նա ետ զբահանայութիւնն զօծութիւնն և
զմարգարէութիւնն և զթագաւորութիւնն ցՏէր մեր
Յիսուս Քրիստոս (Գ. Լուս. յԱգաթ.):

— Ի՞անդ Աստուծած երկեալ մարմնով յերկրի Քա-
հանայապետ Ճմարիտ (՚ի Շարակ.):

— Ա ասն անշափ բարերարութեան քոյ՝ անպա-
րագրելի Բանդ Հօր եղեր մարդ, և Քահանայապետ
մեր երկեցար (՚ի Խորհրդատետր Պատ.):

— Ե՛ր (Քրիստոս) Մարգարէ, և Քահանայ, և
Թագաւոր. ոչ զի ինքն կարօտ էր այնմ պատուց, այլ

վասն զանկեալսն յարուցանել (Սեբեր. ճառ թ. 'ի տնօրէնութիւն փրկէին) .

— Որոյ թագաւորութեանն ոչ զց վախճան ('ի շանգ.) :

— Օ թագաւորն Քրիստոս և զԱստուած խաղաղութեան օրհնեցէք ժողովուրդք ('ի Շարակ.) :

93

Պուկ. դ. 18: Եսայ. կա. 1:

— Վ կայեաց (Հոգին սուրբ) Միածնին Աստուածութեանն 'ի հոսանսն Յորդանանու . . . Նոյն ինքն է օծումն մարդացելցն Աստուածց (Գ. Նարեկ. ԺԱՂՈՂ. Բան չե) :

94

Պուկ. ա. 35:

— Օ ի թէպէտ ընդ օծմանն օրհնութեան (այսինքն՝ փոխանակ օրհնութիւնական օծման) Հոգին էր քեզ խակարար լրմամբ, և Աստուածութեան խառնութիւն բովանդակապէս (Գ. Նարեկ. ԺԱՂՈՂ. Բան դդ) :

— ԶԱ ստուածութիւնն 'ի մարդկութիւնն միաւորեալ օդուանուանէ. և Հոգին սուրբ էր 'ի վերայ նորա վկայ և յարդարիչ անձառելի տնօրէնութեանն 'ի ծննդեանն և 'ի մկրտութեանն (Ն. Լամբ. 'ի Մեկն. Պատ.) :

95

Ամառիջ. դ. 16: Մարկ. ա. 10: Պուկ. դ. 22:

— Ենակիղըն Բանդ Հօր, 'ի վախճան աւուրց խունարհեցար և առեր զկերպարանա ծառայի՛ իբրև ըգմարդ գտնեալ, եկիր մլրտիլ 'ի Յովշաննէ, և Հոգով օծեալ՝ վկայեցար 'ի Հօրէ, Դաշտ որդի իմ սիրելի ('ի Մեծ Մաշտոցի) :

— Տէրդ և կենդանարարդ՝ արարիչդ երկնի և երկրի 'ի յօծմանէ անտի (այսինքն՝ յետ մլրտութեան) սկսար քարոզել զաւետարանն արքայութեան, վկայեալ անտուստ 'ի Յովշաննէ՝ Օծեալ և Գառն Աստուծոյ՝ բարձօղ մեղաց աշխարհի (Գ. Նարեկ. յաղօթ. Բան դդ.) :

— Դարձեալ՝ և զայս մի՛ ոք տփիտասցի, թէ նոյն ինքն լքէնուն (լօհեւն) անուն՝ Տէրն մեր՝ Հոգով սեպհականեաց ներգործութեամբ, որ եկացն 'ի վերայ նորին մարմնոյ 'ի Յորդանան (Ն. Լամբ. 'ի Մեկն. Պատ.) :

— Ա կայեաց Հոգին՝ որ հանգեաւ 'ի վերայ նորա, թէ Նա է Հովիւ. զի ընկալաւ նա 'ի ձեռն Յովշաննու զբահանսցութիւն, զԱրքայութիւն (իմա՝ զթագաւորութիւն) և զՄարգարէութիւն (Եփր. 'ի Մեկն. Աւետ. Համաբարբ. դ. դ. դ) :

— Օծումն կոչի Հոգին սուրբ, զի երեելի անուամբն զաներևցի շնորհսն քարոզեսցէ. քանզի զառաջինն Թագաւորք իւղով եղչերն սրբով օծանէին, և քահանայք և մարգարէք. իսկ Հոգին սուրբ՝ որ էջ հանգեաւ 'ի վերայ Կենարին, յօրինակ, և ոչ 'ի կարօ-

տութիւն ինչ, առանց իւղյ երևեցաւ. Նաև յետոյ
զբաղումս առանց ջրյ լուսաւորեաց, և առանց իւղյ
զբաղումն էօծ (Սեբեր. Ճառ դ):

96

Երր. Է. 27. թ. 14.

— Եջ (Որդին Ա. Ե) 'ի ծառայութիւն, զի իւրով
մարմնովն լցցէ և կատարեսցէ զամնայն չափս կար-
գացն հանդիսի արդարութեանցն. զի միանգամայն
բարձցէ զկարիս տկարութեան մարմնոյ մեղացն, և մի-
անգամայն ինքն ինքեան քահանայացի Հօր իւրում,
և միանգամայն ինքեամբ հաճեսցէ մատուսցէ զինքն
պատարագ հաշտութեան Հօր իւրում, և նովին պա-
տարագաւն մատուսցէ ընդ նմին զհաւատսն խոստովա-
նութեան մերյ (Գ. Լուս. ԺԱԳԱԾ.):

— Յիշեսցուք զՏեառն մերյ մարդասիրութիւնն,
որ Աստուծոյ գոլով Որդի, սուրբ, անմեղ, անարատ,
զատեալ 'ի մեղաւորաց, և վասն մեր մեղաւորացս իւ-
րով մարմնովն կրեաց զարչարանս խաչին... ինքն
քահանայապետ՝ և ինքն պատարագ 'ի նմա գոլով
(Խոսրով. 'ի Մեկն. Ժամ.):

— Ես յսօր զենար Գառն Աստուծոյ վասն յանցանաց
նախաստեղծին, 'ի վերայ խաչին պատարագեալ՝ հե-
ղեր զարիւնդ 'ի փրկութիւն ('ի Շարակ.):

— Եղեւ (Որդին Աստուծոյ) իրեւ զմեզ մարդ...

մատոյց զինքն պատարագ կամք իւրովք, և երարձ
զպարտիս մարդկութեանս մերս (՚ի ԱԵԾ ԱՊԱՅՏ.):

97

Յովհ. ԺԻ. 49. 50. ԺՂ. 19.

98

Հռովմ. Ե. 21. Ղ. 3. ԺՂ. 9. Փիլիպ. Ի. 10. 11.
Մատթ. ԻՂ. 18.

— Մահուամբ ելոյծ զմաչ, և յարութեամբն իւրով զմեզ ՚ի մեռելութենէ մեղացն յարսց (Գ. Լուս.
՚ի Յաճախ. Ճառ. ը):

— Ի խաչին բևեռեցար Բանդ անըմբոնելի՝ մարմնով, և լուծեր զկապանս մեղաց, Քրիստոս Փրկիչ մեր (՚ի Շարակ.):

— Օ Թագաւորն Քրիստոս բարեբանեցէք, որ ՚ի յանձն էառ զմաչ Խաչի, և խափանեաց զմաչու թագաւորութիւնն (անդ):

— Ենմաշն՝ մարմնով վասն փրկութեան մերս ըզմաչ Ճաշակեաց, և խափանեաց զմաչու թագաւորութիւնն (անդ):

— Աւա ինքնիշխանութեամբ յարուցեալ՝ զմաչու ելոյծ զիշխանութիւնն (անդ):

— Թագաւոր Խոջուլութեան . . . : Զմարդարէին առեալ զօան, զոր կանխագուշակ տեսութեամբ պատմաբանեալ ասէր ՚ի գէմն Քրիստոսի. Ես կացի թագաւոր ՚ի նմանէ ՚ի վերայ լերին Ախոնի սրբսց նորա: Եւ դարձեալ

ասէ . Թագաւորեաց Աստուած՝ ՚ի վերայ հեթանոսաց ,
և այլն . . . Զի թէպէտե Աստուածութեամբ էր թա-
գաւոր յառաջ քան զյաւիտեանս ՚ի վերայ ամենայնի .
այլ զմարմնով թագաւորեն ասէ : Եւ զի արար խա-
ղաղութիւն արեամբ խաչին իւրայ , վասն որոյ և թա-
գաւոր խոսլութեան կոչէ (Խոսրով . ՚ի Մեկն . Ժամ.) :

— §էրն խաչին էառ զիշխանութիւն՝ ՚ի վերայ երկ-
րի ըստ մարմնոյ . . . Զի Աստուածութեամբն յառաջ
քան զյաւիտեանս էր իշխան ՚ի վերայ ամենայնի . խկ
մարմնով յետ խաչին ՚ի վերայ հաւատացելոց էառ
զիշխանութիւն (Նշյն . անդ) :

99

Յովհ . Ռ . 4 : Ժէ . 4 :

— Եւ զի՞նչ այն իցէ՝ որ ասեն , թէ կատարեաց
զկամն Հօր իւրայ . եթէ ոչ՝ զի իւրով մարմնովն բարձ-
րացուսցէ զանուն յաղթութեան կասարման արդա-
րութեան . . . Եւ զի՞նչ իցեն կամք Հօր նորա . եթէ
ոչ՝ զի զորդիս մարդկան զմերժեալսն ՚ի ներքոյ մահու՝
կանգնեսցէ ՚ի կենդանութիւն (Գ . Լուս . Ժ.գաթ .) :

— Լցեր զամենայն Հայրակամ տնօրէնութիւնս քո
(՚ի Պատ .) :

— Որ զշանդերձեալն խորհուրդ Հոգուովն յայտնեաց
տեսանողացն , և եկեալ կատարեաց Հօր և Հոգույ ա-
ռաքմամբն (՚ի Շարակ .) :

— Որ ըստ կանխաձայն մարդարէիցն եկիր ՚ի լրումն

Խորհրդայ. զոր անօրինաբար կատարեցեր վասն մերսյ
փրկութեան (անդ):

— Ամենայն Տնօրինականքն Քրիստոսի, Խոնարհու-
թիւնն, և Թափումն, և Ալքափիլն՝ ՚ի ծառայէն, և Նշա-
նագործութիւնքն, և Խան և Հարչարանքն, և Թա-
ղումն, և յարութիւնն, յայն սակս եղեն, որպէս զի
զիեանս և զԱստուածավաշութիւն մեզ շնորհեսցէ՝
զզուխն ամենայն բարեաց և զմայրն ամենայն առաքի-
նութեանց (Ս. Շնորհ. ՚ի Մեկն. Բ. Պետ. Ճառ ան):

100

Դուկ. իդ. 25. 26:

— Որ զնախազրեալսն առ ՚ի քէն Մարգարեիւք՝
եկիր կատարել (՚ի Շարակ.):

— Որ զխորհուրդ տնօրէնութեանդ քո ծանուցեր
տեսանողացն (անդ):

— Բազում այն էին Ճառք Մարգարեիցն, որ ըզ-
գալուստն Քրիստոսի գուշակէին, և զներգործութիւն
խաչին և զթաղմանն և զյարութեանն և զշամքարձ-
մանն: Եւ նորա գալստեամբն ՚ի զլուխ ելեալ կատա-
րեցան (Ս. Շնորհ. ՚ի Մեկն. Բ. պետ. Ճառ գ):

101

§Ես ՚ի համարսն 99 և 100:

102

Եկեղեցիք Աստուծոյ, և ժողովք ուղղափառաց (՚ի
Շարակ.):

— Խակապէս խոստովանիմք մայր եկեղեցի որոց 'ի Քրիստոս Հաւատացեալք (Սահակ Կաթող. 'ի Կանոնագիրս):

— Քամենայն ազգաց և 'ի լեզուաց՝ որք աշակերտեցան աւետարանին, և 'ի վէմն (Քրիստոս) Հաւատովք մերձեցան... յամենեցունց մի տաճար հոգևոր և մի եկեղեցի շինեցաւ (Ս. Շնորհ. 'ի Մեկն. Ա. Պետ. Ճառ. դ.):

— Օ Հասարակաց լրութիւն այսր եկեղեցւց քում սրբոյ Հովուաց և Հօտից՝ խնամեսցես 'ի մարմնի, և պահեսցես ու ղղափառ խոստովանութեամբ՝ ըստ Առաքելական աւանդութեանցն մինչև 'ի միւսանգամ գալուստ քո յերկնից (Նշն. 'ի Մեկն. Բ. Պետ. Ճառ. դ. 'ի Յորդ.):

— Ո՞ի եկեղեցի Քրիստոսի անուանիմք ամենայն քրիստոնեայքս (Ն. Լամբ. 'ի Մեկն. Պատ.):

— Կալարուք մեզ աղուէսս փոքրկունս զապականիսս այգեաց... Առաջ զաստանայ կռչէ, և այսէւ զեկեղեցի, որ են Հաւատացելոց անձինք (Գ. Նարեկ. 'ի Մեկն. Երգ.):

— (Եկեղեցի) է ժողովուրդ ընդ քահանայի միաւորեալ, և Հօտ ընդ Հովուի միակցեալ (Վիսլիանոս. 'ի Թղթ. կթ.):

104

Բ. Կորն. Ժ. 3. 4. Եփես. Ղ. 10—17. Ա. Տիմ. ա. 18. Ա. Պետ. ը. 11. Է. 8:

— ‘Ձեզ ասեմ, ովք եկեղեցիք միանձանց՝ և աշակերտութիւնք կրօնաստանաց . . . Տեսոն զինուորեալք (Գ. ‘Նարեկ. յԱղօթ. Բան Հք):

— Ո’ արդկայինս ազգի թշնամի է (սատանայ) (Կ. Լամբ. ’ի Մեկն. Սաղմ. Ճ՛ը):

105

Բ. Տիմոթ. դ. 7. Յայտն. դ. Ծ.:

— Յաղթանակ համբերութեամբ կատարեցիք զընթացս ձեր (ովք սուրբ Վկայք), և փոխեցայք յերկրայնոցս ’ի յերկինս. ընկալայք ’ի Քրիստոսէ զպսակս անապական (’ի Շարակ.):

— Յուսացեալքն յանուն քո սուրբ՝ պատերազմալք յաղթեցին թշնամոյն . . . Որք կամաւն իւրեանց անցին ընդ հուր և ընդ սուր, և դասակից եղեն վերին զուարթնոցն (անդ):

106

Եւ զի միշտ անդր (յազնուան) ժողովիմք, սովորութիւն ունիմք ԵԱԴԵԴ անուանել զայն յարանունապէս (յարմարսթեամբ), այլ ոչ բնաւորաբար (Սահակ Կաթող. ’ի Ճառն Եկեղ.):

— ԵԱԴԵԴ անուն տիրապէս ’ի վերայ ժողովրդեանն

առնու (Գիրն)՝ քան ՚ի տանն. ըստ այնմ, զօր Աստ-
ուած առ Մովսէս ասաց. Եկեղեցացը ինձ զժողո-
վուրդդ, այսինքն՝ Հովհանք... : Ապա ըստ պարզ տեսու-
թեան՝ ժողովին մարդիկս, և ոչ եթէ տունս. և սա
համանունաբար սոցա կոչի Եթէջան՝ իբր Ժողովարան
(Ն. Լամբ. ՚ի Մեկն. Պատ.) :

107

Հաւատամբ և ՚ի մի միայն ընդհանրական և առա-
քելական եկեղեցի (՚ի Հանդ.):

— Ա ասն միայնոյ՝ սուրբ՝ կաթուղիկէ և առաքե-
լական եկեղեցւոյ (՚ի Ժամագիրս):

— Օ խաղաղութիւն պարզեեա եկեղեցւոյ քում
սրբոյ... և հաստատեա ՚ի մի հաւատ զկաթուղիկէ
եկեղեցի (՚ի Շարակ.):

108

Հռովմ. ժը. 5: Եփես. դ. 1—6:

— Եռաքելական եկեղեցիք թէպէտև ընդ բազում
տեղիս են, սակայն մի ասին վասն միասնական հա-
ւատոյն (Խոսրով. ՚ի Մեկն. Պատ.):

— Ո՞ի Քրիստոս, մի մկրտութիւն, և մի եկեղեցի,
զօր ոչ Պաւղոս, այլ որ ինքեամբ ընդ մեզ խօսէր՝
յայտնեաց մեզ (Գրիգ. Կիթլ. Տղայ. ՚ի Թղթին առ
վարդ. հիւս. կողմանց):

— Ո՞ի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն, մի

Եկեղեցի 'ի զանազան ազգաց որոշեալ, և մլրժութեամբ ծնեալ և Քրիստոսի անուանեալ (Ա. Լամբ. 'ի Մեկն. Պատ.) :

109

Տես 'ի Համարն 103:

110

Յովէ. ԺԷ. 19: Երր. Է. 26:

111

Ա. Տիմոթ. Ա. 9:

112

Ա. Պետ. Ղ. 21: Յովէ. Ի. 23:

113

Եփես. Է. 25—27: Գործ. ԺԷ. 9: Ա. Պետ. Ղ. 9:

114

Գաղատ. Ղ. 27. 28: Կողոս. Ղ. 10. 11:

— Օյնչ է Կողոս. Սէպէտան, զի ամենայն Եկեղեցիք ուղղափառաց որ ընդ տիեզերս են՝ մի են... զի 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի՝ ուր և Հասանի Ճշմարիտ Հաւատացեալն յեկեղեցիս ուղղափառաց՝ իւր Եկեղեցի է, և ոչ որոշէ զնա՝ ոչ աշխարհն, և ոչ լեզուցն օտարութիւնն, այլ ընդունի որպէս մայր 'ի պիրկ իւր սաստիկ սիրով (Խոսրով. 'ի Մեկն. Պատ.):

— Տուն Աստուծոյ զեկեղեցի կոչէ՝ զժողովս յամենայն ազգաց գումարելոց 'ի նա, այսինքն՝ զազգս Հաւատացելոց (Ա. Շնորհ. 'ի Մեկն. Ա. Պետ. Ճառ Ժ):

115

Ամաթ. իդ. 14: Մարկ. ժդ. 15: Ղուկ. ժդ. 29:
Կողոս. ամ. 6:

— Կանոնակի անուանեալ է (եկեղեցի), զի ընդ ա-
մենայն տիեզերս ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս երկրի է. և
զի ուսուցանէ առանձինն և անպակաս ՚ի գիտութիւն
գալ մարդկան ՚ի կարևոր հրամանս (Վիրեղ Երոս.
՚ի կոչ. Ընծ. պլ. ժը):

116

Ամաթ. իը. 20:

117

Եփես. ը. 19. 20:

— Որ հաստատեցեր բանիւ զեկեղեցի քո՝ Քրիս-
տոս՝ ՚ի վերայ Առաքելական վիմի (՚ի Շարակ.):

— Ի վերայ վիմի հաւատոյ հիման Առաքելոց և
Մարդարէից շինեցեր գքո սուրբ զեկեղեցի (անդ):

— Դու ես վէմ, և ՚ի վերայ այգը վիմի շինեցից
զեկեղեցի իմ. արդարեւ իսկ վէմ է Ճշմարիս դաւա-
նութիւն հաւատոցն: Որպէս Պետրոս ՚ի վերայ Քրիս-
տոսի շինեաց զանձն իւր վկայութեամբ մահու, նոյն-
պէս և եկեղեցի շինեցաւ ՚ի վերայ Պետրոսի հաւա-
տոցն՝ ոչ միայն ՚ի Հռովմ, այլև ընդ ամենայն քաղաքս
և գեօդս մեծամեծս մինչև ցփոքունս, նոյն հաւատք և
նոյն հիմն և նոյն հաստատութիւն: Քանզի մի է Տէր,
և մի մլրտութիւն...: Եւ որպէս Պետրոս ՚ի Հռովմ

Հաստատեաց զեկեղեցին, նոյնպէս և այլ Առաքեալքն ըստ իւրաքանչիւր վիճակեցելում աշխարհացն, ուր հրամայեցաւ նոցա լի՛ առնել զաւետարանն Քրիստոսի (Եղեշէ 'ի ճառն՝ որ 'ի Քարոզ. Առաք.):

— Հայցեմք ողորմութիւն ամենայն եկեղեցեաց՝ որ յամենայն տիեզերս ըստ քարոզութեան Առաքելոցն շինեալ են, վասն որոյ և Առաքելուն կոչեմք։ Իսկ որք թիւրեալք են Առաքելոցն դաւանութենէ, նոքա ո՛չ ևս Առաքելուն կոչին։ Իսկ Առաքելական եկեղեցիք թէսպէտ և ընդ բազում տեղիս են, սակայն մի ասին վասն միտասնական հաւատոյն (Խոսրով. 'ի Սեկն. Պատ.):

118

Ո՛չինչ անվայելուչ և անսրբազան է ունել (Խորհրդոց եկեղեցւոյ) զգալի պատկերս, այլ Աստուածարժան տեսութեան է՝ օրինակս կերպացուցանել բնաւորականօք և մարդկավայելուչ պատկերօք (Գիոնէսիոս. 'ի գիրս Եկեղ. Քահանայապ.):

— Զկամի Աստուած կատարմանն պատճառանօք անսրբել զաւանդն Խորհրդոցն. զի՞ մի՞ ասիցես, թէ որովհետև մոօք բաւական եմ հասանել, զի՞ պիտոյ իցէ մկրտութիւն ջրոյ. և մեր այնու ուշ եղեալ է՝ յուցանել, թէ Աստուած կարող է և առանց ջրոյ տալ զպարգևս շնորհացն, բայց մեք չկարեմք առանց ջրոյ ընդունել զշնորհսն. նա բաւական է և առանց ջրոյն լուսաւորել, բայց մեք չեմք բաւական առանց ջրոյն

առնուլ զլուսաւորութիւնն (Սեբերիանոս. ճառ դ. վասն կրօն. և մլրտ.):

119

Յովլ. ա. 16. 17. Հռովլ. ա. 5:

— Ամենայն շնորհք Հոգւոյն յՈրդւոյ բաշխին (գ. Լուս. յԱգաթ.):

— Ի ձեռն Որդւոյ իջանեն ամենայն պարզեք 'ի Հօքքէ յարարածս (Խոսրով. 'ի Մեկն. Ժամ.):

Տես և 'ի համարսն 103. 108:

120

Չիք ինչ շնորհ՝ զոր առանց առաջնորդաց (իմա՞ Էպիստոլաց և ժամանակաց) տայ Աստուած. այլ վերստին ծննդեանն որ 'ի Հոգւոյն, և կենարար մարմնոյ և արեան Տեառն բաշխումն, թողութեան մեղաց դարձելոցն 'ի խոստովանութիւն ապաշխարութեան, և ամուսնութեամբ զուգութեան... և կամ այլ ինչ Աստուածատուր պարզեի միջնորդող՝ առաջնորդք եկեղեցւոյ լինին (Խոսրով. 'ի Մեկն. Ժամ.):

— Հոգիս այս սուրբ զօրացուցանէ զձեռս քահանայապետից 'ի շնորհաբաշխութիւն, քահանայից 'ի նուիրագործութիւն, սարկաւագաց՝ 'ի սպասաւորութիւն եկեղեցւոյ սրբոյ (Ն. Լամբ. 'ի Ներբող Հոգւոյն սրբոյ գալստեան):

121

Կործ է նոցա (ժամանակաց)՝ պատարագ մատուցանել,

և բաշխել զնոյն ժողովը երանն, մկրտութիւն առնել.
և ոչ յայլ ինչ համարձակել, այսինքն՝ ոչ օրհնել
սեղան (եկեղեցւոյ), և ոչ վիճակել զգք աստիճանի.
զի այս եպիսկոպոսին պատիւ է և իշխանութիւն (Ա.
Լամբ. ՚ի Խորհրդ. կարգ. եկեղ.):

Տես և ՚ի համարն 161:

122

Տես ՚ի համարն 120:

123

**Յովլ. դ. 3: Պուկ. ժդ. 3: Յովլ. դ. 52. 54. 55:
Տես և ՚ի համարն 134. 140. 141. 144. 145:**

124

Ա. Տիմոթ. ե. 22:

Տես և ՚ի համարն 151. 167:

125

Երր. դ. 4—6:

— Հաւատափք ՚ի մի մկրտութիւն (՚ի Հանդ.),

— Մի՛ ՚ի սմա (իմա՝ յեկեղեցւոց) լուացումն ՚ի
մահն Քրիստոսի (Գ. Նարեկ.) յԱղօթ. Բան Հե):

Տես և ՚ի համարն 126. 129:

126

Հոռվլ. ժա. 29:

— Պու մատչիս առ այն՝ որ մկրտէն. մատիր դու,
մի յերեսս հայեցեալ որ երեխն քեզ այլ վասն Հոգ-

ւզն սրբոյ . . . զի սա պատրաստեալ է դրոշմել վոգի
քո և տալ քեզ կնիք (Կիւրեղ Երուսաղ.՝ի Կոչ. Ընծ.
ՊԼ. ԺԷ):

— Օհեպէտ և մեղաւ (Ալբանեալն), ոչ կարաց տկա-
րութիւն մեղացն լուծանել զանբեկանելի կնիքն Տէ-
րունական (Եղիշ.՝ի Բանն վասն յիշատ. մեռել.):

— Անեղծական քո նկարագիր (Էնիդն առաստարեաւ հայ-
ուստիւսի)՝ նշխար պանծալի լուսոյ քրիստոնէական
փրկաւէտ կոչմանս՝ ընդ իս պահեսցի (Գ. Նարեկ.
Խլզօթ. Բան լր.):

— Ակրտութիւնն է անքակելի կնիք 'ի հոգին, որ-
պէս և կարգն և Դրոշմն (Գ. Տաթէ.՝ի Հատ. Ամառ.
Քարոզ լր.):

127

Տես 'ի Համարն 213:

128

Հռովմ. ղ. 3—5:

— Օ, որս են ընդ քեզ թաղեալ մահուամբ

Աւազանին մըկրոտութեամբ,

Յարո՛ ընդ քեզ քսյին փառօք ('ի Փամագիրս):

— Օ, որ օրինակ Յիսուս զաշխարհական զմեղսն
եկն առ յանձն իւր, և մեռաւ, զի և զմահ սպանցէ,
և զյարութիւնն հաստատեսցէ յարութեամբ իւրով.
այնպէս և զու իջեալ 'ի ջուրսն, և իբրև գրեթէ թա-
ղեալ 'ի ջուրս անդ՝ որպէս նա 'ի վիմին, յարիցես

միւսանգամ 'ի նորոգումն 'ի կենդանութեան ձեմեցեալ (Կիւրեղ Երուս. 'ի Կոչ. Ընծ. զլ. դ):

Տես և 'ի համարն 133:

129

Հռովմ. դ. 9:

— Խան՝ մկրտութիւն ասի, և մկրտութիւնն խաչ. ապա ուրեմն որ երկրորդ անգամ մկրտի, ցուցանէ՝ թէ Քրիստոս երկրորդ անգամ խաչեցաւ, որում չիք հնար լինել (Բարսեղ Ճոն. 'ի Մեկն. Մարկ. Ճառ ը):

— Ե, յնոքիկ՝ որ զերկուս մկրտութիւնս բերեն, ըզ-խաչելութիւն Որդւոյ Աստուծոյ և զիսայտառականս նորա խնդրեն: Այլ խաչելութիւն եղել միանգամ, և այլ ոչ ևս լինի. և մկրտութիւնն արդարացուցիչ տուաւ, և դարձեալ երկրորդում մեղաւորի նա ոչ լինի տուեալ (Եփրեմ. 'ի Մեկն. Երր. զլ. դ):

130

Որդին Աստուծոյ վասն այսորիկ եկեալ մկրտի, հաստատել զմկրտութիւն ամենայնի՝ որ մկրտելոց իցեն. զի անդ խակ զայս աւանդելով, փրկութիւն ամենեցուն յայտնեալ և 'ի միտ առեալ ծանիցի (Գ. Լուս. Ճագաթանդ.):

— Ե, ախ ինքն (Քրիստոս) սկսաւ զ՛ոգեւորական վերստին ծնունդն՝ մկրտելով Աստուածային բնութեամբ մարմնով ՚ի Յորդանան ՚ի Յովհաննէ. յո-

րում երկինք բանային, և Հոգին իջանէր, և Հայրական ձայնն զնա Ուրէ՛ դաւանէր (Ա. Շնորհ. 'ի Մեկն. Ա. Պետ. Ճառ. թ):

— Ակրտեցաւ (Յիսուս) 'ի Յովլաննէ, զի զըուրան սրբեսցէ, և զշնութիւն մեղացն ընկղմեսցէ 'ի նմա, և զշոգեորականն տացէ մեզ մկրտութիւն (Կ. Շնորհ. 'ի Թղթ. առ. Ալեքս):

— Եւ մկրտութիւն (Յիսուս 'ի Յովլաննէ) . . . զի մկրտութեամբ իւրով սահմանեսցէ զնա (Եփրեմ. 'ի Համարարբ. դլ. դ):

— ԶՀրէական մկրտութիւնսն լոեցուցանէր (Յիսուս) իւրով մկրտութեամբն՝ և մերումս սկիզբն արարեալ յառաջ խաղացուցանէր: Եւ որ ինչ իրք 'ի զատկին կատարեցան, նոյն և 'ի մկրտութեանն. Քանզի ընդ երկուսին էանց. և զմին դադարեցոյց, և միւսոյն սկիզբն արար: Նոյնպէս և զՀրէական մկրտութիւնսն 'ի զլուխ եհան, եկեղեցական մկրտութեանս զուռն երաց: Եւ որպէս յայնժամ 'ի միում սեղան զմին կատարեաց, և միւսոյն սկիզբն արար. Նոյնպէս և աստ 'ի միում գետ զմին դադարեցոյց, և միւսոյն սկիզբն արար: Քանզի զստուերն եղծ, և զՃշմարտութիւնն հաստատեաց (Յ. Ոսկեբ. 'ի Մեկն. Մատթ. գիրք Ա. Ճառ. Ժլ):

132

Իջուցանէ (քահանայն) զերեխայն՝ ի ջուրն, և ասէ (Այս անուն) ծառայս Աստուծոյ Եկեալ յերախայութենէ՝ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր և Որդոյ և Հոգույն սրբոյ . . . Եւ զայս միանգամ ասելով՝ Երիցս թաղէ (Շնորհացածնէ)՝ ի ջուրն՝ յօրինակ Երեքօրեայ թաղմանն Քրիստոսի (ի Մեծ Մաշտոցն):

— ԱԿրտէ զնա (պետեայն) քահանայապետն՝ Երիցս ընկղմամբք (Դիոնէսիոս. ի գիրս Եկեղ. Քահանայապ. մասն Բ. գլ. թ.):

Տես և ի համարն 133:

133

Օ յօրինակ մահուն Քրիստոսի յինքն նկարագրէ մկրտութիւնն աւազանին: Երիցս ընկղմելն՝ ի ջուրն՝ զերեքօրեայ թաղումն Յիսուսի նշանակէ, իսկ իջանել յաւազանն և ելանել՝ զյարութիւն Տեառն գուշակէ (Ս. Շնորհ. ի Մեկն, Ա. Պետ. Ճառ թ.):

— Արբազնաբար մկրտեալն՝ Երիք ի ջուրն ընկրղմամբք՝ զԱստուածապետական մահուանն և զերեքօրեայ թաղմանն կենսատու Յիսուսին բերէ զնմանութիւն (Դիոնէսիոս. ի գիրս Եկեղ. Քահ. մասն Բ. գլ. թ.):

134

Գործ. թ. 38: իթ. 16: Հոռվմ. ղ. 4: Գաղատ.
Ղ. 7:

— « Նորհօք արար զմեղ եղբարս իւր (Որդին Աստուծոյ) . և զարատ և զբիծ մեղացն լուծանէ զնորածը նելոցս աւազանաւն 'ի Հոգւցն , և ազատէ 'ի ծառայութենէ չարին . . . : Զի այսպէս է վերատին ծնունդ Հոգեոր աւազանին , որ զախտաւոր ծնունդն վերատին ստանայ առանց ախտի շնորհօք և մարդասիրութեամբ ամենասուրբ Երրորդութեանն (Գ. . Լուս . 'ի Յաճախ . Ճառ ը) :

— « Արածնեալքս մկրտութեամբ սուրբ աւազանին՝ այսօր տօնեմք ուրախութեամբ նշանաւ խաչի ('ի Ճարակ .) :

— Որ արարչակից ես Հօր և Որդւոյ (Հոգի սուրբ) . որով կենդանածնեալք 'ի ջուրս արարածք , այսօր որդիս Աստուծոյ ծնանիս 'ի ջուրց (անդ) :

— « Եռվաւ (Հոգի սուրբ) աւազանն զմեղ վերատին ծնանի՝ որդիանալ Աստուծոյ՝ ազատելով 'ի մեղաց և կենագործելով յանմահական կեանս (Խոսրով . 'ի Մեկն . Պատ.) :

— Որպէս հաւատացաք , եթէ այն՝ որ բնութեամբ Որդի էր Աստուծոյ , եկն եղեւ շնորհօք Որդի մարդոյ՝ ծնանելով 'ի կուտէն . նմանապէս հաւատամբ նովին չափով բնութեամբ , եթէ և մեք՝ որ բնութեամբ որդիք եմք Աղամայ , ծնանելով 'ի կոյս աւազանէն՝ լինիմք շնորհօք որդիք Աստուծոյ (Ս. Շնորհ . 'ի Մեկն . Յակ . Ճառ դ) :

Ըստման եաց մըս որմէ մըսաբան մըսամայ և մըս բան

Որպէս Էջ Հոգին սուրբ 'ի վերայ փառակցին իւրայ
'ի Յորդանան, նոյնպէս և 'ի վերայ ամենայն ուղղա-
փառ հաւատով մլրտելոց իջցէ, զորս և յորդեգրու-
թիւն Աստուած Հայր վերակոչէ շնորհօք (Ն. Շնորհ.
'ի Թողթ. Ընդհ. առ դասս քահանա. Քահան.):

— Եղաւնին յայնժամ (Է. Արքի Արքանութ) յայն սա-
կըս յայտնեցաւ . . . զի ուսանիցիս, թէ յորժամ դու
մլրտիցիս, նոյնպէս գայ Հոգին (Յ. Ասկեր. 'ի Մեկն.
Մատթ. Ճառ Ժի):

Տես և 'ի համարն 95:

Դ. սւկ. իդ. 49: Գործ. ա. 8:

— Որ 'ի լըրման քառասնեկին

Յետ յարութեան սուրբ Պատեքին,

Ի Զիթենեաց հաներ լերին

Օքնտեռեալ ըզդաս մետասանին.

Եւ զաւետիս Հօր ըզՀոգին.

Խոստանայիր շնորհել նոյցին (Ն. Շնորհ. յՈՂ-
բերգ. գիրք Գ.):

Գործ. ը. 1—4:

— ԶՀոգւցն սրբայ առին զզօրութիւն (Առա-
բեալքն), և զամենայն ազգացն լեզուացն բաժանելոց

ընկալան զգիտութիւն, զի ամենայն աշխարհաց որ ընդ
ամենայն տիեզերս մարդիկ իցեն՝ բաւական լիցին ու-
սուցանել զհրամանս Աստուածութեանն (Գ. Լուս.
յԱզաթ.):

— Լցան ամենեքին հոսանքը Հոգւոյն սրբոյ. ելին
ընդ տիեզերս՝ զի տայցեն զգիտութիւն սքանչելեաց
Աստուածութեանն, բազմազգեան լեզուացն առնուլ
՚ի միտ զնշանսն, զոր ետ յերկինս ՚ի վեր և յերկիր ՚ի
խոնարհ (Նոյն. անդ.):

Որ փոխանակ ծոցածին բանին որ ել յերկինս՝
առաքեցաւ աւետիքն Հօր՝ Հոգին ճշմարտութեան,
միմիթարել զորս յԱզամայ տրտմեցելոյ, և հրազինել
զընտրեալ զդասս Առաքելոցն (՚ի Շարակ.):

138

Պարծ. ը. 14—17: ԺՂ. 5—7:

— Եպա թէ ոչ տեսանիցես (այժմ զնշան ինչ զգա-
լի), մի լինիցիս չհաւատոալ: Քանզի ՚ի սկզբան չքնաղ
ինչ և հոգեօր իրաց՝ յայտնի միշտ երկին երեսք և
նշանք իմն այնպիսիք: Զ. ի թէպէտ և յետոյ այնպիսի
ինչ ոչ լինիցի, յայնմանէ որ միանգամ յայտնեցաւ ՚ի
սկզբանն, և զայլն ևս ընդունիցիս հաւատովք... Եւ
չեն ինչ պիտոյ մեղ այսուհետեւ կերպարանք երեսաց.
քանզի բաւական են ընդ երեսացն՝ հաւատքն հաւա-
նեցուցանել (Յ. Ասկեր. ՚ի Մեկն. Մատթ. Ճառ ԺՂ.):

Անու քահանայն զսուրբ իւղն՝ ի յափն իւր . . . և
կնքէ սուրբ իւղով զմակատն (մլրտելցյն) . . . զաշն . . .
զականջսն . . . զշոտոտելիսն . . . զբերանն . . . զձեռան . . .
զսիրտն . . . զքամակն . . . զտուն (՚ի Մեծ Մաշտ.):

— Ուրք ՚ի Քրիստոս Յիսուս մլրտեցան, զՔրիստոս
զգեցան . . . Ուրք իջին յարգանդ հոգեօր աւազանին
պարգևոք ամենասուրբ Երրորդութեանն . օրհնու-
թեամբ, և քահանայական խորհրդածութեամբ,
օժմամբ և Հոգուով ՚ի Քրիստոս լուսաւորեալ (Գ. Լուս.
՚ի Յաճախ. Ճառ ը):

— Արբազանին աստուածածնելութեան (Դրոշմի)
կատարողականն պարգև և շնորհչք՝ իւղյն Աստուա-
ծայնով կատարմամբ կատարի (Դիոնէսիոս. ՚ի գիրս
Եկեղ. Քահ. մասն Դ. զԼ. դ):

— Հարկ է օճանիլ այնմ որ մլրտեալ իցէ. որ-
պէս զի յառնուլ զմեռոնն, այս է՝ զօծումն, մարթաս-
ցի լինել օծեալ Տեառն, և շնորհազարդեալ (Կիպ-
րիանոս. ՚ի Թղթ. Շ):

Տես և ՚ի համարն 140:

Ա. Յովհ. ը. 20. 27: Բ. Կորն. ա. 21. 22:

— Բաղմացցց (սուրբն Գրիգորիոս) զամենայն եկե-
ղեցիս, և կացցց քահանայս. և Քրիստոսեան դրոշ-

մաւն զամենեսեան առ հասարակ ընծայեցուցանէր (լի) լինել ամենեցուն Հոգւովն սրբով (Ազաթ.):

— Որպէս յիջումն լուսարանի սուրբ աւազանին՝ լուացմամբ մարմնոյն՝ զանձինն հաւատամբ առնուլ օրբութիւն, այնպէս 'ի յօծումն իւղոյն պարարեալ յուսով՝ զՀոգւցն զօրութիւն սովիմբ և 'ի սոյն՝ համարիմբ ունել ամենայնիւ աներկմտելի (Գ. Նարեկ. Ազօթ. Բան դպ):

— Ո՛չ է առանց դրոշմի գրիլ Քրիստոսեան (Կոյն. անդ):

— Կընար անախտ զիս վերըստին,
Ատեղծեր նորոգ յաւազանին.
(Օ)ծեր իւղով քո երկնային
Յորդեգրութիւն Հօրըդ վերին (Կ. Ճնորհ. յԱշ-
բերգ. Գիրք Ա.):

— Աա (Հայոց առաքելք) օծանէ զմիտս մեր՝ ըստ Յով-
հաննու, և առնէ քրիստոնեայս և քրիստոսընկալու.
և յայսմ օծութենէ զօրանամբ զիտել զամենայն (Կ.
Լամբ. 'ի Կերը. գալստ. Հոգւցն սրբոյ):

— Կրոշմիւն քրիստոն եղայք (Կիւրեղ Երուս. 'ի
Խորհրդած. մեռնի):

— Առուրք միւռոնիս արժանացեալք քրիստոնեայ կո-
չիցիք, զՃշմարտութիւն անուանս վերստին ծննդեամբն
ստացեալք. զի մինչչե էր պարզեեալ ձեզ այս շնորհ,
այնմ անուան տիրապէս չեիք արժանի (Կոյն. անդ):

141

Ա. Կորն. Է. 10:

— Հաւատամբ . . . յապաշխարութիւն՝ ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց (՚ի Հանգ.):

— Օ աղտեղեալսն և զախտացեալսն հոգւով և մարմնով սրբէ ստոյդ խստովանութիւնն ըստ աւազանին շնորհի. որ գայցէ յապաշխարութիւն գործակցութեամբ Հոգւոյն սրբոյ, լինի նորուն բնակարան (Գ. Լուս. ՚ի Յաճախ. Ճառ Է):

142

Կործ. Բ. 37. 38:

143

Կործ. ԺԹ. 18: Եսայ. ԽՊ. 26: Ա. Յովհ. ՛ա. 9,

— Խոստովանել (պարտ է) զշանցանան, և զղանալ (Գ. Լուս. ՚ի Յաճախ. Գլ. Ղ):

— Ըետ մլրտութեան թէ դեպ լիցի մեղանչել, դարձեալ ծածկէ խոստովանութեամբն առանձինն մից առն յոյժ առաքինւոյ. զի ոչ ամենայն քահանայի պարտ է խոստովանել (Քարսեղձոն. ՚ի Մեկն. Մարկ. Ճառ ԽՊ):

— Եռանց խոստովանութեան չիք հնար քաւութիւն գտանել. վասն այսորիկ պարտ է փութալ ՚ի խոստովանութիւն, քահանային խոստովանել միանգամ, և Աստուծոյ՝ հանապաղ (Խոսրով. ՚ի Մեկն. Ժամ.):

— (Խոստովանել պարտ է) յանկեան միոջ զան-
խուլ՝ի լսողաց և 'ի տեսողաց՝ առաջի միոյ քահա-
նայի. և ոչ եթէ վայրապար քահանայի, այլ յօյժ
երկիւղածի և գիտնականի, որ գիտէ հմտաբար բժըշ-
կապէս սպեղանիս կազմել վիրացն և բժշկել զցաւս
ոպւցյն (Ա. Շնորհ. 'ի Մեկն. Յակ. Ճառ Ժամ):

144

Երբ. ժդ. 12: Եփես. ա. 7:

— Դարձո՛ (Հայր անսկիզբն) և զմեղ՝ի մեղաց՝ Որդ-
ւց քո չարչարանօք ('ի Շարակ.):

— Ուեւ բիւր չարեօք յառաջինսն վիրաւորեալ ի-
ցեմք, հաւատասցուք 'ի մարդասիրութենէն Քրիստո-
սի քաւութիւն և թողութիւն գտանել (Խոսրով. 'ի
Մեկն. Փամ.):

— Խւրաքանչիւր ոք իւրոց յանցանացն շահի զժու-
ղութիւն Քրիստոսիւ, Հոգուով սրբով (ԿիւրեղԱղեքս.
'ի գիրս Պարապ.):

145

Երեմ. լա. 34: Եսայ. ա. 18: խդ. 25: Եղեկ. լդ.
11: Բ. Պետ. դ. 9: Ա. Յովհ. ա. 9:

— Ամենայն մեղաւորաց ապաշխարութեամբ լինի
թողութիւն (Եփեմ. 'ի Մեկն. Համարաբ. դլ. ժ):

— Համարձակութեամբ ասեմ, թէ չի՞ք մեղք որ
ապստամբին և ապստամբեսցեն յապաշխարութենէ
(Կոյն. անդ):

— Ով ոք դիմեալ կալւու զեղչերաց սեղանոյ այսր սրբութեան (այսինքն՝ ԱՄԵԼՅԱՆ), և ոչ առժաման պըրծեալ 'ի պատժոց՝ անարատ գոտու (Գ. Կարեկ. ԺԱՂՈՑ. Բան. իշ):

— Եւ ընդ ձառելցոյ զթիւ մեղացու . . . արդարացայց յանուն քո հզօր. և 'ի պատմելս ինձէն զանձին իմոյ բիծ, և դու թողցես զամբարշտութիւն բազում մեղանաց խոստովանելցոյ՝ հզօր ծածկատես ամենափրկիչ (Կոյն. անդ):

— Որպէս ոչ է առանց Քրիստոսի Աստուծոյ՝ ոգուց փրկութիւնն . . . այսպէս և ոչ տուանց խոստովանութեան ծածկութից՝ և սուգտանաց անձին՝ քաւութիւն (Գ. Կարեկ. ԺԱՂՈՑ. Բան 3):

Կոյսպիմի է ապաշխարութեան ջերմութիւն, որ ոչ 'ի մարմնոյ աշխատութիւն խնայէ, այլ նեղէ և մաշէ և տառապեցուցանէ, և խնդրէ միայն զմեղացն թողութիւն և զախտից ոգուցն բժշկութիւն . . . Զի է և պահօք և ծովածան պընութեամբ զմեղս քաւել. Է և աղօթիւք և խնդրուածովք և գորովագին պաղատանօք զմեղս քաւել. Է խորպով և մոխրով և գետնախշտի անկողնօք զմեղս քաւել. Է և լալով և աղբայով և զըթով տնամնկաց զմեղս քաւել, և այլն (Յով. Մանդակունի. Ճառ. ա. վասն խոստով,):

— Որպէս աղզի աղզի են մեղացն ճամփապարհք,

Նոյնպէս և զանազան են դեղք ապաշխարութեանն ,
որով կարող ես բժշկել զամենայն հիւանդութիւնս մե-
ղաց , ոչ թուովք ամաց և բազում ինչ ժամանակօք ,
այլ միայն ուղիղ դարձիւ և սրտիւ 'ի չարեացն հեռա-
նալով կարող ես արդարանալ (‘Սոյն . Ճառ ը . Վասն
ապաշխ .) :

147

Մատթ . իշ . 17. 21. 26. 28 : Մարկ . ժիշ . 12.
17. 22—25 : Ղուկ . իշ . 7. 14. 19. 20 : Ա . Կորն .
Ժա . 23—25 :

148

Արժան է և զշացն անխմոր և զգինին անապակ հա-
նել 'ի սեղանն՝ ըստ աւանդելոյ մեզ սրբոյն Գրիգորի .
զի սուրբ Լուսաւորիչն յօրինականէն բերեալ զայս՝
Առաքելաբար հրաման ետ կատարել իւրոց վիճակե-
լոցն . և մեզ 'ի նմին պարտ է յարանալ , և չառնել նո-
րածես ինչ (Յովհան Իմաստ . 'ի կանոնն ը) :

— Գրեալ եր 'ի գիրս վասն մեր և այս ինչ , թէ զի-
նեաւ միայն՝ առանց ջըսյ խառնման մատուցանեն ըզ-
պատարագն . . . : Ի Լուսաւորչն մերմէ 'ի սրբոյն Գրի-
գորէ ունիմք զայս աւանդութիւն , որպէս ընկալաւ նա
'ի նախնեաց սրբոց Հարցն՝ որ յառաջ քան զնա (‘Ն .
Շնորհ . 'ի Թղթ . առ Ալեքս) :

149

Ա . Կորն . Ժ . 16 :

— Անդ մատուցանէր (Ս. Գրիգորիոս) զօրհնութեան պատարագն. հաղորդէր զամենեսեան 'ի խորհուրդն սրբութեան. բաշխէր ամենեցուն զսուրբ մարմինն և զպատուական արիւնն ամենափրկչին Քրիստոսի՝ զկենդանարարն և զկեցուցիչ ամենայն մարդկան, և զարարիչն և զաշխարհագործն ամենայն աշխարհի, զԱստուածատուր շնորհն առ ամենեսեան (Ազաթ. 'ի Պատմ.):

— Հաւատալ (պարտ է) և զփրկական խորհուրդն ստուգապէս մարմին և արիւն Քրիստոսի. որով միանամք 'ի Քրիստոս, և ժառանգակից նորուն լինիմք...:

— Այս է խորհուրդն. զի՞ ո՛չ ըստ տեսանելոյն, այլ ըստ իմանալոյն է հաւատալն. զի տեսանի հաց և զինի, և իմանի մարմին և արիւն Որդոյն Աստուծոյ. և փրկական կոչի, վասն զի փրկեցաք նովաւ և փըրկիմք՝ 'ի կեալւ 'ի մեռանել (Խոսրով. 'ի Մեկն. Պատ.):

— Աչք կրկին պարտ է ստանալ մեզ՝ մարմնոյ և հոգւոյ. զի մարմնոյ աչօք տեսանեմք հաց 'ի ձեռս քահանայից, իսկ աչօք հոգւոյ տեսանեմք զնոյն հաց՝ զարձեալ ճշմարտապէս 'ի մարմին և 'ի միտք և 'ի հոգի բանին Աստուծոյ, որպէս և միացոյց ընդ Աստուածութիւնն իւր զ'ի կուսէն առեալն զմարմին (Բարսեղ Ճռն. 'ի Մեկն. Մարկ. գլ. ժդ):

— Հաւատալ և 'ի մարմին և յարիւն Որդոյն Աստուծոյ, որ պատարագի 'ի վերայ սրբոյ սեղանոյն՝ թէ

Ճշմարտապէս է նա մարմին և արիւն Քրիստոսի (Գ. Նարեկ. 'ի Հրահանգս հաւատ.):

— «Աշանակաւ հացին տուեալ լինի քեզ մարմին, և նշանակաւ գինեոյ տուեալ լինի քեզ արիւն (Յ. Ոսկեր. 'ի Խորհրդած. ճառ դ. համար 3):

150

Ա. Յովհ. ա. 7. Յովհ. դ. 52—57:

— Կանգնեալ 'ի սմա (յէկէղեց) սեղան սրբութեան, բաշխէ զմարմին իւր և զարիւն, և տայ 'ի սմանէ մեղնորդութիւն 'ի թողութիւն մեղաց մերոց, ('ի Շարակ.):

— Սբ սովոր եմք կոչել զմարմին և զարիւնն Քրիստոսի, զոր միշտ ճաշակեմք, և սրբիմք նովառ (Ն. Լամբ. 'ի Մեկն. Սաղմ.):

— Որ ոք ճաշակէ զայն Խորհրդաց (Կառլոբրունիան) զօրութիւն հաւատով և սիրով, սրբի 'ի մեղաց (Կոյն. 'ի Մեկն. Պատ.):

— Հոգուրդանիւն կոչէ, զի կյորդինա մեզ, և մեք նմա (Խոսրով. 'ի Մեկն. Պատ.):

— Ոչ միայն խօսել ընդ Աստուծց՝ ըստ Մովսիսի՝ կայ մեր առաջի, և կամ տեսանել զյետոյսն Աստուծց, այլ և ձեռօք շօշափել զանշօշափելին, և շըրթամբք համբուրել զՏէրն, և բերանով ճաշակել ըզկերակրիչն ամենայնի և 'ի սիրտս ընդունել, և հոգուվ միանալ ընդ նոյն, և լինել ասաւածշնորհօք՝ ընդ Աս-

տուծոյ միաւորելովն (Ա. Շնորհ. 'ի Թղթ. Ընդհ. 'ի Բանն առ քահ.):

— Որք արժանապէս ճաշակեն զչացն յերկնից իշեալ՝ զտուողն կենաց աշխարհի, և ըմպեն... զարիւնն անմահացուցիչ կենդանւոյն Աստուծոյ, որքան քաղցրութեամբ լնուն, և աստուածատեսակը եղեալ և յԱստուած միացեալ, ճանաչեն զի քաղցր է Տէր: Եւ գիտեն զայս իսկապէս խորհրդազգածք խորհրդոյն. նոցա թողում իմանալ՝ եթէ որք առանց խղճի մտաց մերձենան 'ի սուրբ սեղանն, և ճաշակեն զմարմին անարատ գառինն, և ըմպեն զմեղսաքաւիչ արիւնն, որքան ուրախութեամբ լնուն ընդ Աստուած միանալովն (Ա. Շնորհ. 'ի Մեկն. Ա. Պետ. Ճառ. դ.):

— Օր ըստ օրէ զայս արիւն պատարագեալ Հօր՝ քաւիմք 'ի պարտեաց մեղացն, որպէս գրեալ է. «Արիւնն Յիսուսի սրբէ զմեղ յամենայն մեղաց» (Ա. Լամբ. 'ի Մեկն. Պատ.):

151

Առանց խոստովանութեան՝ մեղք ոչ քաւին, և առանց ապաշխարութեան՝ Հաղորդութեան արժանի ոք ոչ լինի (Խոսրով. 'ի Մեկն. Ժամ.):

— Աքքրեա զմիտս և զխորհուրդս (մեր), զի և մէք հաղորդեսցուք սրբութեամբ ('ի Շարակ.):

— Աքքուր հոգով և սուրբ սրտիւ, և անարատ հաւատով, և մեծաւ յուսով, և պարզ մոօք, և կա-

տարեալ սիրով, աշխւ և գողութեամբ սպասաւորեցէք Աստուածային խորհրդայն (ովքահանայք), և մի իբրև ջուր ընդ խողովակ անցանէք անմտարար ընդ խորհրդական բանս աղօթիցն՝ զոր մատուցանէք... Մի՛ ոք ՚ի ձէնջ անարժանութեամբ Աստուածային խորհրդայն սպասաւորեցէ, և կամ զոք ՚ի ժողովրդենէն անքննաբար հաղորդեցուսցէ, զի մի՛ ընդ Յուղայի և ընդ խաչահանուացն դատապարտեսցի: Մի՛ ոք ծածկեալ յոզի իւր զգործս մեղաց՝ առանց ճշմարիտ խոստովանութեան, և այնպէս մատիցէ ՚ի Տէրունական խորհրդայն սպասաւորութիւնն, զի մի՛ զբարկութիւնն Աստուծոյ շարժեսցէ ՚ի վերայ ինքեան և աշխարհին, և ՚ի բաց ընկեսցի յԱստուածային հարսանեացն... Եւ արդ աղաչեմք, մի՛ որպէս մարմնական ինչ գործ վարկանելով զերկնային խորհրդայն կատարումն, այլ աշխւ և գողութեամբ սպասաւորեցէք Աստուածայնոցն. զի թէ սերովքէն սուրբ յօրինակն՝ ունելեաց կարօտանայր՝ մերձենալով՝ ՚ի կայծակունս որ ՚ի վերայ սեղանոցն, մեղ հողեղինացս և մեղաւորացս՝ քանի՞ մաքրութիւն և զգուշութիւն պիտոյ է յաղագս առ ճշմարտութիւն այնր օրինակի մերձենալոյ: Վասն որոյ զմիտս և զզայարանս պարտապան էք պարսպել յամենայն վասսակար իրաց սպասաւորքդ սրբոյ խորհրդայն յամենայն ժամանակի, առաւել յայնմ առուր՝ յորում յԱստուած մերձենալ հանդերձեալ իցէք: Զի թէ Մովսիսի ասացաւ յԱստուծոյ՝ ոչ կոխել մեռեալ

մորթովք զտեղին՝ ուր երևեցաւ հուր Աստուածութեանն, ո՞րքան մեզ արժան է լուծանել զմեռելութիւն մեղաց 'ի մէնջ, և ապա յԱստուածայինն մերձենալ խորհուրդ (Կ. Ճնորհ. 'ի Թղթ. Ընդհ. 'ի Բանն առ քահ.):

152

Մատթ. Ժթ. 6:

Տես և 'ի համարն 154.

153

Օննդ. ա. 28:

— Յանուն քո կենդանի Աստուած և Տէր՝ արարիչ երկնի և երկրի. որ արարեր զամենայն ինչ բանիւ հրամանաւ քով ստեղծեր զմարդն զառաջին զԱղամ և հաստատեցեր 'ի նմանէ զամուսնութիւն Եւայի, և պսակեցեր թէ Ահա բարի են յցժ (Կ Մաշտ.):

154

Եփես. Է. 25. 28—32:

Ո՛չ խոտեցեր զամուսնութիւն, այլ սրբեցեր զնա և քահանայապետարար օրհնեցեր և հաստատեցեր անսուտ բանիւդ, թէ Զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ (Կ Մեծ Մաշտ.):

155

Ա՞յլ ոք 'ի քահանայից 'ի բռնութենէ բռնաւորաց՝ առանց կամաց առնն և կնոջն՝ Պսակ դիցէ...: Զի

Պսակն այն անհաստատ է և լուծանելի, և Պսակա-
դիրքն ոչ առանց պատճոց (Ա. Շնորհ. 'ի Թղթ.
Ընդհ. 'ի Բանն առ Քահ.):

156

Ա. Կորն. Է. 10. 39. Հռովմ. Է. 2.
Տես և 'ի Համարսն 152. 154.

157

Տես 'ի Համարն 147:

158

Դուկ. Իդ. 50:

159

Ակիզըն եպիսկոպոսութեան եղել յայնմանէ՝ որ երդ-
մամբ առ գքահանայութիւնն 'ի Հօրէ՝ ըստ կարգին
Մելքիսեդեկի, ոչ ըստ Աստուածութեանն՝ այլ ըստ
մարդկութեանն...։ Եւ զնոյն քահանայութիւն՝ զոր
ինքն 'ի Հօրէ ընկալաւ յաղագս խաչին մահու 'ի վե-
րայ այնոցիկ՝ զորս գնեաց արեամբ իւրով, շնորհեաց
աշակերտաց իւրոց 'ի ժամանակի Համբառնոլոյն յեր-
կինս՝ ըստ աւետարանին Դուկայ, թէ Եդ ձեռն 'ի վե-
րայ նոցա և օրհնեաց զնոսա (Ա. Շնորհ. 'ի Թղթ.
Ընդհ. 'ի Բանն առ Առաջնորդս եկեղեցւց):

— Եհան զնոսա 'ի զլուխ լերինն... և ամբարձեալ
զձեռս իւր Աստուածեղէնս՝ օրհնեաց զնոսա, տալով
նոցա զամենայն շնորհս Աստուածայինս և զամենայն

աստիճանաց բարձրութիւնս . զի այնպէս ունիցին և
նոքա տալ որոց յետ նոցա փոխանորդութեամբ լնուն
զնոյն պաշտօն (Խպնատ . ՚ի Մեկն . Ղուկ .) :

— Ամենակալ ձեռին օրհնեցեալք ՚ի գովեցեալ ա-
ւուրն Համբարձման . . . Մասնակից կրօնից Օծու-
թեամբ Փըկչին ձեռնազրեալք (Գ . Կարեկ . ՚ի Ճառն
Առաք .) :

— Ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա , երկ-
նաստեղծ ձեռօքն ձեռնազրելով զԱռաքեալսն , և
յայնմ աւուր արար զնոսա կաթողիկոսս (՚ի Մեկն .
Ղուկ .) :

160

Գործ . ա . 21—26 : Ժդ . 2—6 : Ի . 28 : Եփես .
Ղ . 11 . 12 : Ա . Տիմոթ . Ղ . 14—16 : Ի . 17 :

— Ծաներուք և զայս (ո՛վ քահանայք) . զի կո-
չումն անուան քահանայութեանդ ձերոյ՝ ոչ է ՚ի մարդ-
կանէ , և ոչ ՚ի ձեռն մարդոյ , այլ յայնմանէ՝ որ կո-
չեցաւն քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի , որ և
ինքն է քահանայ և քահանայապետ , և պատարագ
Աստուծոյ Հօր . և նա ետ ձեզ զկոչումն անուան իւ-
րոյ , և յանձն արար ընդ անուանն և զգործն իւր՝ հո-
վուել զժողովուրդ իւր , և ուսուցանել միշտ զգործս
բարիս , և տալ զանձն օրինակ բարեաց ամենեցուն . . .
Վասն որոյ աղաչեմք , զի ըստ անուանդ կոչման և
զգործն կատարեցէք : Եւ որպէս հարք և ծնողք ժո-

զովրդեան ձերոյ՝ յամենայն ժամ՝ տուք նոցա զհոգեւոր
խրատս, միշտ ուսուցանելով յեկեղեցւոջ, 'ի հրա-
պարակս, և առանձին զամենայն ոք՝ ըստ իւրաքանչիւր
հասակի, զգուշացուցանելով և յորդորելով յԱստ-
ուածայինսն (Ն. Շնորհ. յԲնդհ. 'ի թանն առ դասս
քահ.):

§Ես և 'ի համարն 120:

161

Կանոն և սկիզբն կարգի եօթն Աստիճանաւորաց ե-
կեղեցւոյ՝ Դպրաց, և Սարկաւագաց, և Քահանայից,
որք ձեռնադրին Խպիսկոպոսաց. և նախ՝ աստիճա-
նաց Գղերիկոսացն՝ որք են Սաղմոսերգուք և Աւելա-
ծուք. ապա և այլոցն ըստ իւրաքանչիւր կարգի ('ի
Մեծ Մաշտ.):

162

Ի բազումն և 'ի զանազանս անուանին * անուանս
և իրս մի գործ Տեսչութեանս ոգւոց, որ կոչե կաթու-
ղիկոսութիւն և Հայրապետութիւն, Եպիսկոպոսու-
թիւն, և Քահանայութիւն. և մի քան զմի առաւե-
լեալ և նուազեալ (պատուովք և իշխանութեամբք):
Քանզի որ մեծն է 'ի սոսա՝ ծանրագունի բեռանց է 'ի
նեղբայց, որպէս պարունակօղ զամենայնն (Ն. Շնորհ.
'ի Թղթ. Ընդհ. առ համօրէն Հայս):

* Ըստ այլ օրինակաց՝ բայտանին:

— ՚ դասակարգութիւն երկնաւոր քահանայապետութեանցն ուղղեաց (եկեղեցի) զկանոն և զաստիճան պաշտօնէից խրոց . քանզի նոքա՝ որպէս այնորիկ խորհրդագրացքն պատմեցին մեզ, ոմանք անընդմիջաբար են շուրջ զԱստուծով, այսինքն՝ Ամոռքն անուանեալ և Քերովքէից և Սերովքէից դասակարգութիւնքն, որոց համատիպք են Արքեպիսկոպոսք՝ Եպիսկոպոսք և և Քահանայք . և այլք յետ նոցա՝ Տէրութիւնք, Զօրութիւնք, Իշխանութիւնք, զորս գաղափարեն Սարկաւագք և Կէս սարկաւագք և Սաղմոսերգուք . և Երրորդ դաս ՚ի նոսսա՝ Պետութիւնք, Հրեշտակապետք, Հրեշտակք, որոց ապացոյց են Կրօնաւորք, Ժողովուրդք և Երեխայք . որպէս զի լիցի և աստ ինն դասակարգութիւն պաշտօնէից Աստուծոյ՝ զանազան պատուովք և իշխանութեամբք (Ն. Լամբ. ՚ի Խորհրդած . Կարգ . Եկեղ.):

§Ես և ՚ի համարն 121 :

163

Քորժամ հանդերձեալ էին Առաքեալքն Քրիստոսի ելանել յաշխարհէ, ընտրէին ՚ի հաւատացելոց անտի արս երկիւղածս և իմաստունս, և կացուցանէին վոխանակ խրեանց՝ զլուխ ժողովրդեանն ՚ի քաղաքս և ՚ի գաւառս, զորս և Նպաւտուս անուանեցին, որ թարգմանի ՑԷՒՆՆՈՒ . . . Պարտ է զիտել և զայն՝ թէ յաղագս որոյ պատճառի եղաւ ՚ի Քրիստոսէ և յԱռաքելոց նո-

րա այս գործ Եպիսկոպոսութեան . յայտ է թէ վասն լինելց Գլուխ և Հրամանատար քահանայից և ժողովորդոց , և որպէս զՊէտ աննիրհ աչօք մտացն նայել 'ի վերայ ամենեցուն , զթիւրեալսն ուղղել , և զուղիղսն հաստատուն պահել յուղղութեանն (Ն. Շնորհ . 'ի Թղթ . Ընդհ . 'ի Բանն որ առ Առաջն .) :

164

Ունին (Կաթողիկոսք) առաւելութիւն պատուսյ քան զԱրք Եպիսկոպոս : Զի ոչ եթէ յիւր վիճակն միայն , այլև ընդ ամենայն տեղիս՝ ուր ազգն իւր և համացեղքըն են , ունի (Կաթողիկոսն) իշխանութիւն ձեռնադրել նոցա Եպիսկոպոս , և տալ զմեռոնն . վասն այնորիկ անուանի Կանոնչիս * (Ն. Լամբ . 'ի Խորհրդած . կարգաց եկեղ.) :

165

Գործ . ղ. 5. 6 : ժղ. 2. 3 : ժղ. 22 : Բ . Կորն . ը .
19 : Ա . Տիմոթ . ղ . 14 : Բ . Տիմոթ . ա . 6 : Երր . ղ . 2 :
— Եղեալ ժողով բազում եպիսկոպոսաց 'ի քաղաքն կեսարացւոց՝ զի ձեռնազրեսցեն զսուրբն Գրիգորիոս , և աւանդել 'ի նա զպատիւ խոնարհութեան քահանայութեանն Քրիստոսի , և զբարձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորութեան Աստուծոյ՝ զպատիւ մեծ , սրբով աւետարանաւն եղին 'ի վերայ զձեռու

* Որ թարգմանի՝ Ընդհանուրածոն :

ժողովք եպիսկոպոսացն սրբոց, և զիշաւորն Պ. Առն-
դիոս, զի առցէ նա իշխանութիւն յերկինս և յերկ-
րի, առնուլզիականս արքայութեանն երկնից (Ազաթ.
՚ի Պատմ.) :

166

Ել. Իշ. 41: Պ. Առ. Շ. 12:

— Քահանայք պատուեալք օծմամբ սուրբ Հոգ-
ոյն ('ի Շարակ.) :

— Քահանայս օծեմք, և կնզուղ տամբ (Ն. Լամբ.
՚ի Խորհրդած. կարդ. եկեղ.) :

— Եպիսկոպոսն առաջի սրբոյ սեղանցն՝ ինձ զա-
բեղայութեան ետ ձև յետ օծելցն քահանայ (Նոյն.
անդ.) :

— Խորհուրդ կենաց 'ի կիր արկեալ
ՅՈՒստուածայնոցըն հրամայեալ.

Օ. ՚ի հօտապետ հօտիցն օծեալ (զԱ. Գրիգորիոս),
Օ. այն որ հօտին փըրկանք եղեալ (Ն. Շնորհ. 'ի
Ախպաս.) :

— Եպա գումարեցին զիշխանս մեծամեծս, զի առ-
ցեն զցանկալին Ներսէս, և գնասցեն (՚ի Կեսարիա)
ուր սովոր էին զՀայրապետսն օծանել (Փաւատոս. 'ի
Պատմ. դպ. Դ. Պ. Պ. Ռ.) :

167

Ի. Տիմոթ. Ի. 2: Ա. Տիմոթ. Ռ. 2. 7. 9: Տիմ.
ա. 7. 9:

— ԶԵ բաւական (քահանայի կամ եպիսկոպոսի) միայն սրբութիւն անձին, այլ պարտի զկատարեալն ունել զգիտութիւն Աստուածայնոցն. զի՞ ի խնդրելն ՚ի նմանէ զճանապարհս ընթացից օրինացն Աստուծոյ ժողովագեանն՝ կարող լիցի ցուցանել զուղիղն (Ն. Լամբ. ՚ի Մեկն. Պատ.) :

168

Ովս. դ. 6. Ա. Տիմ. դ. 3. 6. 8. Ե. 22. Տիտ.
ա. 7. Կ. Կտ. իա. 17—23:

— Յայսմ ախաէ (յարծութիւններ) է զանարժանս յառաջ կոչել յԱստուածայնոցն սպասաւորութիւն ՚ի կորուստ կոչողացն և կոչեցելոցն, և զարժանաւորս յետս կացուցանել, զպիղծս իբրև զսուրբս, և զսուրբս իբրև զպիղծս վարկանելով: Եւ բիւրք են առ ՚ի նմանէ խառնախնդորեալ կարգք յեկեղեցւոջ, որք խոտելիք են Աստուծոյ (Ն. Շնորհ. ՚ի Թղթ. Ընդհ. ՚ի Բանն առ Առաջնորդս):

169

Յակոբ. Ե. 14. 15:

170

Գործ. Իշ. 8:

171

Ամարկ. դ. 13. Տես և ՚ի Համարն 169:

172

Օյւղն աղօթքն զօրաւոր առնէ և դեղ բշկութեան

կատարէ. վասն որոյ թէ երկոքին լինիցին՝ բարի է. և եթէ վասն ծուլութեան կամ այլ պատճառի իրիք օծութիւն իւղյն խափանի, աղօթիցն լինել պարտ է առանց ամենայն պատճառի (Խոսրով.՝ ՚ի Մեկն. Փամ.) :

— Առաքեալքն զբժշկութիւնս՝ զոր կատարէին, անուամբ Տեառն առնեին. . . Ապա յայտ է յայսմանէ, որպէս եսս վարկանիմ, եթէ ոչ իւղն ինչ տայր զառողջութիւն հիւանդին, այլ՝ անունն Տեառն. . . նմին իրի ասէ. Եւ աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն, և յարուսցէ զնա Տէր (Ս. Շնորհ.՝ ՚ի Մեկն. Յակ. Ճառ Ժան) :

173

Խուրբ զշողին կենդանարար՝ որ բաշխէ առատապէս զբաղմապատիկ պարզեւս յեկեղեցիս արդարոց, գովեցէք (՚ի Շարակ.).

— Աղիւր անսպառ (սուրբ Հոգի), յորմէ բաշխի տիեզերականն շնորհք (անդ):

— Աստուածայինքն ամենայն՝ պարզեք են և տուրք և ընծայք, զոր շնորհէ տիրաբար ծառայից իւրոց. զի ըստ գործոց ոչ ունիմք համարձակութիւն ինդրել ինչ, այլ միայն ՚ի հաւատն ապաւինիմք (Խոսրով.՝ ՚ի Մեկն. Փամ.):

— Տուրք Ասառւծոյ՝ շնորհք և ողորմութիւն են, այսինքն՝ ձրի ողորմելով (Կոյն. անդ):

— Շնորհք կոչեմ զառանց փոխարինի տուրքն,

որպէս այս՝ զոր տայ Աստուած՝ մարդկան (Ն. Լամբ.
՚ի Մեկն. Առակ. գլ. ին):

174

Հռովմ. Ե. 16: Ղ. 23: Տիտ. ղ. 7:

— Կամեցօղ բարեաց, Տէր կամարար, մի՛ թողուր
զիս ՚ի կամս անձին իմց գնալ, այլ առաջնորդեա ինձ
լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց (Ն. Ճնորհ.
ԺԱՂՈՔ.):

— Օօրացո՛ զմեզ Տէր ՚ի պահպանութիւն պատ-
ուիրանաց քոց (՚ի Ժամագիրս):

— Շնորհեա մեզ երկիւղիւ ՚ի պաշտօն քո կան-
խել հանապազ, սիրել զքեզ ՚ի բոլոր սրտէ (անդ):

175

Ի՞աշխի շնորհ Հոգւոյն սրբոյ քահանայիւք, մլրտու-
թեամբ և ձեռնադրութեամբ, և մարմնոյ և արեան
Տեառն բաշխելով, և այլ քահանայագործութեամբ
առ հաւատացեալս (Ն. Ճնորհ. ՚ի Մեկն. Բարձր.):

— Տես և ՚ի համարն 118. 134. 138. 141. 144.
146. 150. 154. 169:

176

Ա. Կորն. Ժը. 4—11: Եփես. ղ. 4. 12:

— Շնչ (Հոգին սուրբ) ուր կամի, որքան ախոր-
ժէ, յորժամ և որքան... որպէս և կամի՝ բաժանէ
զշնորհս (՚ի Ճարակ.):

Յովհ. Ե. 21. 25. 27 — 29. Մարկ. Ժ. 25.
Ղուկ. Ի. 35. Գործ. իդ. 15. իղ. 8. Ա. Թեսաղ.
Ղ. 15. Եսայ. իղ. 19.

— Անախալելի գեղ կենաց, որ և մեռելոց՝ բնաւին
եղծելոց առնես սքանչելիս։ Ամենաստեղծ աներկ-
բայելի, որ զհուրբ կիպեալն, և զհողմով հոսեալն, և
զժանեօք գաղանաց ծախեալն, 'ի քթթել ական նո-
վին հիւթականութեամբ անպակաս յարուցանես (Գ.՝
Նարեկ. ԺԱՂՈՂ. Բան ղ.):

— Ի յարութեանն յական թօթափել տարերք
մարմնոյն ժողովին հրամանաւն Աստուծոյ առնուլ ըդ-
բանական հոգին՝ ոչ զայլոց, այլ զիւրն (Կ. Շնորհ.
'ի Մեկն. Բարձր.):

Տես և յլնդարձ. Հրահանդն յէջ 340.

Ամատթ. Ժ. 43. Ղուկ. Ի. 36. Փիլիպ. Ղ. 21.
Կողոս. Ղ. 4. Ա. Կորն. Ժ. 42. Յայտն. իա. 4.
Իմաստ. Ղ. 7.

— Աւետեօք Տեառն՝ մեռեալք յառնեն, և սուրբք
ամենայն անձառ փառօք զարդարին ('ի Շարակ.):

— Ի ձայն փողոյ նորոգին հոգիք ննջեցելոցն, և
յառնեն 'ի մեռելոց անապական մարմնով (անդ):

— Ի նշն բնութիւն դարձեալ խառնին
Այս արուեստաւոր քցոյ բանին.

ՈՇ ՚ի յայժմուս լուծանելին,

Ա. Տ. ՚ի յանեղծն որ ՚ի Գրախտին (Ա. Շնորհ.
Յնդքերգ. գիրք Գ.):

179

Մատթ. ԺՂ. 27: իԵ. 31—33: իՂ. 64: Յովհ.
Ե. 22: Գործ. ԺԷ. 31: Հռովմ. Ի. 16: ԺԴ. 10:

— Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր դատել
զկենդանիս և զմեռեալս (՚ի Հանգ.):

— Ու եթէ Հայր (ասէ) դատի զոք, այլ զդատաս-
տանս զամենայն ետ ՅՈրդի իւր. և ոչ եթէ ինքն զին-
քըն ինչ օտար առնէ (Հայր) ՚ի դատաստանէն, այլ
յակնարկել անդ իւրում՝ ՚ի ձեռն Որդւց դատի: Արդ
յակնարկել Հօր Որդի դատի: Դարձեալ՝ ոչ այլ է
ակնարկել Հօր, և այլ ակնարկել Որդւց, այլ մի և
նցն է (Կիւրեղ Երուս. ՚ի Կոչ. Ընծ. գլ. ԺԵ):

— Ամբարձեալ գեր՝ ՚ի վերոյ ամենայն երկնի,
նստաւ Ճոխութեամբ յաթոռն իւրական սկզբնաժա-
ռանգ Հօրն Հաւասարութեան... անկորուստ առե-
ցելովն. և աննուազ սեպհականօքն. որով և եկեսցէ
՚ի դատաստան Հատուցման, քննել զծածկեալսն կըշ-
ռութեամբ չափոյ արդար իւրաւանց (Գ. Նարեկ. ՅԱ-
Ղօթ. Բան լ՛Ւ):

— Յորժամ փառօք Հօր եկեսցէ
Նովին մարմնովն որ ՚ի կուսէ (Ա. Շն. ՚ի Բանն Հաւ.):

180

Վարձ, Ճ. 42: Բ. Տիմոթ. դ. 1: Ա. Պետ. դ.
Յ: Յայտն. ժա. 18:

— Քրիստոս է Որդի Աստուծոյ... դատիչ կենդա-
նեաց և մեռելոց (Գ. Լուս. յԱզաթ.):

181

Մատթ. ԺՂ. 27: Յովհ. Է. 30: Բ. Կորն. Է. 10:
Հռովմ. ը. 6: Յայտն. Է. 13: իբ. 12:

— Օքնութիւն մարդկան յարուցանէ,
Եւ ըստ գործոյ հաստուցանէ:
Զարացն ըզչար վրձիու տացէ.
Յաւիտենից հրովըն տանջէ.
Խակ որ բարիքն են՝ պըսակէ,
Մաճառ փառօք փառաւորէ (Կ. Շնորհ. 'ի բան
հաւատ.):

182

Մատթ. իԷ. 34. 41. 46: Բ. Տիմոթ. դ. 8: Ա.
Կորն. թ. 25: Յակ. ա. 12: Ա. Պետ. Է. 4: Յայտն.
ը. 10: Բ. Պետ. ը. 9: դ. 7: Յովհ. 15: Բ. Թե-
սաղ. ա. 5—7:

— Եշմիցեն արդարքն 'ի կեանսն յաւիտենից, և
մեղաւորքն 'ի տանջանսն յաւիտենից: Երկաքանչիւ-
րոցն Աստուածային բանն յայտ առնէ. Եկայք, ասէ,
օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք դարբայութիւնն
Աստուծոյ. և Երմայք յինէն, անիծեալք, 'ի հուրն

յաւիտենից, զոր պատրաստեալ է սատանայի և հրեշ-
տակաց նորա (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ թ):

183

Յովհ. ժԷ. 24: Ա. Յովհ. դ. 2:

— Զիք ինչ բարձրագոյն փառս և մեծագոյն երա-
նութիւն կամել ումէք, քան թէ զնա իւրական փա-
ռօքն լի բովանդակ տեսանել. քանզի պյն է արքայու-
թիւն, պյն է վերին քաղաքին և առագաստին հան-
գիստ. պյն իսկ է անճառ բարիքն և անպատում խըն-
դութիւնն և երանութիւնն (Ս. Ընորհ. 'ի Մեկն. Ա.
Յովհ. Ճառ ե):

184

Յովհ. ժդ. 3: Ա. Թեսաղ. դ. 16: Եբր. ժթ. 22:

Մատթ. ը. 11:

— Ամենափրկին տայր աւետիս աշակերտացն, թէ
Ուր եսն իցեմ՝ և դուք անդ իցէք, և յամենայն ժամ
զիմ զփառսն տեսանիցէք (Գ. Լուս. յԱգաթ.):

185

Մատթ. է. 23: ը. 12: Մարկ. թ. 47: Ղոկ.
ժդ. 27: Հռովհ. թ. 9: Եսայ. կղ. 24: Եբր. ժ. 27:
Յայտն. թ. 12—15:

— Այն է ահազին և անտանելի տանջանկ՝ քան
զտանջանս գեհենին և քան զայլ ամենայն դառնա-
գոյն տեսակս տանջանաց, յերանելի տեսութենէն

Քրիստոսի զըկիլ և յերեսացն նորա անկանիլ (Ս.
Շնորհ. 'ի Մեկն. Ա. Յովհ., Ճառ Ե)

186

Հոռվմ. ը. 23—25. Յովհ. Ե. 24. Ժ. 27. 28:
Մատթ. Ժա. 29. Իշ. 46. Ա. Յովհ. ը. 25:

— Յանձառ երանութիսն վայելեցուցանէ զառա-
քինացեալսն հոգւով (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ ա)

— Յորում (այսինքն՝ 'ի հարուստ առաջարկ) երանու-
թինքն լնուն, աղքատաց մեծանալ, և սգաւորաց
միսիթարիլ, և հեզոց զվերին երկիրն ժառանգել, և
հալածելոց և որ տարան նախատանաց վասն անուան
նորա (Քրիստոսի)՝ մեծաց հասանել վարձուց, յոր-
ժամ զուարձանալով գնան 'ի տունն իւրեանց յաւի-
տենական (Խնատ. 'ի Մեկն. Ղուկ. Գլ. Իշ)

187

Եղբ. ա. 1. 2:

— Նոգիքն որ ելանեն 'ի մարմնոյ աստի, երթան 'ի
կեանսն ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան. և
անդ հրձուին առաքինեացն ոգիքն ըստ խոստացեալ
աւետեաց երանութեանցն, որ կայ պահի յուսացե-
լոց սրբոցն անձառք՝ որ 'ի կամս Աստուծոյ վարեցան
յաշխարհի ըստ աւետարանին քարոզութեան: Երա-
նին 'ի Տեառնէ աղքատք հոգւով. որ վասն աւետեաց
մեծութեանն հոգւով աղքատացան վասն արքայու-
թեանն երկնից՝ որ 'ի Տէր Յիսուս Քրիստոս: Երանին

և խոնարհք սրտիւք, զի գտանեն հանգիստ յերկրէ
յերկինս, որ անբաւ բարձրութիւն է, զոր խոնարհք
ընդունին 'ի Քրիստոս Յիսուս։ Երանին և հեղք, որք
ժառանգորդք են երկրին կենդանեաց, յորմէ փախու-
ցեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք ան-
ձառ յուսով 'ի Քրիստոս Յիսուս։ Երանին և սգա-
ւորք, որ յաղագս սիրոյն Աստուծոյ, որ 'ի խոնարհու-
թենէ սրտին հեղու զարտասուաց աղբիւրս զշնորհա-
լիցն իմաստութեամբ, որ միսիթարութիւն ունին 'ի
Քրիստոս Յիսուս։ Երանին և սուրբք սրտիւք, որք ա-
զատեալ և սրբեալ են յաղտեղի ցանկութեանց. զի
նոքա զԱստուած տեսցեն։ Երանին և խաղաղարաբք,
զի նոքա նմանողք են Որդւոյն Աստուծոյ՝ որ արար
Խաղաղութիւն յերկինս և յերկրի Կաւ ամենայն
Երանութեամբք զուարձանան և զուարթանան հոգիք
արդարոցն 'ի հանգստեանն 'ի Քրիստոս մինչև 'ի հա-
սարակաց յարութիւնն, յորժամ գայցէ Տէրն մեր փա-
ռօք Հօր, և մեռեալք 'ի Քրիստոս՝ յարիցեն առանց
ապականութեան (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ ԺԵ)։

Բ. Օրին. Ղ. Յ. Սաղմ. ԺԷ. 2. Խա. 2. 3.
Մատթ. իթ. 37. Ա. Յովհ. դ. 19.
— Եթէ նա (Առաստեղ) այսպիսի սիրով սիրեաց ըզ-
մեզ, և մեք նովին չափով և կամօք պարտիմք սիրել
զնա, ոչ 'ի հարկէ և ոչ 'ի բռնադատութենէ, ոչ եր-

կիւղի վասն՝ և ոչ աշառելով՝ և ոչ ակնկալութեամբ
վարձուց, այլ ՚ի սիրոյ և ՚ի յօժարութենէ կամաց,
իբրու զՀայր պատուել, և իբրև Տեառն ծառայել...
Եթէ բնութեամբ բարոյն եմք ցանկացօղք՝ մարդիկ,
զի՞նչ մեծագոյն բարի քան զԱստուած, և կամ ո՞ր գե-
ղեցկութիւն առաւելեալ՝ քան զմեծ վայելչութիւնն
Աստուծոյ, որ գեր ՚ի վերոյ ամբարձաւ քան զերկինս
և քան զամենայն արարածական բնութիւնն: Զնանի-
րեսցուք, նման ցանկասցուք. զամենայն ինչ վասն նորա
փոխանակեսցուք, զի՞նչ և զսիրելիս, նաև զմարմինս
մեր, և եթէ հնար է՝ և զՀոգիս ևս: . . . Այսպիսի սէր
սիրեսցուք. այսպիսի յօժարութիւն կամաց ստաս-
ցուք. և զամենայն հնարս հնարեսցուք՝ զի սիրոյն Աս-
տուծոյ հասանել կարասցուք (Ս. Շնորհ. ՚ի Մեկն.
Ա. Պետ. Ճառ ը.՝ ՚ի յորդոր.):

Յովհ. Ժդ. 15. 21. 23: Ա. Յովհ. ը. Ծ. Ե. 2. 3:
— Երդիւնք սիրոյն Ա. յ՝ որ յանդիման զնա կացու-
ցանեն, պատուիրանք նորա են: Եթէ զպատուիրանս
նորա գործովք կատարեմք, յայտ յանդիման զսէրն նո-
րա ցուցանեմք (Ս. Շնորհ. ՚ի Մեկն. Ա. Յովհ. Ճառ է.):

Աաղմ. զԼ. 10: Եսայ. ա. 17: Ամովհ. Ե. 14:
Հռովհմ. է. 7. 12:

— Յոշնչէ ՚ի լինելութիւն էած (Աստուած) զամե-

նայն. և զշանդամանս բարեպաշտութեան ռւսոց
Գրովք սրբովքք, զի կարասցեն (մարդիկ) խոյս տալ՝ ի
չարէն և առնելզբարին (Գ. Լուս. ՚ի Յաճախ. Ճառ թ):

191

Հռովմ. թ. 14. 15:

— Առ կայենաւ տատանումն եղև ամբաստան թա-
գուցեալ ամբարշտութեանն. իսկ այլում մարդկան
խեղճ մտաց տուաւ փոխանակ տատանմանն. Մեծ
մարգարէ է խեղճ մտացն, յանդիմանէ և թագչի:
Քնական է ոսոխս այս. զի և վկայ է ընդդէմ անի-
րաւութեանն. և զարդարն յորժամ ոք ածէ ՚ի վե-
րայ զվճիռն՝ հաստատէ և անվորէպ ցուցանէ (Եփրեմ:
՚ի Ճառն՝ որ ՚ի վերայ Ենովքայ և Եղիայի):

— Յարափակեցեր (Տէր) բնաւորական գիտութիւն-
զիսեղճ մտաց (՚ի մարդում)՝ զի մի՛ աշխատիցիս զգաղտ
յանցուածս դատելով. զի թէպէտե թագուցանել ոք
կամիցի, խեղճ մտացն ակամայ խոստովանել տացէ:
Դատաւորն լոէ, և խեղճ մտացն խոստովանի... մեղք
թագչին, և խեղճ մտացն յայտնէ զնա (Նոյն. անդ):

192

Եսայ. ծառ. 7:

— Բան ընդունոյ զիմաստութիւնն ասէ, զորոյ զսերմն
ընկալաք յԱստուծոյ արարչութեամբ. և բուսաւ նա
շառաւիլ ՚ի բնութեանս զեղեցիկ և վայելու (Ս.
Ճնորհ. ՚ի Մեկն. Յակ. Ճառ թ):

— Բնական ընտրողութեան ամենայն ոք բաւական առեղծաւ յԱստուծոյ (Ն. Լամբ.՝ ՚ի Մեկն. Առակ. Պլ. ժ):

— Աշերկումն է գիտութիւնն և ճանաչութիւնն (բարւոյ և շարի), որ ազգէ իւրաքանչիւր ումեք ՚ի մէնջ. զի ամենայն մարդիկ ունին զայս՝ յայտնի է (Եփրեմ. ՚ի ճառն որ ՚ի վերայ Ենովքայ և Եղիսյի):

— Ո՞նդ մարդկան սերմնարկեաց և տնկեաց (Աստուած) զայսչափ զազդմունս (Խղճի մոտաց) (Նշն. անդ):

— Եշւ պյս (Սիրբանար Բանան Օքնան կամ Օքնար Բարոյան) սերմաննեալ լի՛ են ՚ի սիրտս մարդկան ՚ի սկզբանէ յաւիտենից, և սոքօք առաւելան Հարքն արդարոք (Նշն. ՚ի Մեկն. Ել. զլ. Ե):

193

Յակ. առ. 21: Ա. Թեսաղ. Ե. 21. 22:

Տե՛ս և ՚ի համարն 192.

194

Զիք ազգ՝ որոյ ոչ իցեն իրաւունք ՚ի դատաւորաց: Եւ այս ամենայն կարգք իշխանութեան աշխարհի կարգեալ են ՚ի Տեառնէ ըստ նախախնամութեանն որ առ ազգս մարդկան (Գ. Լուս. ՚ի Յաճախ. Ճառ. ը):

— Երկրաւոր իմաստութիւնս ոչ սակաւ նպաստ եղև բնութեանս ՚ի բարեկարգութեան սակս. զի և քաղաքական օրէնք և դատաստանաց իրք, և չափք և կշիռք և տուրեառիկ վաճառաց վրութիւնամունք, և սո-

ցին նմանք, նովաւ վճարեցան (Ա. Շնորհ. 'ի Մեկն Յակ. 'ի Յորդոր. թ):

— Եշմէ հեթանոսք տեսեալ էին յանիրաւութենէ աջողումն, ոչ էին բնութեամբ զօրինացն գործեալ. բայց քննեցին զի ըստ անհաս Նախախնամութեանն տեսչութեան՝ օրինապահն բարերջանկանայր, և անօրէնն ստրկանայր, վամն պյոր և սիրեցին զօրէնս և գտին, և զքաղաքս և զգաւառս նովաւ բարեկարգեցին (Ա. Լամբ. 'ի Մեկն. Առակ. գլ. ժթ):

— Այսպիսի վկայութեամբ մոաց և առանց ուսման գտաւ 'ի մէջ նոցա Քաղաքական օրէնք, իշխանութեան կարգ, բարւոյ գովութիւն և չարի պատուհաս (Նոյն. 'ի Խորհրդած. Հաւատոյ):

195

Ա. Պետ. թ. 13. 14. Հռովմ. ժդ. 1. 2. օ: Երբ. ժդ. 17: Տիտ. դ. 1:

— Կայսեր Հնազանդ կացէք յիրս՝ որ ոչ է գայթակղութիւն հովոյ (Խնատ. Աստուածազդ. 'ի Թաղթ. առ Անտիոքացիս. գլ. դ):

— Երդ՝ զի Աստուծոյ սպասաւոր կոչի (Թագաւորն), որպէս յԱստուծոյ՝ նոյնպէս և 'ի նորին սպասաւորէն պարտ է երկնչել, և փութալ պահել զնոցին Հնազանդութիւնն, յայտ է թէ՝ օրինաց նոցին կատարմամբ (Ա. Լամբ. 'ի Մեկն. Առակ. գլ. ին):

— Քամենայն իրս՝ յորս արժան է և պատշաճ, և

ոչ վնասէ զՀանդէս հաւատոցն մերոց, հնազանդել
պարտիմք թագաւորացն՝ և 'ի նոցանէ կարգեալ իշխա-
նացն, և հարկս ևս նոցա հարկանել. . . և պատուել
զնոսա, և աղօթս ևս առնել վասն կենաց նոցա և մե-
րոյ շինութեան և խաղաղութեան (Ա. Շնորհ. 'ի
Մեկն. Ա. Պետ. Ճառ. Ե):

— Իւր իսկ Քրիստոսի հրամանք է հնազանդ լինել
թագաւորաց՝ իրրեւ Աստուծոյ. և որ հնազանդի, իւր
համարի Աստուած, և որ անհնազանդ գտանի, և զայն
ևս իւր համարի (Գ. Կարեկ. 'ի Մեկն. Երգ. 'ի վեր-
ջաբ.):

196

Առակ. ը. 15:

Տես և 'ի համարն 192:

197

Խմաստ. ղ. 4. օ: Հռովմ. ժղ. 4:

— Ի ձեռն ճշմարիտ սուրբ Գրոց խրատուց՝ իրա-
ւանց և իշխանութեան հնազանդել (պարտ է) յա-
զագագարեալութեանն: Զի վասն այսորիկ ետ զՄար-
գարէս և զԱռաքեալսն և զՀայրապետոսն վարդապետոս
և ուսուցիչս, զի տեղեակ և հմուտ և հասու առնիցեն
բարի կամացն Աստուծոյ զմեզ (Գ. Լուս. 'ի Յաճախ.
Ճառ. Ե):

— Օ աւետարանին գործակիցսն զքահանայսն սբս
և զպատուականս եկեղեցւոյ, որ սրբութեանցն են

սպասաւոր հրեշտակային կարգաւորութեամբ, ոչ
վարկարագի համարեսցուք. այլ որպէս յԱստուծոյ
կարգեալ 'ի փրկութիւն հաւատացեալ ժողովրդոց
Աստուծոյ: Զի զԱռաջնորդս եկեղեցւոյ 'ի տեղի Առա-
քելոցն կարգեաց քարոզս, և ասաց եթէ Որ զձեզ
ընդունի, զիս ընդունի. և որ զձեզ անարգէ, զիս
անարգէ (Նշն. անդ. Ճառ ի):

198

Երեմ. լա. 31—33: Եբր. լ. 8—10: Գաղատ. դ.
22—24:

— Հաւատամբ և 'ի սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի
կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս և 'ի Մարգարէս և
յԱւետարանս ('ի Հանգ.):

— Դադարեսցուք 'ի դատարկ և 'ի վայրապար
քննութիւնէ, և զհետ երթիցուք խրատուց Գրոց սըր-
բոց, Հնոյն և Նորոյս (Գ. Լուս. 'ի Յաճախ. Ճառ լ):

— Հոգին սուրբ մեծ իմն սքանչելի և անքնին զօ-
րութիւն է... Սա է՝ որ 'ի Մարգարէսն և յԱռա-
քեալսն և 'ի Նոր Կտակարանս խօսեցաւ... Մի է
Աստուած Հայր, որ Հին և Նոր Կտակարանացն տէր
է. և մի է տէր Յիսուս Քրիստոս, որ 'ի Հնումն անդ
Մարգարէիւքն եցոյց, և Նորովս եկն, և մի է Հոգի
սուրբ, որ 'ի ձեռն Մարգարէից խօսեցաւ վասն Քրիս-
տոսի և վկայեաց... Արդ մի ոք իշխեսցէ մեկնել զշին
Կտակարանն 'ի Նորոց Կտակարանաց անտի. մի ոք

իշխեսցէ ասել, թէ այլ է Հոգին սուրբ, որ անդ է, և
այլ է, որ աստ է (ԿիւրեղԵրուս. ՚ի Կոչ. Ընծ. զԼ. ԺՂ.):

199

Նոգւյ շնորհացն Աստուածութեանն արժանի ե-
ղեն (Մարգարէք) ուսուցանել ամենեցուն զօրէնս Աս-
տուծոյ, և զկամն և զկարզս նորուն ուղղութեան երկ-
նաւոր հրամանացն՝ ամենայն ուրեք առաջի դնելով.
որպէս նոցուն իսկ մատեանք մարգարէութեանն հա-
ստեաւ պատմեն (Գ. Լուս. ՃԱԳԱԹ.):

— Կոչեցան կտակարանք Հինք (գուցէ՝ ճպակ) յանուն
ծառայի (իմա՝ Մուկիս), որպէս և կոչեցան զիրքն պյլք
յանուն մարգարէիցն որ մարգարէացան զնոսա (Եփ-
րեմ. ՚ի Մեկն. Բ. Կորն. զԼ. Շ.):

200

Կողոս. ա. 23. Հռովմ. Շ. 18.

Տես և ՚ի համարն 198:

201

Գաղատ. Շ. 21—31. Հռովմ. զ. 14.

Տես և ՚ի համարն 203. 204.

202

Երր. Շ. 1. Կողոս. ի. 16. 17. Մատթ. ե. 17.

— Յայնժտում (այսինքն՝ Ինչ ՚ի Քընուս) նշմարանք
էին (Արարողական Օրէնք). և ոչ մարմինք, և խոր-
հուրդք (ոհոր, օրինավոր, աշխատավոր) էին. և ոչ լըումն ճըշ-
մարիտ (Եփրեմ. ՚ի Մեկն. Ղետ. զԼ. Շ.):

— Ընդ արեանցն օրինակին անբան գառանցն զենմանց՝ պարզեցեր մեզ՝ Գառն Աստուծոյ՝ զարիւնդքո փրկական (՚ի Շարակ):

— Կատարէ զզատիկն ըստ օրինացն, զի զշինն ՚ի նորս, և զսուերն ՚ի լցո ճշմարտութեան փոխեացէ (ն. Շնորհ. ՚ի Թղթ. առ Ալեքս):

— Յետ ճաշակելց ստուերական գառինն՝ ապա օրհնեաց զշացն և ետ նոցա (աշխրուց) յուտել, առ ՚ի ցուցանել՝ թէ այն օրինակ էր, և այս՝ ճշմարտութիւն, և արժան էր նախ զօրինակն կատարել, և ապա կալ ՚ի ճշմարտութեան . . . ։ Նաև՝ յորժամ ուտէին ըզգառն, ոչ ասաց թէ Ա՛յս է մարմին իմ, զի օրինակ էր. այլ յորժամ բազմեցաւ՝ առ զշացն, զի ճշմարտութիւն էր, օրհնեաց՝ և արար իւր մարմին, և երեկ և ետ նոցա: Եւ այսպէս ՚ի տեղի գառինն հնոյ մարմնոյ և արեան՝ որ սկսաւ յեգիպտոս, կարգեաց և հաստատեաց զիսորհուրդ մարմնոյ իւրոյ և արեանն, և եցցց և ստուգեաց՝ եթէ ինքն էր ճշմարիտ քահանայապետըն, որում երդմամբ խոստացաւ Աստուած Հայր բերանովն Պաւթի, և ոչ զղացաւ, թէ Գու ես քահանայ յաւիտեան ըստ կարգի Մելքիսեդեկի (Բարսեղ Ճռն. ՚ի Մեկն. Մարկ. գլ. լի):

Տես և յլնդարձ. Հրահանգն. յէջ 362—365):

— () ըէնքն (Մովսիսական) զմեղ առ Աւետարանն հայեցուցանէին. նմին իրի իբրև սա երեեցաւ, նա՝ որ զմարդիկ ոչ կարաց ազատել, տեղի ետ և 'ի բաց գնաց (Ա. Շնորհ. 'ի Մեկն. Յակ. Ճառ. ղ) :

— Գաղատացիք աշակերտեցան 'ի Պաւղոսէ, ոչ 'ի պահել զպահպանութիւնս օրինացն՝ որ խափանեցան 'ի ձեռն շարչարանաց խաչին, այլ հաւատալ յերրորդութիւն անդր, և 'ի քարոզել զնոր աւետարանն (Եփրեմ. 'ի Մեկն. Գաղատ.) :

— Ծաւուր յորում Հոգին ել 'ի տաճարէ անտի 'ի ժամանակի իբրև հերձ նա զվարագոյրն, ելնն ընդ նմա և պաշտամունք խորհրդոցն՝ որք ժողովեալ էին 'ի միում տաճարին վասն օգտութեան փոքր ժողովրդեան (Հքեն), և բաշխեցաւ ընդ ամենայն երկիր՝ լցեալ զնա փառօք և դիտութեամբ Տեառն. որպէս զի արասցէ փոխանակ միում տաճարին՝ տաճարս բազումն (Ա. Լամբ. 'ի Մեկն. Ամբակ. ղլ. լ) :

204

Մատթ. Ե. 1—12·21·22·28·33—37·43—45:

— Ո՞չ ըստ առաջին (Մովսիսական) օրինացն էք դատելոց, այն՝ որ սակս մեղացն ծայրակտուր զմարմինն հրամայէր առնել. զի ըստ որում պարզեքն նորա մարմնականք էին, նոյնգունակ և պատիժքն նորա մարմնականք: Խսկ Աւետարանին պարզեքն երկնաւորք էին և Աստուածայինք. և որք ընկալաքս՝ տիրապէս

վայելեցաք, և զերկնաւոր առաքինութեանցն բուռն հարաք. և եթէ ոչ զայն առնիցեմք՝ որ մեղ հրամայեցաւն, և ոչ զայն խօսիցիմք՝ որով վարդապետեցաքն, ազատութեան (Աւետարանական) օրինօքն եմք դատելոց (Ա. Շնորհ. 'ի Մեկն. Յակ. Ճառ Ղ):

205

‘Ա’ (Տեր Հեր Յիշուր Քրիստոս) արար զմեղ ’ի մարմնոյ հոգևորա... և եմք (մեք) այժմ խորհրդովս այսուիկ երկնաւորք. որք և յետ պյար ’ի զգուշութեան եմք՝ նորին աւետարանաւն դաստիարակեալք. քանզի խրատեաց զմեղ զգուշանալ՝ ոչ միայն ’ի սպանութեանէ, այլ և ’ի բարկութենէ. ոչ (միայն) ’ի պոռնկութենէ, այլ յարատ հայելց. ոչ (միայն) յերդմանէ, այլ և ’ի դատարկաբանելց. և յամենայն երկրաւոր ախտից զգուշացուցեալ բարձրացցց զմեղ (Ա. Լամբ. ’ի Մեկն. Առակ. զլ. ը):

— ‘Ե’ որ ասէ. Մի սպանաներ, մի շնար, և այլ ևս, յառաջ քան զօրէնս պահեալ լինէին. և յօրէնս քարոզեցաւ, բայց ’ի ձեռն Աւետարանին կատարեցաւ (Եփրեմ. ’ի Համարարբ. զլ. ԺՂ):

206

Առվահսադիր Օրէնքն թէպէտև Աստուածատուքք էին, սակայն չէին կատարեալք, վասն զի երկրաւորք էին և մարմնականք, ’ի ձեռս մանկանց խաղալիկ տուեալ. նմին իրի և Պաւղոս կղկղանս անուաննէ զնաւ-

Խակ կատարեալ ասէ զօրէնս Աւետարանին՝ որ Քրիստոսիւ և ոչ Մովսիսիւ տուաւ. այն որ ազատութեան օրէնք են և արդարութեան և որդեգրութեան. զի Երկնաւորք են և 'ի յերկինս զմեզ հայեցուցանեն (Ա. Ընորհ. 'ի Մեկն. Յակ. Ճառ Ե):

207

Տե՛ 'ի Համարն 209:

208

Հռովմ. Ե. 19:

Տե՛ս և 'ի Համարն 210. 211:

209

ՅՕՆՆԴ. բ. 16. 17. դ. 6. 7. 17.

— Ի ձեռաց Աղամայ ել ապականութիւն վասն ուտելց ՚ի փայտէն գիտութեան զպտուղն, և ապականեցան մարդկան ոգիք մեղացն ախտիւք, և մարմինք ցաւալից վտանգիւք ՚ի հող դառնալ և յերկիր ապականիլ վիճակեցաւ (Խոսրով. 'ի Մեկն. Ճամ.):

Տե՛ս և 'ի Համարն 210:

210

Յայսմ ժամու ապստամբութեան մերս (յԱստուծոյ) եղլ. սկիզբն. և զպտուղ փայտին ճաշակել նախամեծար քան զԱստուածականն Համարեցաք, մոլար խրատուն խարեալք: Վասն որս մերկացաք ՚ի փառացն, և մահու գատապարտեցաք. և զանիծիցն ընկալեալ զկեանս, և ընդ մեղաց թաղաւորութեամբ

անկեալ եղեաք . . . : Թողում ասել որ յայսցանէ ազ-
գի մարդկան ախտք զանազանք ըստ հոգւոյ և ըստ
մարմնոյ, և օտարութիւն յԱստուծոյ, և պատուհաք
բազմօրինակք . և որք յայսցանէ թշնամութիւնք և
ախտալից կեանք և մահ գժնդակք . և որ ՚ի հանդեր-
ձեալմն համբարեալ կան անհնարին և անհանդուր-
ժելի և անսպառ տանջանք (Խոսրով. ՚ի Մեկն. Ժամ.):
Տես և յԲնդարձ. Հրահանդե. յէջ 385):

211

Հռովդ. Ե. 14. 18:

— Որդին Աստուծոյ էառ զկերպարանս Ադամայ ՚ի
նմանութիւն ծառայի . . . զի ծառայական մարմնովն
զամենայն արդարութիւնն կատարեսցէ . . . Զի որ-
պէս ընդ միոյ Ադամական մարմնոյն պարտաւորեցան
(մարդիկ), ընդ միոյ Տէրունական մարմնոյն ազատես-
ցին ՚ի ծառայութենէ մեղացն (Գ. Լուս. յագաթ.):

— Հայրենասուր աւանդութիւնս՝ թուի ինձ, ե-
թէ զառաջին մարդոյն անհնազանդութիւնն ասէ և
զպատուիրանազանցութիւնն . որով մեղք յաշխարհս
մտին, և ՚ի մեղաց անտի մահ: Եւ այնպէս յամնայն
մարդիկ տարածեցաւ մահ, և եղեւ նոցա իբրև ՚ի Հօ-
րէ աւանդեալ ժառանգութիւն (Ս. Շնորհ. ՚ի Մեկն.
Ա. Պետ. Ճառ դ):

212

Հռովդ. Ե. 12:

— Աւելոքն ապականեալ (Ագամ)՝ զապականութեան սերմն ազգէ յազգ ծննդոց իւրոց սերմանեաց (Խոսրով. ՚ի Մեկն. Ժաման.):

Տես և ՚ի Համարն 211. 213:

213

“Ա, ախ յաւազանէն է թողութիւն հաւատացելոց յամենասուրբ Երրորդութիւնն ճշմարիտ խոստովանութեամբ (Գ. Լուս. ՚ի Յաճախ. Ճառ ԺՇ):

— Այսօր տրտմական և զիշերային լուծան երկունք ծննդեան Կախամօրն. քանզի զծնեալն մարմնով ՚ի մաչ և յապականութիւն. վերստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի (՚ի Շարակ.):

— Օ, ո՞ր օրինակ Երեւելի ջուրն (մլրտութեան) զերեւելի մարմինս լուանայ և յարդարէ, նմանապէս և անտեսանելի Հոգին զներքին զտիրական մարդն, այսինքն՝ զշողին և զմիտոն հրաշագործէ՝ սրբէ և յարդարէ և մաքրէ յալուց մեղացն (Ս. Շնորհ. ՚ի Մեկն. Ա. Պետ. Ճառ ը):

— Օ, ո՞ր օրինակ ՚ի չարչարանսն Քրիստոսի՝ նախ մաչ և թաղումն, և ապա յարութիւնն. նոյնգունակ և ՚ի մլրտութեանն՝ նախ մաչ և թաղումն, և ապա յարութիւնն. մաչ՝ մեղացն, և թաղումն՝ հնոյն Ագամայ, իսկ յարութիւնն՝ տիրական մարդցն և Աստուածաստեղծ պատկերին (Նոյն. անդ):

Տես և ՚ի Համարն 134:

214

Ա. Յովհ. Է. 16: Թոռ. Ժը. 22: Ղուկ. Ժը. 48:
 — Որ ակամայ կամ 'ի հարկէ կամ 'ի բռնադա-
 տութենէ կամ 'ի յափշտակութենէ մտաց մեղս գոր-
 ծիցէ, և ապա իսկոյն զղջանայ և կամ ապաշաւէ,
 այնպիսին թէպէտև մեղանչէ, այլ ոչ առ 'ի մահ.
 վասն զի գոյ 'ի նմա շունչ կենդանութեան: Իսկ որ
 զնոյն մեղս ինքնիշխան յօժարութեամբ և կամակար
 մտօք և խորհրդեամբ գործեն, և ապա անկեալ 'ի
 խորս չարեացն՝ արհամարհեն, իբրութէ ոչինչ չարիս
 գործելով յԱստուծոյ ոչ երկնչին՝ և 'ի մարդկանէ ոչ
 ամաչեն, այնպիսեաց մեղքն առ 'ի մահ են (Ս. Հնորհ.
 'ի Մեկն. Ա. Յովհ. Ճառ թ):

215

Ժող. Է. 21: Առակ. Ի. 9: Ա. Յովհ. ա. 8. 10:
 — Եխոք անհնարինք և հեշտացուցիչք զմեզ վայ-
 րաբարշ առնեն. և պատրօն գող, և մարմինս՝ օգնա-
 կան, և զգայութիւնս՝ խեթիչ, և հեշտութիւնն
 ձգիչ, և կարիքն 'ի ձեռին, և անմտութիւնն՝ մերձ,
 և ծուլութիւնն՝ խաւարեցուցիչ: Յորոց յայսցանէ տի-
 րապէս զերծանել ումեք անհնար է: Զի որ գամ մի
 մարմին զգեցեալ է, և զգարշապարս իւր յերկիր հաս-
 տատեալ, յայսցանէ սուրբ և անարատ զերծանել ոչ
 կարէ (Ս. Հնորհ. 'ի Մեկն. Ա. Պետ. Ճառ դ. 'ի յորդ.):



— Անմեղ լինել ումէք ՚ի մարդկանէ՝ անկար է (Ա.
Լամբ. ՚ի Մեկն. Սաղմ. Ճ):

216

Խմաստ. Շ. 21:

217

Երբ. Ղ. 16:

218

Սաղմ. ՃՃ. 18. 19: ի՛լ. 2. 9: իսա. 3. 6: դի՛ժ.
4: Եսայ. Ճզ. 7: Մատթ. իսա. 13:

219

Մատթ. ղ. 6: ժղ. 23: Մարկ. առ. 35: Պուկ.
ե. 16: ղ. 12: ժ՛լ. 1: իսա. 36: Եփես. ղ. 17. 18:
Ա. Տիմոֆ. ը. 8: Սաղմ. Ճշկ. 2: Եսայ. իզ. 9: Իս.
մաստ. ժզ. 28:


— Եթէ ՚ի բաղանիսն իցես՝ և յաղօթս կայցես,
տաճար Աստուծոյ ես. մի խնդրեր տեղի. միայն զմիտուն
ուղիղ խնդրէ Աստուծած (Յ. Ոսկեր. Ճառ. ՚ի կինն
Քանանացի):

— Յամենայն ժամ մերձ է (Աստուծած). եթէ կա-
միս կարդալ առ նա (Յ. Ոսկեր. անդ):

ԺԴ.	՚Ի ԴՐԱՆ	ՀՐԵԿԱՑԻՒՆ.	Ա-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-
12.	7.	ԳԸՀԱՃ.	.
16.	1.	ՀԵՀՍԵԿԱՒԻ մանալ.	.
34.	9.	ԽՈՍԱՎԱՆԷՐ	.
—	13.	ԱՍՈՍԱՎԱՃԱՋԻՆ	.
47.	10.	ՄԱՎԱՍՐԵՆ	.

Արտագույշ է 195 դր.

10 P.



3998

«Ազգային գրադարան



NL0030712

3874